«Հաստատում եմ»

Ռեկտոր _____

«15»__Մարտի__ 2017 թ.

Կ.Տ.

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

(Ուսումնական հաստատության անվանումը)

_____Երևան, Իսահակյան 36 _____

(Հաստատության հասցեն)

Երևան 2017

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

Անուն, Ազգանուն	Պաշտոնը հաստատությունում	Պատասխանատվությունը խմբում
Մկրտիչ Այվազյան	Ուսումնագիտական գծով պրոռեկտոր	Խմբի ղեկավար Տվյալների քննարկում և ինքնավերլուծության զեկույցի կազմում
Նունե Մինասյան	Որակի ապահովման կենտրոնի տնօրեն	Տվյալների քննարկում և ինքնավերլուծության զեկույցի կազմում
Եկատերինա Կաշինա	Ուսումնական վարչության պետ	Տվյալների քննարկում և ինքնավերլուծության զեկույցի կազմում
Ռուզաննա Մինասյան	Ուսումնամեթոդական բաժնի վարիչ	Տվյալների քննարկում և ինքնավերլուծության զեկույցի կազմում
Ելենա Բայտալյան	Ուսումնամեթոդական բաժնի մասնագետ	Տվյալների քննարկում և ինքնավերլուծության զեկույցի կազմում
Մարիամ Հովհաննիսյան	Որակի ապահովման կենտրոնի մասնագետ	Տվյալների քննարկում և ինքնավերլուծության զեկույցի կազմում
Լուսինե Շախազիզյան	Ուսումնական գործընթացի հաշվառման բաժնի մասնագետ	Տվյալների քննարկում և ինքնավերլուծության զեկույցի կազմում
Ելենա Այդինյան	Ասպիրանտ	Տվյալների քննարկում և ինքնավերլուծության զեկույցի կազմում
Ավետիք Ավետիսյան	Դիզայնի և կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան	Տվյալների հավաքագրում
Էդիկ Վարդանյան	Կերպարվեստի ֆակուլտետի դեկան	Տվյալների հավաքագրում
Հայկ Փայասլյան	Համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման ամբիոնի վարիչ	Տվյալների հավաքագրում
Ստեփան Գյուլխասյան	Դիզայնի ամբիոնի վարիչ	Տվյալների հավաքագրում
Նորանուշ Կարապետյան	Մարդկային ռեսուրսների և ընդհանուր բաժնի վարիչ	Տվյալների հավաքագրում
Մերի Պատվականյան	Արտաքին կապերի բաժնի վարիչ	Տվյալների հավաքագրում
Հասմիկ Մակվեցյան	Ուսումնական գործընթացի հաշվառման բաժնի վարիչ	Տվյալների հավաքագրում
Սվետա Արզումանյան	Դոցենտ	Տվյալների հավաքագրում
Անահիտ Օհանյան	Գիտական քարտուղար	Տվյալների հավաքագրում
Նազենի Ղարիբյան	Հետազոտական կենտրոնի տնօրեն	Տվյալների հավաքագրում
Էդվարդ Ավետիսյան	Ուսանողական խորհրդի նախագահ	Տվյալների հավաքագրում
Անհրաժեշտության դեպքում տողեր ավելացնել		

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ 4
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 5
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 7
I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 7
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 14
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 33
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 47
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 73
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 84
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 96
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 105
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 110
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 119
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ 129

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,
- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Չափանիշներ՝ հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ՝ ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1-2 էջի սահմաններում անհրաժեշտ է անդրադառնալ հաստատության գործունեության նշանակալից փուլերին՝ կապված նրա կազմակերպաիրավական ձևի, կարգավիճակի (այդ թվում՝հավատարմագրված), առաքելության կամ հիմնական նպատակների փոփոխության հետ, ինչպես նաև ուսումնական հաստատության կարծիքով հիշատակման արժանի ձեռքբերումների և իրադարձությունների մասին:

Երևանի գեղարվեստի պետական ինստիտուտը հիմնադրվել է 1945 թվականին և հիմնադրման պահին ունեցել է երկու մասնագիտություններ՝ գեղանկարչություն և քանդակագործություն, որոնցով ուսումնառում էին 22 ուսանող: 1953 թվականին միավորվում են Թատերական և Գեղարվեստի ինստիտուտները և ստեղծվում է Գեղարվեստա-թատերական ինստիտուտը, որը 1994 թվականին կրկին բաժանվում է 2 առանձին բուհերի, իսկ 2000 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ բուհը վերանվանվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա (ԵԳՊԱ):

Այսօր, Երևանի գեղարվեստի պետական ակադեմայում, ինչպես նաև Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերում, սովորում է շուրջ 900 ուսանող: ԵԳՊԱ-ն կրթական ծառայություններ է առաջարկում կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտների 17 մասնագիտության կրթական ծրագրերով, բարձրագույն կրթության բոլոր երեք մակարդակներում (8 բակալավրի, 8 մագիստրոսի և 1 հետազոտողի կրթական ծրագրեր): ԵԳՊԱ-ում դասավանդում են հանրապետության արվեստի առաջատար գործիչները, ովքեր ունեն նաև միջազգային ճանաչում՝ արվեստի և մշակույթի վաստակավոր գործիչներ, ժողովրդական և վաստակավոր նկարիչներ, միջազգային մրցույթների հաղթողներ, պետական մրցանակների դափնեկիրներ՝ 3 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 37 պրոֆեսոր, 25 դոցենտ, 35 ավագ դասախոս, 36 դասախոս:

Վերջին տարիներին ԵԳՊԱ-ն ակտիվ գործողություններ է ծավալում իր գործունեության բոլոր ոլորտների բարելավման ուղղությամբ: Հիմնվելով արդի միջազգային փորձի վրա՝ վերանայվում են կառավարման համակարգը, իրականացվող կրթական ծրագրերը, հետազոտությունների իրականացումը և փոխկապակցումը ուսումնառության հետ, արտաքին կապերի ընդլայնումը և շարժունության խթանումը, հասարակությանը մատուցվող ծառայությունների զարգացումը, որակի ապահովման համակարգի կատարելագործումը և այլն: Այս գործողությունները միտված են բուհի միջազգայնացմանը և որպես արդյունք ԵԳՊԱ-ի միջազգային ճանաչմանը: Այս կարևորագույն խնդիրների լուծման նպատակով ԵԳՊԱ-ում ստեղծվել է կրթության ոլորտի արդի միտումներին և խնդիրներին քաջատեղյակ երիտասարդ մասնագետներից կազմված աշխատանքային խումբ, որն ապահովում է ոչ միայն անհրաժեշտ աշխատանքների իրականացումը և գործընթացների փաստաթղթավորումը, այլ նաև լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ է հայթայթում բարեփոխումների, եվրոպական հայտնի մասնագետների կողմից ԵԳՊԱ-ի անձնակազմի վերապատրաստման և նյութատեխնիկական բազայի բարելավման համար:

Իրականացվող գործընթացների արդյունավետության մասին են վկայում նաև 2014 թվականից ՀՀ-ում ներդրված բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի ամենամյա գնահատումների արդյունքները: Վարկանիշավորումը իրականացվում է ըստ բուհերի գործունեության հետևյալ ուղղությունների՝ ուսանողներ, ուսումնառության արդյունքներ,

միջազգային ուղղվածություն, գիտահետազոտական աշխատանք, դասավանդման գործընթաց, հաստատության կարողություններ, աշխատանքային շուկա, հանրային կապեր:

ՀՀ բոլոր պետական և մասնավոր բուհերը բաժանվում են 6 խմբերի: Դրանք են՝

1. Երեք կրթական աստիճաններում և երեք ու ավել մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
2. Երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
3. Բակալավրական ու մագիստրոսական և երեք ու ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
4. Բակալավրական և մագիստրոսական և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
5. Միայն բակալավրական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
6. Արվեստի բուհեր

ԵԳՊԱ-ն, հանդիսանալով ՀՀ կերպարվեստի ոլորտի բուհ, ընդգրկվել է 6-րդ վարկանիշային խմբում և վարկանիշավորման արդյունքներով արդեն երրորդ տարին անընդմեջ զբաղեցնում է 1-ին տեղը:

2016 թվականից սկսած կատարվում է նաև բուհերի ընդհանուր վարկանիշավորում, որտեղ միասնական չափանիշերով գնահատվում են բոլոր պետական և մասնավոր բուհերը՝ անկախ դրանցում իրականացվող կրթական աստիճանների և մասնագիտական ոլորտների թվից: Ընդհանուր վարկանիշում, որտեղ մասնակցել են ՀՀ-ում բարձրագույն կրթություն իրականացնող 55 հաստատություններ ԵԳՊԱ-ն զբաղեցրել է 13-րդ տողը: Հաշվի առնելով ակադեմիայի փոքր չափերը (տարածքը, ֆինանսավորումը պետական բյուջեից, ուսանողների թվաքանակը, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի թիվաքանակը զգալի ազդում են արդյունքների վրա)՝ շատ բարձր արդյունք է:

Նշված արդյունքները վկայում են վերջին տարիների գործունեության բարձր որակի և կրթության ոլորտում կատարված բարեփոխումների արդյունավետության մասին: Վարկանիշավորման չափանիշերին և արդյունքներին կարելի է ծանոթանալ Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի պաշտոնական կայքէջերում՝ http://ranking.armedu.am/ և http://rank.armedu.am/:

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

ԵԳՊԱ-ն հավակնում է լինել կրթագիտական միջավայր և մշակութային կենտրոն, որտեղ իրականացվում է ուսումնառության և հետազոտության փոխկապակցված գործընթաց՝ ապահովելով շահակիցների պահանջների հիման վրա ձևավորված բուհի առաքելության իրականացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:	
Հիմքեր	Հավելված 1. ԵԳՊԱ-ի կանոնադրություն Հավելված 2. ԵԳՊԱ-ի Ռազմավարական ծրագիր 2012-2016թթ. Հավելված 3. ԵԳՊԱ-ի Ռազմավարական ծրագիր 2017-2021թթ. Հավելված 4. ԵԳՊԱ-ի մասնագիտությունների ցանկ Հավելված 5. ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ Հավելված 6. Մասնագիտության կրթական ծրագրերի և ՀՀ ՈԱՇ-ի միջև համադրելիության ապահովման ուղեցույց
Վերլուծել և հիմնավորել, թե որքանով է հաստատության ռազմավարական ծրագիրը համապատասխանում ՄՈՒՀ-ի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան (ԵԳՊԱ) կրթական, գիտական և մշակութային պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացմանը: ԵԳՊԱ-ն պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: ԵԳՊԱ-ի գործունեության հիմքում ընկած են ԵԳՊԱ-ի կանոնադրությունը,	

առաքելությունը և ռազմավարական ծրագիրը (ՌԾ):

ԵԳՊԱ-ի կանոնադրությունը ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված փաստաթուղթ է, որով սահմանվում են ԵԳՊԱ-ի խնդիրներն ու իրավունքները, կառավարման համակարգը, կառուցվածքը, ուսումնական և գիտական գործընթացի կազմակերպումը, աշխատողների ու սովորողների պարտականությունները և իրավունքները, գույքի ու ֆինանսատնտեսական գործունեության կառավարման մոտեցումները (Հավելված 1):

Իր գործունեության երկարաժամկետ պլանավորումը իրականացնելու նպատակով ԵԳՊԱ-ն կազմում է հնգամյա ռազմավարական ծրագիր (Հավելված 2 և Հավելված 3): Ռազմավարական ծրագրում սահմանվում է ԵԳՊԱ-ի նշված ժամանակաշրջանի առաքելությունը, նպատակները և խնդիրները, որոնց հիման վրա կազմվում է դրանց իրականացման ժամանակացույցը:

2012-2016թթ. ԵԳՊԱ առաքելությունն է.

- Կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտների համար բարձր որակավորման մասնագետների պատրաստումը
- Ստեղծագործական և գիտական բնույթի հետազոտական կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը
- Հասարակության համախմբմանն ու գեղագիտական ճաշակի բարձրացմանն ուղղված ծառայությունների իրականացումը:

Բացի առաքելությունից, համապատասխան ռազմավարական նպատակներից և խնդիրներից ԵԳՊԱ 2012-2016թթ. ՌԾ-ում սահմանված են՝ գործողությունների պլանը, գործողությունների պատասխանատուները, կատարման ժամկետները, գնահատման միջոցներն և վերահսկման գործիքներն ու հաջողության գրավականը: Սակայն 2012-2016թթ. ՌԾ-ն չի պարունակում կատարողականի առանցքային ցուցիչներ, ինչը դժվարեցրել է ԵԳՊԱ 2012-2016թթ. ՌԾ-ի գնահատումը: Գիտակցելով խնդիրը ԵԳՊԱ-ի նախաձեռնությամբ Վ.Բրյուսովի անված պետական լեզվահասարակագիտական համալսարանի հետ համատեղ քայլեր ձեռնարկվեցին դիմելու «Դասավանդման և ուսումնառության արդյունավետության գործիքեր. Տեխնիկական աջակցության առաքելություն» ERASMUS+ here ծրագրին և նշված բուհերի անձնակազմը ռազմավարական պլանավորման ու ուսումնառության վերջնարդյունքների ձևակերպման ուղղությամբ վերապատրաստելու նպատակով Երևան հրավիրել հանրահայտ միջազգային փորձագետներ՝ Լուսիեն Բոլաերտին և Դեկլան Քեննեդիին (Lucien Bollaet, Declan Kennedy): Վերապատրաստումը տեղի ունեցավ 2016 թվականի հունիսի 16-ին և 17-ին, որին մասնակցեց ԵԳՊԱ-ի 21 աշխատակից:

Հաշվի առնելով ռազմավարական պլանավորման արդի միջազգային մոտեցումները և տենդենցները, ինչպես նաև նախորդ ՌԾ-ի թերությունները՝ ԵԳՊԱ նոր 2017-2021թթ. ՌԾ-ում սահմանավել են բուհի տեսլականը, առաքելությունը, արժեքները, ռազմավարական ուղղությունները, նպատակները և խնդիրները, խնդիրների իրականացման մոտեցումները և յուրաքանչյուր նպատակի կատարողականի ցուցիչները, ինչպես նաև խնդիրների իրականացման համար նախատեսված գործողությունները, դրանց հնարավոր խոչընդոտները, պատասխանատուները, կատարման ժամկետները և հաջողության ցուցիչները: Նոր ռազմավարական ծրագրում օգտագործված մոտեցումները հնարավորություն կտան հստակ գնահատել բուհի ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման մակարդակը ու

ցույց կտան, թե որքանով է բուհը հասել իր առաքելությանը:

2017-2021թթ. ԵԳՊԱ առաքելությունն է.

- Տրամադրել բարձրագույն կրթություն՝ իրականացնելով բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր արվեստի տեսության, կերպարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի, դիզայնի և ճարտարապետության ոլորտներում՝ ակադեմիական և արդի մոտեցումների կիրառման, ստեղծագործական և կրթական գործընթացները հասարակական կարիքներին համապատասխանեցման միջոցով:
- Նպաստել ազգային մշակույթի և տնտեսության զարգացմանը՝ պատրաստելով ազգային ու միջազգային մակարդակներում մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչպես նաև հարատև կրթությանը պատրաստ քաղաքացիներ:
- Զարգացնել արվեստի հետազոտությունը՝ նպաստելով գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը:
- Ազգային արժեքների ձևավորմամբ նպաստել հասարակության համախմբմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը:

Իր առաքելությանը համապատասխան՝ ԵԳՊԱ-ն տրամադրում է եռաստիճան կրթություն՝ բակալավրի, մագիստրոսի և հետբուհական կրթական ծրագրերով, որոնք համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին (Հավելված 4): ԵԳՊԱ կրթական ծրագրերի վերջնարդյունքների համապատասխանությունը ՀՀ ՈԱՇ-ին ապահովվում է «ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ»-ի և «Մասնագիտության կրթական ծրագրերի և ՀՀ ՈԱՇ-ի միջև համադրելիության ապահովման ուղեցույց»-ի միջոցով, որոնք ներառում են համապատասխանեցման մեթոդաբանությունը, գործիքները և ընթացակարգը (Հավելվածներ 5 և 6):

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Հիմքեր	Հավելված 7. ԵԳՊԱ ռազմավարական ծրագրի նախագծման և մշակման ուղեցույց Հավելված 8. ԵԳՊԱ-ի կողմից տրամադրվող տեղեկատվության արդյունավետության և մատչելիության վերաբերյալ դիմորդների հարցման կանոնակարգ Հավելված 9. ԵԳՊԱ-ում ընդունելության կարգի արդյունավետության վերաբերյալ առաջին կուրսեցիների հարցման կանոնակարգ Հավելված 10. ԵԳՊԱ-ում դասընթացի մեթոդաբանության արդյունավետության վերաբերյալ հարցման կանոնակարգ Հավելված 11. ԵԳՊԱ-ում գնահատման համակարգի արդյունավետության վերաբերյալ դասախոսների և ուսանողների հարցման կանոնակարգ Հավելված 12. ԵԳՊԱ-ի ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության վերաբերյալ հարցման կանոնակարգ Հավելված 13. ԵԳՊԱ-ում հետազոտական գործունեության արդյունավետության վերաբերյալ դասախոսների և ուսանողների

	հարցման կանոնակարգ Հավելված 14. ԵԳՊԱ-ի վարչարարության արդյունավետության վերաբերյալ դասախոսների հարցման կանոնակարգ Հավելված 15. ԵԳՊԱ-ի արտաքին կապերի բաժնի գործունեության գնահատման վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգ Հավելված 16. ԵԳՊԱ-ում օտար լեզվի իմացության վերաբերյալ վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հարցման կանոնակարգ Հավելված 17. ԵԳՊԱ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգ Հավելված 18. ԵԳՊԱ-ի ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ գործատուների հարցման կանոնակարգ

Վերլուծել, թե ինչպես է ՄՈՒՀ-ը վերհանում ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Հիմնավորել մոտեցման արդյունավետությունը*/ կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/*

ՌԾ-ն բուհի գործունեության պլանավորման կարևորագույն փաստաթուղթն է, որը հնարավորություն է ընձեռնում առավել համակարգված ներկայացնել հաստատության հիմնական առաքելությունը, նպատակները և խնդիրները, ինչպես նաև պլանավորել դրանց հասնելու համար անհրաժեշտ գործողությունները, դրանց տրամաբանական հերթականությունը և այլն: Այդ պատճառով 2017-2021թթ. ռազմավարական ծրագիրը մշակելիս բուհը ձգտել է ձևակերպել այնպիսի առաքելություն, որը առավելագույնս արտացոլում է ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Վերոնշյալը ապահովելու նպատակով ուսումնասիրվել է ռազմավարական պլանավորման միջազգային փորձը, որի հիման վրա մշակվել է «ԵԳՊԱ ռազմավարական ծրագրի նախագծման և վերանայման ուղեցույց»-ը: Ուղեցույցում արտացոլվում են ԵԳՊԱ-ում ռազմավարական պլանավորման սկզբունքները, մոտեցումները, ինչպես նաև ընթացակարգը և շահակիցների ներգրավման ձևերը (Հավելված 7):

Բուհի առաքելության և հիմնական շահակիցների կարիքների համապատասխանությունը հիմնականում ապահովվել է ՌԾ-ի մշակման գործընթացում ներքին շահակիցների ներգրավման և ներքին ու արտաքին շահակիցների շրջանում իրականացված հարցումների միջոցով (Հավելվածներ 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18), կազմակերպվել են նաև հանդիպումներ և կլոր-սեղան քննարկումներ:

Բուհի հիմնական շահակիցների կարիքների վերհանման գործընթացում նշանակալի է ՈԱ և Կարիերայի կենտրոնների դերը: Վերջիններս, միմյանց հետ համագործակցելով, կապ են հաստատում ներքին և արտաքին շահակիցների հետ՝ յուրաքանչյուրը իր գործառույթների շրջանակում: Բացի այդ, ներքին շահակիցները իրենց առաջարկները և դիտողությունները կարող են ներկայացնել ԵԳՊԱ վարչական օղակներին, որոնք դրանք հաշվի են առնում գործընթացների հետագա բարելավման ժամանակ: Շարունակաբար իրականացվող հարցումները, քննարկումները հնարավորություն են տալիս ամրապնդել բուհ-շահակից կապը:

Հաշվի առնելով բարձրագույն կրթության համակարգի արդի պահանջները, ԵԳՊԱ-ն առավել մեծ ջանքեր է գործադրում շահակիցների կարիքների վերհանման, նրանց բուհական տարբեր գործընթացներում ներգրավելու գործողությունները առավել համակարգելու և կայուն հիմքերի վրա դնելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:	
Հիմքեր	Հավելված 19. ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ Հավելված 20. Ստորաբաժանումների տարեկան պլանավորման ձևաչափ և օրինակ Հավելված 21. Ստորաբաժանումների եռամսյակային հաշվետվությունների ձևաչափ և օրինակ Հավելված 22. ԵԳՊԱ-ի կողմից իրականացվող հարցումների ժամանակացույց Հավելված 23. ԵԳՊԱ ռեկտորի տարեկան հաշվետվություններ

Ռազմավարական ծրագրի իրականացման և որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Վերլուծել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

ԵԳՊԱ-ի գործունեության արդյունավետ իրականացման համար բուհը հաշվի է առնում բարձրագույն կրթության ոլորտում ներկայիս պահանջները որակի ներքին ապահովման տեսանկյունից, ուստի իր գործընթացներն իրականացնում է ՊԻՍԲ շրջափուլի հիման վրա: ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան պլանավորման և պլանի իրականացման գործընթացները հիմնված են «ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործողությունների պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ»-ի վրա (Հավելված 19):

- **Պլանավորում՝** ստորաբաժանումների գործողությունների տարեկան պլանավորում՝ համաձայն ՌԾ-ի:
- **Իրականացում՝** պլանով նախատեսված գործողությունների փաստացի իրականացում, եռամսյա և տարեկան հաշվետվության ներկայացում:
- **Ստուգում՝** հատուկ հանձնաժողովի կողմից պլանով նախատեսված և իրականացված գործողությունների համեմատություն և արդյունքների ստուգում: Հանձնաժողովի արձագանք յուրաքանչյուր ստորաբաժանմանը:
- **Բարելավում՝** քայլեր հետագա ավելի հստակ պլանավորման և արդյունավետ իրականացման համար:

Ստորաբաժանումների գործողությունների տարեկան պլանավորումը միտված է ԵԳՊԱ-ի ռազմավարական ծրագրի իրականացմանը, բխում է ռազմավարական ծրագրի նպատակներից և խնդիրներից: Ստորաբաժանումների տարեկան պլանները կազմվում են ռազմավարական ծրագրի ժամանակացույցին համապատասխան՝ ըստ սահմանված ձևաչափի (Հավելված 20): Տարեկան պլանների հետ միասին ստորաբաժանումները ներկայացնում են նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ցանկը: Տարեկան պլանները և անհրաժեշտ ռեսուրսները ներկայացվում են օրացուցային տարվա կտրվածքով: Պլանների նախագծերը քննարկվում են ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորների հետ, դիտարկումների հիման վրա վերանայվում և ներկայացվում են վերջնական հաստատմանը: Ստորաբաժանումներն իրենց գործունեությունը կազմակերպում են՝ ըստ տարեկան պլաններում սահմանված ժամանակացույցի: Գործունեության մասին հաշվետվողականությունն

իրականացվում է եռամսյակային և տարեկան հաշվետվությունների միջոցով (Հավելված 21):

Ստորաբաժանումների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է գնահատող հանձնաժողովի կողմից եռամսյակային հաշվետվությունների հիման վրա և ՈԱ կենտրոնի կողմից շահակիցների բավարարվածության վերաբերյալ իրականացվող ուսումնասիրությունների միջոցով (Հավելվածներ 17 և 18): Մոնիտորինգի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ստորաբաժանումներին ներկայացվում է գրավոր կարծիք իրենց գործունեության վերաբերյալ, որը հաշվի է առնվում տվյալ տարվա հետագա գործունեության կամ հաջորդ տարվա տարեկան պլանավորման ժամանակ:

ԵԳՊԱ բոլոր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները ամփոփվում են ռեկտորի ամենամյա զեկույցում, որը կազմվում է՝ ըստ ռազմավարական ծրագրի նպատակների և հրապարակվում է պաշտոնական կայքէջում ԵԳՊԱ-ի գործունեության թափանցիկություն ապահովելու նպատակով (Հավելված 23):

ԵԳՊԱ-ում կիրառվող ՊԻՍԲ շրջափուլի ներդրման մեխանիզմները և գործիքները հնարավորություն են տալիս առավել արդյունավետ ապահովել բուհի առաքելության և նպատակների իրականացումը ու շարունակական բարելավումը:

Վերլուծել Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր

1. *ԵԳՊԱ-ի ներքին և արտաքին շահակիցների կարիքներից բխող առաքելություն:*
2. *Արդի միջազգային միտումներին և մոտեցումներին համապատասխանող ՌԾ:*
3. *Արդյունավետ ռազմավարական պլանավորման և պլանի իրականացման, մշտադիտարկման ու գնահատման գործընթացների փաստաթղթավորում (կարգեր, մեխանիզմներ, գործիքներ):*
4. *ՊԻՍԲ շրջափուլի վրա հիմնված գործունեության իրականացում:*
5. *Միջազգային արդի միտումներին և մոտեցումներին քաջատեղյակ երիտասարդ թիմ*
6. *Իրականացվող ՄԿԾ-երը համապատասխանում են ՀՀ ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ մակարդակներին:*
7. *Առկա են ՄԿԾ-երի, ՀՀ ՈԱՇ-ի և շահակիցների կարիքների միջև համապատասխանությունը ապահովելու մեխանիզմներ և գործիքներ:*

Թույլ կողմեր

1. *ԵԳՊԱ 2012-2016թթ ՌԾ-ն գնահատման առանցքային ցուցիչներ չի պարունակում:*
2. *Առաքելության, նպատակների և խնդիրների սահմանման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը հիմնականում ապահովվում է նրանց շրջանում հարցումների անցկացմամբ: Գործընթացի արդյունավետությունը առավել մեծացնելու համար անհրաժեշտ է էլ ավելի ամրապնդել ու անմիջական դարձնել նրանց հետ կապը հանդիպումների, կլոր-սեղան քննարկումների, ֆոկուս խմբերի կազմակերպման միջոցով:*

Արտաքին հնարավորություններ

1. *Արտաքին ֆինանսավորման լրացուցիչ կոմերցիոն աղբյուրների հայթայթումն սահմանափակվում է ԵԳՊԱ-ի կազմակերպաիրավական կարգավիճակով: ԵԳՊԱ-ն գործընթաց է մեկնարկել իր կազմակերպաիրավական կարգավիճակ ՊՈԱԿ-ից հիմնադրամի փոխելու համար, ինչը հնարավորություն կտա բազմազանեցնել բուհի ֆինանսական աղբյուրները:*
2. *Բարձրագույն կրթության մասին ՀՀ նոր օրենքի ընդունման հեռանկար, ինչը հնարավորություն կտա բարձրացնել բուհի ինքնավարությունը:*

Արտաքին վտանգներ

1. *Արտաքին շահակիցների հետաքրքրվածության ցածր մակարդակ:*
2. *Արտաքին շահակիցների կողմից մասնագիտական պահանջների ոչ հստակ ձևակերպում:*

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ԵԳՊԱ-ն վերոնշյալ թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ պլանավորում է իրականացնել հետևյալ քայլերը և գործընթացները.

1. *ԵԳՊԱ-ի 2022-2026 թվականների Առաքելության, նպատակների և խնդիրների սահմանման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների անմիջական ներգրավվածության ապահովում՝ անմիջական հանդիպումների, կլոր-սեղան քննարկումների, ֆուկուս խմբերի կազմակերպման միջոցով:*

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

ԵԳՊԱ-ն հավակնում է լինել տեսլականի, առաքելության ու նպատակների իրականացմանն ուղված, որակի կառավարման սկզբունքով երկարաժամկետ և կարճաժամկետ շրջափուլերի վրա հիմնված, որոշումների կայացման գործում ներքին շահակիցների ներգրավմամբ կառավարվող հաստատություն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:	
Հիմքեր	Հավելված 24. ԵԳՊԱ-ի կազմակերպական կառուցվածքը Հավելված 25. ԵԳՊԱ-ի որակի կառավարման համակարգը Հավելված 26. ԵԳՊԱ ստորաբաժանումների կանոնակարգերի ձևաչափը Հավելված 27. ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ Հավելված 28. ԵԳՊԱ-ում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի ցուցակ Հավելված 29. ԵԳՊԱ ՊՈԱԿ-ը հիմնադրամի վերակազմավորելու հիմնավորում

Ներկայացնել կազմակերպական կառուցվածքում ներգրավված մարմինների տեղաբաշխման քարտեզը:

ԵԳՊԱ-ի նախկին կառուցվածքի սխեմատիկ պատկերը չէր արտահայտում բուհում գործող մարմինների և ստորաբաժանումների համագործակցային և ենթակայության կապերը՝ խոչընդոտելով տարբեր ստորաբաժանումների համատեղ աշխատանքի կազմակերպմանը և համակարգմանը: Գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ 2013 թվականին բուհի կազմակերպական կառուցվածքը վերանայվեց (Հավելված 24): ԵԳՊԱ-ի նոր կառուցվածքի սխեմատիկ պատկերում առանձնացված են կառավարման օղակը, վարչակազմը, ակադեմիական օղակը՝ բոլոր ստորաբաժանումներով և բաժիններով, ինչպես նաև դրանց հաղորդակցման կապերը և ենթակայությունները:

Վերլուծել կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը/ կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը և որքանո՞վ է այն հասանելի անձնակազմին:

ԵԳՊԱ գործունեության հիմքում են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքը, ԵԳՊԱ-ի կանոնադրությունը և այլ հիմնադիր փաստաթղթեր:

ԵԳՊԱ կառավարման (կամ որակի կառավարման) համակարգը պատկերված է Հավելված 25-ում, որտեղ հստակորեն երևում է բուհում իրականացվող տարբեր գործընթացների կառավարումը և որակի ապահովումը, գործընթացների փոխկապակցվածությունը, գործընթացների գնահատումը, տարբեր գործընթացների պատասխանատու վարչական օղակները ու ներգրավված ներքին շահակիցները և այլն:

ԵԳՊԱ-ի կառավարումն իրականացվում է միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ՝ ԵԳՊԱ-ի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի կողմից: Կառավարման խորհուրդը պատասխանատու է ռազմավարական պլանի հաստատման և դրա կատարման ընթացքի միջնաժամկետ և երկարաժամկետ մշտադիտարկման (հաշվետվությունների ընդունման) համար: Իսկ ռազմավարական ծրագրի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների իրականացման և ընթացիկ կառավարման համար պատասխանատու են գիտական խորհուրդը և ռեկտորը: ԵԳՊԱ կառավարման մարմինների և/կամ ստորաբաժանումների գործառույթները ներկայացվում են ստորև՝

Կառավարման խորհուրդը ԵԳՊԱ կառավարման բարձրագույն մարմինն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ խորհրդի անդամների մասնակի շրջափոխությամբ: Ըստ ԵԳՊԱ կանոնադրության կառավարման խորհրդում ներգրավված են՝ հիմնադրի անունից ՀՀ վարչապետի կողմից առաջադրված պետական պաշտոնյաներ - 25%, գիտության, մշակույթի, տնտեսության տարբեր բնագավառների, գործատուների ներկայացուցիչներ - 25%, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ - 25%, ուսանողներ - 25%: Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն տարեկան մեկ անգամ:

Խորհրդի իրավասությանն են պատկանում.

- Կանոնադրության, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունը հիմնադրի հաստատմանը ներկայացնելը
- Ռեկտորի ընտրությունը
- Ռազմավարական ծրագրի հաստատումը
- Ռեկտորի կողմից ներկայացվող ակադեմիայի գործունեության մասին տարեկան հաշվետվության գնահատումը
- Տարեկան ֆինանսական բյուջեի հաստատումը:

ԵԳՊԱ **գիտական խորհուրդը** ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող և կարգավորող կառավարման մարմին է, որը ձևավորվում է ԵԳՊԱ կանոնադրության համաձայն: Գիտական խորհրդը ստեղծվում է հինգ տարի ժամկետով: Գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները, ակադեմիայի մասնաճյուղերի, ուսումնական և գիտական այլ ստորաբաժանումների ղեկավարները, ուսանողական խորհրդի

ներկայացուցիչները և ֆակուլտետների կողմից ընտրված անդամները: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

Գիտական խորհուրդն իր իրավասությունների սահմաններում.

- Հաստատում է իր գործունեության կանոնակարգը
- Հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում, ռեկտորի ներկայացմամբ, հաստատում է վճարովի հիմունքներով ըստ մասնագիտությունների ընդունելության տեղերը
- Մշակում է դիմորդների ընդունելության կանոնակարգի նախագծեր և ներկայացնում լիազոր մարմնին
- Քննարկում է ակադեմիայի՝ օտարերկրյա պետությունների հետ կապերի ուղղությունները, միջազգային համագործակցության ծրագրերը և ակադեմիայի կողմից կնքվող միջազգային պայմանագրերի նախագծերը
- Ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ակադեմիայի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ,
- Հաստատում է ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների օրինակելի կանոնակարգերն ու ներքին կարգապահական կանոնները
- Քննարկում է ակադեմիայի ուսումնական մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկերը
- Հաստատում է ուսումնական պլաններն ըստ մասնագիտությունների
- Քննարկում է ակադեմիայի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները
- Շնորհում է ակադեմիայի գիտական և պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրում է ակադեմիայի մեդալով, պատվոգրով, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար ներկայացնում է թեկնածություններ
- Հաստատում է ակադեմիայի ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրությունների կարգերը
- Իրականացնում է ակադեմիայի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ, որոնք բխում են կանոնադրությունից:

ԵԳՊԱ-ի ընթացիկ ղեկավարումը իրականացնում է **ռեկտորը**, որն ընտրվում է հինգ տարի ժամկետով:

Ռեկտորի իրավասություններն են.

- ԵԳՊԱ-ի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ղեկավարումը
- Պետական մարմիններում, կազմակերպություններում, հիմնարկներում, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ օտարերկրյա պետություններում ԵԳՊԱ-ն ներկայացնելը
- Ըստ մասնագիտությունների, մասնագետների պատրաստման և գիտահետազոտական աշխատանքների պետական պատվերների կատարումը
- Պայմանագրերի կնքումը, բանկերում հաշիվներ բացելը
- ԵԳՊԱ-ի կառուցվածքի և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունների սահմանումը
- Սահմանված կարգով ընտրված դեկանների, ամբիոնների վարիչների և դասախոսների հետ աշխատանքային պայմանագրերի կնքումը: ԵԳՊԱ-ի

կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին պաշտոնի նշանակումը և պաշտոնից ազատումը, նրանց իրավունքների սահմանումը

- ԵԳՊԱ-ի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի ու ռեկտորատի նիստեր հրավիրումը և դրանց սերտ համագործակցության ապահովումը
- Աշխատողների և սովորողների նկատմամբ սահմանված կարգով կարգապահական ներգործության միջոցների կիրառումը
- ԵԳՊԱ-ի ֆինանսական միջոցների շրջանակներում աշխատողների աշխատավարձերի և հավելավճարի չափերի սահմանումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան աշխատողների և սովորողների պարգևատրման ու ֆինանսական օգնությունների հետ կապված հարցերի լուծումը
- Ուսանողների և ասպիրանտների ընդունելության, կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու և որակավորման աստիճան շնորհելու մասին հրամանների արձակումը
- Պրոռեկտորներին պաշտոնի նշանակումը և պաշտոնից ազատումը և նրանց գործունեության ոլորտների ու պարտականությունների սահմանումը
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

Ռեկտորատը ԵԳՊԱ ռեկտորին կից և նրա նախագահությամբ գործող խորհրդակցական մարմին է, որը կառավարման խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում քննարկում է ակադեմիայի գործունեությանը վերաբերող հարցեր: Ռեկտորատի կազմի մեջ մտնում են պրոռեկտորները, ռեկտորի խորհրդականը, գիտական քարտուղարը, ֆակուլտետների դեկանները, ակադեմիայի ուսումնական և այլ ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ռեկտորի կողմից նշանակված անձիք: Ռեկտորատի որոշումները կենսագործվում են ռեկտորի հրամանով:

ԵԳՊԱ ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորները նշանակվում են ռեկտորի հրամանով, ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ուսումնական վարչությունը իր մեջ ներառում է՝ Ուսումնամեթոդական բաժինը և Ուսումնական գործընթացի հաշվառման բաժինը: Ուսումնական վարչությունն իրականացնում է ԵԳՊԱ-ի կրթական գործընթացի կազմակերպումը/ապահովումը, կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացների համակարգումը, ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման փաստաթղթերի մշակումը, ուսումնական ռեգիստրի աշխատանքների իրականացումը՝ ուսանողների հետ կապված ամբողջ տեղեկատվության հավաքագրումը, մուտքագրումը, պահպանումը և հաշվետվությունների պատրաստումը:

Ուսումնամեթոդական բաժին: Վերջինիս գործառույթներն են՝ ամբիոնների ուսումնական բեռնվածության հաշվարկումը, դասաբաշխումների հաստատումը, դասացուցակների հաստատումը, պրակտիկաների կազմակերպումը, քննաշրջանների գրաֆիկների հաստատումը, ուսումնական պլանների մշակումը և բարելավումը, ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման փաստաթղթերի մշակումը, ուսումնական գործընթացի իրականացման վերահսկումը:

Ուսումնական գործընթացի հաշվառման բաժին: Վերջինիս գործառույթներն են՝ ուսանողների հրամանագրումը, ուսանողների գնահատականների գրանցումն ու պահպանումը, ռոտացիան, ուսանողների տեղափոխությունները, դիպլոմների, համապատասխան տեղեկագրերի և այլ փաստաթղթերի կառավարումը:

ԵԳՊԱ-ում գործում է երկու **ֆակուլտետ**՝ Կերպարվեստի և Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի: Ֆակուլտետը իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում ԵԳՊԱ-ի կողմից ընդունված որոշումներին և ՀՀ օրենսդրությանը: Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից, ուսումնական այլ ստորաբաժանումներից: Ֆակուլտետի գործունեության կազմակերպումը և ղեկավարումն իրականացնում է ֆակուլտետի դեկանը: Դեկանի նախագահությամբ գործում է ֆակուլտետի խորհուրդը:

Ֆակուլտետի խորհուրդը՝

- ԵԳՊԱ-ի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ (լաբորատորիաներ, բաժիններ) և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմավորելու և լուծարելու վերաբերյալ
- լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ գործունեության հետ կապված հարցերը
- ռեկտորին ներկայացնում է ֆակուլտետի ուսումնական պլանները՝ ակադեմիայի գիտական խորհրդում հաստատելու համար
- ընտրում է գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչներին
- ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

Ֆակուլտետի դեկանը՝

- ղեկավարում է ֆակուլտետի կրթական, գիտական, միջազգային և այլ գործունեությունը,
- ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալներին,
- սահմանված կարգով ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ:

Ամբիոնները ԵԳՊԱ-ի ուսումնագիտական գործընթացը կազմակերպող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնք գործում են ԵԳՊԱ-ի կանոնադրության հիման վրա: Ամբիոնների գիտամանկավարժական կազմը բաղկացած է պրոֆեսորներից, դոցենտներից, ավագ դասախոսներից, դասախոսներից: ԵԳՊԱ-ում գործում են Գեղանկարի, Գրաֆիկայի և գծանկարի, Քանդակագործության, Կերպարվեստի տեսության և հումանիտար գիտությունների, Դեկորատիվ կիրառական արվեստի, համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման, Գծանկարի ու գունանկարի միասնական և Դիզայնի ամբիոնները:

Մարդկային ռեսուրսների բաժնի գործառույթները ներառում են անձնակազմի հավաքագրումը և աշխատատեղերի համալրումը, աշխատանքի կատարողականի արդյունավետության և անձնակազմի կատարելագործման համակարգերի կառավարումը, անձնակազմի ծանրաբեռնվածության և նորմաների վերահսկումն ու պահպանումը, նոր աշխատակիցների խորհրդատվության և վերապատրաստումների կազմակերպումը, մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության մշակումն և համապատասխան

գործավարությունը, աշխատակիցների անվտանգության, սոցիալական ապահովության և առողջությանը վերաբերվող հարցերի կարգավորումը, աշխատակիցներին օգնության և կոնսուլտացիաների տրամադրումը, աշխատակիցների նկատմամբ պարգևատրման կամ տույժի քաղաքականության կիրառումը:

Ֆինանսատնտեսական մասն իր մեջ ներառում է երկու ստորաբաժանում՝ հաշվապահություն և տնտեսական մաս: Վերջիններիս աշխատանքները իրականացվում են համապատասխան գծով պրոռեկտորի ղեկավարությամբ: Ֆինանսատնտեսական մասի հիմնական գործառույթներն են՝ ԵԳՊԱ գնումների կառավարումը համաձայն ՀՀ գնումների քաղաքականության, եռամսակային միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմակերպումն ու ներկայացումը, հաշվապահական և վերահսկողական ընթացակարգերի սահմանումն ու իրականացումը, բյուջեի վերլուծությունն ու վերանայումը, եկամուտների, ծախսերի, հաշիվների և այլ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի գործավարությունը, եկամուտների և ծախսերի վերահսկումը, հաշվապահական հաշվառման քաղաքականության ներկայացումը աշխատակիցներին և մյուս շահակիցներին, համագործակցությունը ներքին և արտաքին աուդիտների հետ, աշխատավարձի հաշվարկը, հիմնական միջոցների հաշվառումն ու մաշվածության հաշվարկը, բանկային գործառույթները, այլ ֆինանսատնտեսական հարցերի լուծումը:

Արտաքին կապերի բաժինը տրամադրում է տեղեկատվական ծառայություններ և հանդես է գալիս որպես միջնորդ ԵԳՊԱ-ի և հայաստանյան ու արտասահմանյան հաստատությունների միջև՝ տրամադրում է խորհրդատվություն հանրապետական և միջազգային գիտական ու մասնագիտական իրադարձությունների վերաբերյալ, մշակում է ծրագրեր և աջակցում միջազգային ծրագրերի իրականացմանը և կառավարմանը, աջակցում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերին, հաստատում է կապեր արտասահմանյան հաստատությունների հետ, կարգավորում է արտասահմանյան ուսանողների ուսումը և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքը և կացությունը ՀՀ-ում, համակարգում է արտերկրից եկող ուսանողների վիզաների և այլ հարցերը, մշակում, խորհրդատվություն է տրամադրում ԲՈՒՀ-ի միջազգայնացման քաղաքականության և ռազմավարության վերաբերյալ, կարգավորում է ԵԳՊԱ-ի արտասահմանյան այցելուների հետ նախնական համաձայնությունները և ծրագրերը, հավաքագրում է համապատասխան տեղեկություններ միջազգային դրամաշնորհներ տրամադրող կազմակերպությունների վերաբերյալ և միջազգային համագործակցության հնարավոր ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև տարածում է այդ տեղեկատվությունը ԵԳՊԱ-ի շահակիցների շրջանում:

Կարիերայի կենտրոնը ստեղծվել է «ԵԳՊԱ-աշխատաշուկա» կապի ընդլայնման ու ամրապնդման և ուսանողների, շրջանավարտների, գործատուների մասին տվյալների բազայի կառավարման նպատակով:

Կենտրոնն իրականացնում է աշխատաշուկայի ուսումնասիրություն, ուսանողների աշխատանքի տեղավորման և խորհրդատվական ծառայություններ, քաղաքացիական ծառայողների վերապատրաստում, տվյալների հավաքագրման մեխանիզմների մշակում, տվյալների բազայի ընդլայնում, տվյալների նախնական վերլուծություն, խորհրդատվություն ուսանողների հետագա կարիերայի վերաբերյալ, շրջանավարտների և գործատուների հետ կապի հաստատում, աշխատաշուկայում ԵԳՊԱ-ում իրականացվող ՄԿԾ-երի ներկայացում՝ տարբեր լրատվական միջոցներով: Կենտրոնը նաև շնորհանդեսներ է կազմակերպում ավագ դպրոցներում, ներկայացնում ԵԳՊԱ-ն՝ դիմորդներ ներգրավելու համար:

2014 թ. Նոյեմբերին ՏԵՄՊՈՒՍԻ Veritas ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ում բացվեց **Հետազոտական կենտրոնը**: Կենտրոնի գործունեության նպատակն է կրթական երրորդ աստիճանի՝ ասպիրանտուրայի բարեփոխումների իրականացումն ըստ Զալցբուրգյան սկզբունքների: Կենտրոնը զբաղվում է ԵԳՊԱ-ի գիտահետազոտական ուղղությունների ռազմավարության մշակմամբ, ԵԳՊԱ դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքների կազմակերպմամբ և համակարգմամբ, ԵԳՊԱ-ի գիտական հանդեսի՝ «Տարեգիրք»-ի հրատարակչական աշխատանքներով:

ԵԳՊԱ-ին կից գործում է Ալբեր և Թովե Բոյաջյան **ցուցասրահը**, որը հնարավորություն է ընձեռում արվեստագետ դասախոսներին, սկսնակ արվեստագետներին, ուսանողներին ցուցադրել իրենց ստեղծագործությունները: Ցուցասրահի աշխատակիցները պլանավորում և կազմակերպում են ցուցադրությունները, լուսաբանում են ցուցասրահում կայացած և կայանալիք միջոցառումները ԵԳՊԱ պաշտոնական ինտերնետային կայքում և լրատվական այլ միջոցներով, կազմակերպում քննարկումներ և հանդիպումներ արվեստաբանների և արվեստագետների հետ:

Որակի ապահովման կենտրոնը ԵԳՊԱ-ի կառուցվածքային անկախ ստորաբաժանում է, որը ենթարկվում է ուղղակիորեն ռեկտորին: Կենտրոնի անկախությունը երաշխավորում է ինքնագնահատման անաչառությունը: Կենտրոնի աշխատանքները կարգավորվում են ռեկտորի կողմից հաստատված ՈԱ կենտրոնի կանոնակարգի դրույթներով: Կենտրոնի գործառույթներն են.

- Համակարգել ՈԱ ներքին գործընթացները
- Մեկնաբանել որակի ապահովման արտաքին պահանջները և հասու դարձնել բոլոր շահակիցների և ՈԱ գործընթացներին մասնակցող կազմի համար
- Իրականացնել ամենամյա ինքնագնահատման հաշվետվության պատրաստման ինստիտուցիոնալ և ծրագրային գործընթացները
- Վերապատրաստել անձնակազմը որակի ապահովման մոտեցումների շուրջ
- Բարձրացնել շահակիցների տեղեկացվածությունը ԵԳՊԱ-ում իրականացվող գործընթացների վերաբերյալ:
- Կազմակերպել և լուսաբանել որակի ապահովման արտաքին գործընթացների հետ կապված հարցերը
- Մշակել մշտադիտարկման մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր լինի իրականացնել բարելավում՝ ՊԻՍԲ սկզբունքով
- Նպաստել ԵԳՊԱ-ի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը
- Մշտադիտարկման ենթարկել ամբիոնների կողմից կրթական ծրագրերի վերանայման գործընթացը՝ կրթական ծրագրերը եվրոպական կրթական չափանիշերին համապատասխանեցնելու համար
- Մշակել մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել.
    1. Դասավանդման մեթոդաբանությունը
    2. Ուսանողների գնահատման համակարգը
    3. ԵԳՊԱ-ում առկա ռեսուրսները և տրամադրվող ծառայությունները
    4. Պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի աշխատանքը
    5. Ընդունելության կարգը
    6. Դիմորդների տեղեկացվածությունը
    7. ԵԳՊԱ-ի շրջանավարտներից գործատուների գոհունակության աստիճանը

8. ԵԳՊԱ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության մակարդակը:

ԵԳՊԱ-ում գործում է արվեստի պատմության, մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ հագեցած **գրադարան**: Գրադարանի աշխատակիցներն իրականացնում են պլանավորում և ներկայացնում են գրադարանի գործողությունները և տեղեկատվական ծառայությունները, ապահովում են գրադարանի հավաքածուների և ռեսուրսների հասանելիությունը ուսանողությանը և պրոֆեսորադասախոսական կազմին, կազմակերպում են գրադարանի նյութերի պահպանումը, տրամադրում են խորհրդատվական ծառայություններ գրադարանից օգտվողներին, ապահովում են գրադարանային ռեսուրսների վնասվածքների վերացումը, կատարում են վիճակագրություն, ներկայացնում են պահանջարկ ունեցող գրականության ցանկը: Առաջիկայում նախատեսվում է գրադարանային ռեսուրսների թվայնացում:

ԵԳՊԱ-ում առկա է նաև **պարետային ստորաբաժանում և բուժօգնության կետ:**

ԵԳՊԱ յուրաքանչյուր ստորաբաժանում ունի կանոնակարգ (Հավելված 26), որտեղ հստակ սահմանված են ստորաբաժանման գործառույթները, յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունները: Ստորաբաժանումներն ապահովված են համապատասխան քանակի և որակի մարդկային ռեսուրսներով:

ՌԾ նպատակների և խնդիրների հիման վրա յուրաքանչյուր ստորաբաժանում իրականացնում է տարեկան պլանավորում: Ստորաբաժանումների նյութական ռեսուրսերի ապահովումը կազմակերպվում է տարեկան կտրվածքով կարիքների վերհանման միջոցով, և պահանջվող ռեսուրսների ցանկը կցվում է տարեկան պլանին: Ընթացքում առաջացած կարիքները նույնպես բավարարվում են զեկուցագրերի հիման վրա: Ստորաբաժանումների պլանների համահունչ լինելը ապահովում է ստորաբաժանումների փոխկապակցված գործունեությունը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ տարեկան պլանավորման ընթացքում հաշվի է առնվում նաև ստորաբաժանումների համագործակցությունը այն գործընթացների սահմաններում, որոնք պահանջում են մի քանի ստարաբաժանման համատեղ աշխատանքը:

Կառավարման համակարգի բարելավումը մշտապես գտնվում է ԵԳՊԱ-ի ուշադրության կենտրոնում: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ կառավարման համակարգի կատարելագործման աշխատանքները սահմանված են ԵԳՊԱ-ի 2012-2016թթ. ռազմավարական ծրագրում (Հավելված 2):

Այս նպատակի իրագործումն առավել արդյունավետ դարձնելու համար ԵԳՊԱ-ն 2013 թվականից ձեռնարկել և մինչ օրս համակարգում է ՏԵՄՊՈՒՍ-ի ԳՈՎԵՐՆ «Բոլոնիայի սկզբունքներին համահունչ բարձրագույն կրթության կառավարման համակարգի արդյունավետ բարեփոխումների իրականացում՝ խթանելով բուհերի ինքնավարությունը և հաշվետվողականությունը» (543711-TEMPUS-1-2013-1-AM-TEMPUS-SMGR) դրամաշնորհային ծրագիրը, որը միտված է վերանայելու հաստատությունների կառավարման համակարգը: Այն անդրադառնում է բուհի կառավարման բոլոր օղակներին՝ ընդգրկելով նաև ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարումը: Հաշվի առնելով ծրագրով իրականացվող գործողությունները և ԵԳՊԱ-ի ՌԾ-ում սահմանված գործողությունները՝ ԵԳՊԱ-ն 2014թ. ի վեր մշակել և վերանայել է մի շարք կարգեր, կանոնակարգեր, փաստաթղթեր, ստեղծել մի շարք ձեռնարկներ՝ նպաստելով հաստատության առավել արդյունավետ կառավարմանը (Որակի ապահովման ձեռնարկի վերամշակում, ԵԳՊԱ-ում մասնագիտության կրթական ծրագրերի

մշակման և վերանայման ձեռնարկ, ուսանողի ձեռնարկ և այլն): Վերանայվեցին նաև ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների կանոնակարգերը, որի նպատակով նախ մշակվեց ԵԳՊԱ ստորաբաժանումների կանոնակարգի ձևաչափ (Հավելված 26): Համաձայն ձևաչափի՝ յուրաքանչյուր ստորաբաժանում վերանայեց իր կանոնակարգը, որում հստակ առանձնացվեցին նպատակները, գործառույթները և դրանց իրականացումը պլանավորում – իրականացում – ստուգում - վերանայում սկզբունքով: Նոր կանոնակարգերի մշակումը թույլ տվեց վերանայել ստորաբաժանումների ֆունկցիաները առաքելության արդյունավետ իրականացմանը դրանք ուղղելու տեսակետից:

Սկսած 2013թ.-ից ԵԳՊԱ-ի ստորաբաժանումները կազմում են իրենց տարեկան պլանները, որոնք բխում են ռազմավարական ծրագրի նպատակներից և միտված են դրանց իրականացմանը: Տարեկան պլաններում ներառվում է նաև ստորաբաժանման կողմից պլանավորված աշխատանքների համար անհրաժեշտ նյութական ռեսուրսները: Տարեկան պլանների իրականացումը արտահայտված է եռամսյակային և տարեկան հաշվետվություններում, որոնք թույլ են տալիս գնահատել աշխատանքի արդյունավետությունը: Այս գործելակերպը նպաստում է ԵԳՊԱ-ի առաքելության իրականացման գործընթացի անխափանությանը և իրականացվում է ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգի համաձայն (Հավելված 19): Այս կարգի գործարկումը զգալի մեծացնում է նաև ֆինանսական և նյութական ռեսուրների տարեկան պլանավորման արդյունավետությունը:

Բուհը մշակել է ներքին կարգապահական կանոնակարգ (Հավելված 27), որտեղ ներկայացվում է ԵԳՊԱ-ում աշխատանքային կանոնները, աշխատողների խրախուսման և պատասխանատվության պայմանները, էթիկայի կանոնները, ինչպես նաև կրթական ընդհանուր կաննոներ: Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են բուհի բոլոր աշխատողների և կառուցվածքային ստորաբաժանումների վրա: Կանոնակարգով սահմանվում են նաև ԵԳՊԱ-ի ուսանողների ներքին կարգապահական և ուսուցման ընդհանուր կանոնները:

Բուհի ֆինանսական միջոցները բավարարում են ԵԳՊԱ-ի ուսումնական և այլ գործընթացները իրականացնելու համար, սակայն դրանք թույլ չեն տալիս լիովին ապահովել բուհի լաբորատոր և տեխնիկական հագեցվածության մոդեռնիզացումը: Այս խնդիրը լուծելու նպատակով ԵԳՊԱ-ն վերջին տարիներին քայլեր է ձեռնարկում ֆինանսավորման արտաքին աղբյուրներ հայթայթելու ուղղությամբ: Ֆինանսավորման արտաքին աղբյուրներն են ՏԵՄՊՈՒՍ-ի և ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ-ի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերը, որոնց հաշվին հաջողվեց վերազինել լաբորատորիաները և հագեցնել բուհը անհրաժեշտ տեխնիկայով (Հավելված 28): Արդյունքում 2013թ-ից հիմնովին վերազինվել է 4 լաբորատորիա և պլանավորվում է գրադարանի և այլ ռեսուրսների արդիականացում:

ԵԳՊԱ-ն մեծ հնարավորություններ ունի բուհի կոմերցիալիզացման և դրա հաշվին զգալի լրացուցիչ ֆինանսական ներհոսքի ապահովման համար, սակայն ներկայիս կազմակերպաիրավական ձևը սահմանափակում է այդ հնարավորությունների օգտագործումը: Այդ խնդիրը լուծելու համար ԵԳՊԱ-ն քայլեր է ձեռնարկում իր կազմակերպաիրավական ձևը ՊՈԱԿ-ից հիմնադրամի վերակազմավորելու ուղղությամբ (Հավելված 29):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ԵԳՊԱ-ն ունի կազմակերպական կառուցվածք, որում ընդգրկված բոլոր մարմինները գործում են էթիկայի կանոնների համաձայն՝ ըստ իրենց կանոնակարգերի և գործառույթների: ԵԳՊԱ-ում իրականացվող պլանավորման և հաշվետվողականության սկզբունքները թույլ են տալիս իրականացնել ԵԳՊԱ-ի ՌԾ-ի

նպատակները: Որոշումներ կայացնելու գործընթացը կանոնակարգված է, դրա իրականացման համար ԵԳՊԱ-ն ունի անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ: ԵԳՊԱ-ի բյուջեի տարեկան պլանավորումը թույլ է տալիս իրականացնել ֆինանսների բաշխում և դրանք օգտագործել ըստ կարիքների, իսկ ոչ բավարար ֆինանսական ու նյութական պահանջները ԵԳՊԱ-ն լրացնում է արտաքին ֆինանսավորման աղբյուրների հայթայթման հաշվին:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:	
Հիմքեր	Հավելված 30. ԵԳՊԱ-ի որակի ապահովման ձեռնարկ Հավելված 31. ԵԳՊԱ-ի կողմից տրամադրվող տեղեկատվության արդյունավետության և մատչելիության վերաբերյալ դիմորդների հարցման վերլուծություն Հավելված 32. ԵԳՊԱ-ում ընդունելության կարգի արդյունավետության վերաբերյալ առաջին կուրսեցիների հարցման վերլուծություն Հավելված 33. ԵԳՊԱ-ում դասընթացի մեթոդաբանության արդյունավետության վերաբերյալ հարցման վերլուծություն Հավելված 34. ԵԳՊԱ-ում գնահատման համակարգի արդյունավետության վերաբերյալ դասախոսների և ուսանողների հարցման վերլուծություն Հավելված 35. ԵԳՊԱ-ի ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության վերաբերյալ հարցման վերլուծություն Հավելված 36. ԵԳՊԱ-ի վարչարարության արդյունավետության վերաբերյալ դասախոսների հարցման վերլուծություն Հավելված 37. ԵԳՊԱ-ի արտաքին կապերի բաժնի գործունեության գնահատման վերաբերյալ ուսանողների հարցման վերլուծություն Հավելված 38. Ուսանողական համայնքի կողմից անցկացվող հարցում և վերլուծություն
Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը: ԵԳՊԱ-ի դասախոսները և ուսանողները կրթական գործընթացի հիմնական շահառուներն են, ում ներգրավվածությունը ու ակտիվ մասնակցությունը բուհի գործընթացներում նպաստում և ապահովում է որակի բարելավմանը: Ուստի ԵԳՊԱ-ն միջոցներ է ձեռնարկում որոշում կայացնելու գործընթացներում առավել ակտիվորեն ապահովել դասախոսների և ուսանողների մասնակցությունը՝ հաշվի առնելով նրանց առաջարկությունները և դիտարկումները: ԵԳՊԱ-ի դասախոսների և ուսանողների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում ապահովվում է որոշումներ կայացնող հիմնական կոլեգիալ մարմիններում ուսանողների և դասախոսների ներգրավման, ինչպես նաև կարևորագույն գործընթացներում (ռազմավարական ծրագրի մշակում, ՄԿԾ-ների մշակում և այլն) ուսանողների և դասախոսների ներգրավման միջոցով: Ինչպես արդեն նշվել է, ԵԳՊԱ-ի կառավարման հիմնական մարմիններն են կառավարման խորհուրդը, գիտական խորհուրդը և ռեկտորատը: ԵԳՊԱ-ի կառավարման խորհուրդը 50%-ով կազմված է ուսանողության (25%) և դասախոսական կազմի (25%) ներկայացուցիչներից, ինչը որոշիչ է դարձնում ներքին շահակիցների կարծիքը ռազմավարական	

որոշումների կայացման գործում: ԵԳՊԱ-ի գիտական խորհրդում ներգրավված են ուսանողական խորհրդի 7 ներկայացուցիչ և դասախոսական կազմի 25 ներկայացուցիչ, ինչը ապահովում է ներքին շահակիցների կարիքների ներառումը ԵԳՊԱ-ում իրականացվող գործընթացների քաղաքականություններում և ընթացակարգերում: ԵԳՊԱ-ի ռեկտորատի կազմում ներգրավված են ուսանողական խորհրդի և արհեստակցական միության նախագահները, ինչը ապահովում է դասախոսների ու ուսանողների շահերի պաշտպանումը ԵԳՊԱ-ի ամենօրյա ղեկավարման ընթացքում կայացվող որոշումների սահմաններում:

Ուսանողները և դասախոսները անմիջականորեն ներգրավվում են նաև ԵԳՊԱ-ում իրականացվող կարևորագույն գործընթացներում, ինչպիսիք են՝

- Ռազմավարական ծրագրի մշակումը (Հավելված 7)
- Տարեկան գործունեության մշտադիտարկման, գնահատման և բարելավման գործընթաց
- Մասնագիտության կրթական ծրագրերի մշակումը (Հավելվածներ 5 և 6)
- Որակի ապահովման գործընթացները (Հավելված 30) և այլն:

Որոշումների կայացման գործընթացներում հաշվի են առնվում նաև ներքին շահակիցների շրջանում կատարվող հարցումների արդյունքները (Հավելվածներ 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38): Հարցումները հնարավորություն են տալիս հաշվի առնել ներքին շահակիցների առավել մեծ զանգվածի կարծիքները ԵԳՊԱ-ում իրականացվող հիմնական գործընթացների վերաբերյալ:

ԵԳՊԱ-ի գործընթացներում ուսանողների ներգրավածությունն ապահովելու և նրանց մասնակցությունը որոշում կայացնելու ու բարեփոխումների գործընթացներում առավել արդյունավետ դարձնելու համար ԵԳՊԱ-ն, մասնակցելով դրամաշնորհային ESPAQ ծրագրին, ստեղծել է ուսանողական համայնք, որը ակտիվորեն մասնակցում է բուհի որակի ապահովման գործընթացներին՝ բարձրացնելով ուսանողներին առավել հուզող հարցերը: Մինչ այժմ ուսանողական համայնքի կողմից ստացված արձագանքները տեղ են գտել 2016-2017թթ. Ուսանողի ձեռնարկի վերամշակման ժամանակ: Բացի այդ Ուսանողական համայնքի կողմից առաջարկվել և 2016թ. մայիս-հունիս ամիսներին իրականացվել է հարցում ԵԳՊԱ-ի բոլոր ՄԿԾ-ների 3-4-րդ կուրսի ուսանողների շրջանում պարզելու, թե որքանով են ուսանողները մոտիվացված և ցանկանում ուսումը շարունակել մագիստրատուրայում:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն հաստատված կանոնակարգերի, ինչպես նաև պարբերաբար իրականացվող հարցումների և տարբեր քննարկումների միջոցով փորձում է ներգրավել պրոֆեսորադասախոսական կազմին և ուսումնառողներին որոշումների կայացման գործընթացներում, հաշվի առնել նրանց առաջարկություններն ու դիտողությունները բարելավումներ ու փոփոխությունների կատարելու ընթացքում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր	

Վերլուծել պլանավորման և վերջիններիս իրականացման արդյունավետությունը/կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը:
Առաքելությանը և նպատակներին արդյունավետ հասնելու համար ԵԳՊԱ-ն իրականացնում է երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում, ինչպես նաև պլանավորված գործողությունների մշտադիտարկում ու արդյունքների գնահատում: Առաքելության և նպատակների իրականացմանն ուղղված երկարաժամկետ և միջնաժամկետ գործողությունները ներառվում են ԵԳՊԱ-ի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում (Հավելվածներ 2 և 3), որն ընդգրկում է նպատակների իրականացմանն ուղղված գործողությունները, պատասխանատուները, գնահատման միջոցները և կատարման ժամկետները: Գործողությունների կատարման ժամկետները կախված գործողության բնույթից կարող են փոփոխվել 1-ից 5 տարիների միջակայքում: Կարճաժամկետ գործողությունները ԵԳՊԱ-ում պլանավորվում են բուհի ստորաբաժանումների կողմից և արտահայտվում են ստորաբաժանումների տարեկան պլաններում: Ստորաբաժանումների տարեկան պլանավորման գործընթացը, ինչպես նաև գործունեության իրականացումը, մշտադիտարկումը, գնահատումը ու վերանայումը ԵԳՊԱ-ում կարգավորվում են ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգով (Հավելված 19): Ստորաբաժանումների տարեկան պլանները կազմվում են համաձայն ռազմավարական ծրագրի նպատակների միասնական, ԵԳՊԱ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված ձևաչափով (Հավելված 20): Պլանավորված գործողությունները համաձայնեցվում են նաև ԵԳՊԱ-ի մյուս ստորաբաժանումների հետ: Սույն մեխանիզմը նպաստում է ստորաբաժանումների համահունչ աշխատանքին՝ ապահովելով կապը իրականացվող գործողությունների և նպատակների, ինչպես նաև բուհի առաքելության միջև: Պլանավորված գործողությունների իրականացումը ամփոփվում է եռամսյակային և տարեկան հաշվետվությունների միջոցով միասնական ձևաչափով (Հավելված 21), որը թույլ է տալիս որոշելու, թե որքանով է իրականացվել տվյալ գործողությունը: Կատարված գործողությունների մշտադիտարկումը իրականացվում է հատուկ այդ նպատակով ձևավորվող գնահատող հանձնաժողովի կողմից, որի կազմում ընդգրկվում են վարչական կազմի ներկայացուցիչներ և ուսանող (սովորաբար ասպիրանտ): ԵԳՊԱ-ում գործունեության մշտադիտարկումն իրականացվում է նաև ՈԱ կենտրոնի կողմից շահակիցների բավարարվածության վերաբերյալ իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Մոնիտորինգի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ստորաբաժանումներին ներկայացվում է գրավոր կարծիք իրենց գործունեության վերաբերյալ, որը հաշվի է առնվում տվյալ տարվա հետագա գործունեության կամ հաջորդ տարվա տարեկան պլանավորման ժամանակ: ԵԳՊԱ բոլոր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները ամփոփվում են ռեկտորի ամենամյա զեկույցում, որը կազմվում է ըստ ռազմավարական ծրագրի նպատակների և հրապարակվում է պաշտոնական կայքէջում (Հավելված 23): Պլանավորման և հաշվետվողականության արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացվել է նաև հարցում ստորաբաժանումների աշխատակիցների շրջանում, որի արդյունքներն ամփոփելիս պարզվել է, որ հարցված աշխատողների մեծամասնությունը գտնում է նշված գործընթացները պարզ և արդյունավետ, ինչպես նաև այն, որ տարեկան պլանավորումը և հաշվետվությունների ներկայացումը անհրաժեշտ է գործունեության իրականացման համար: Մասնակիցների մեծամասնությունը գտնում է, որ պլանավորումը

նպաստել է ստորաբաժանման գործունեության արդյունավետությանը՝ դարձնելով այն ավելի համակարգված և թափանցիկ: Ինչ վերաբերվում է պլանների և հաշվետվությունների ձևաչափերին, ապա հարցման մասնակիցների մեծամասնությունը գտնում է դրանք պարզ և հեշտ կիրառելի:

Ամփոփելով վերոնշյալը՝ համոզմամբ կարելի է պնդել, որ ԵԳՊԱ-ն իր առաքելությանը և նպատակներին հասնելու համար իրականացնում է երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ արդյունավետ պլանավորում, գործողությունների մշտադիտարկում, գնահատում և վերանայում, ինչպես նաև ունի և կիրառում է այդ գործընթացների համար անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Հիմքեր	Հավելված 39. ԵԳՊԱ-ի «Համակարգչային գրաֆիկա» (բակալավրի կրթական աստիճան) և «Դիզայն» (մագիստրոսի կրթական աստիճան) ՄԿԾ-ների գանհատման փորձագիտական զեկույց

Նշել վերջին երեք տարիներին հաստատության գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքները և դրանց արտացոլումը ռազմավարական ծրագրում:

ԵԳՊԱ-ի ռազմավարական նպատակներին ուղղված գործողությունների վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը իրականացվում է երկու մակարդակներում՝

- նոր ռազմավարական ծրագրի մշակմանը նախորդող ուսումնասիրություն
- ստորաբաժանումների կողմից առանձին գործընթացների իրականացման վրա ազդող գործոնների ուսումնասիրություններ

Ռազմավարական ծրագրի մշակմանը նախորդող ուսումնասիրությունը իր մեջ ներառում է եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և ՀՀ կրթության ոլորտի արդի պահանջները և միտումները, ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Նշված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս ռազմավարական նպատակները սահմանել այնպես, որ դրանք միտված լինեն ապագայի բարձրակարգ մասնագետների պատրաստմանն ու հասարակությանը մատուցվող որակյալ ծառայությունների ապահովմանը: Այդպիսի ուսումնասիրություններ են իրականացվել և 2012-2016թթ. և 2017-2021թթ. ռազմավարական ծրագրերի մշակումից առաջ: Հաճախ դրանցում օգտագործվել են նաև ԵԳՊԱ-ում իրականացվող տարբեր դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում միջազգային ճանաչված փորձագետների և ՈԱԱԿ-ի մասնագետների կողմից տրվող խորհրդատվությունները (Հավելված 39):

ԵԳՊԱ-ի ամենօրյա գործունեության վրա ազդող գործոնները ուսումնասիրում են այդ գործընթացներն անմիջականորեն իրականացնող ստորաբաժանումները և իրենց լիազորությունների սահմաններում որոշումներ են կայացնում բացասական ազդեցություն ունեցող գործոնների վերացման կամ դրական գործոնների ազդեցության մեծացման ուղղությամբ: Նմանատիպ ուսումնասիրությունների հիմքում հաճախ ընկած է լինում բուհի նախորդ տարիների գործունեության վերաբերյալ տվյալներ, որոնք պահպանվում են ԵԳՊԱ-ի տեղեկատվական տարբեր բազաներում: Այս տեսակետից ԵԳՊԱ-ում կարող են խնդիրներ առաջանալ կապված առկա բազաների ոչ կապակցված լինելու, ինչպես նաև հավաքագրվող տվյալների տիպի արդիականության նվազման հետ: ԵԳՊԱ-ում առկա բազաները

հնարավորություն չեն տալիս բարդ և փոխկապակցված հարցումներ կատարել, ինչը սահմանափակում է ստացվող տվյալների հոսքը:

Որոշումներ կայացնելու համար ճշգրիտ և ժամանակին գրանցվող տվյալներ ստանալու համար ԵԳՊԱ-ն մեկնարկել է բուհի ուսումնական գործընթացների հետ կապված կառավարման էլեկտրոնային ամբողջական համակարգի ներդրման գործընթացը: Կառավարման էլեկտրոնային նոր համակարգը ներառում է ուսումնական գործընթացի վերաբերյալ ամբողջական բազա և գործընթացների կառավարման համակարգ՝ ներառյալ դասացուցակների կազմումը, դասախոսների ծանրաբեռնվածության հաշվարկը, ուսանողների առաջադիմությունը, քննաշրջանների ժամանակացույցը, ուսանողների և դասախոսների վիրտուալ միջավայր, էլեկտրոնային գարադարանային ռեսուրսներ: Այս համակարգի ներդնումը կապահովի ԵԳՊԱ-ի ուսումնական գործընթացների էլ ավելի համակարգված ընթացքը և որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ բոլոր տվյալների հասանելիությունը:

Այսպիսով ԵԳՊԱ-ն իրականացնում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություններ ինչպես ռազմավարական պլանավորման, այնպես էլ ամենօրյա գործունեության ընթացքում՝ հիմնվելով ճշգրիտ տվյալների վրա և իրականացնում է տվյալների ստացման աղբյուրների շարունակական բարելավում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Հիմքեր	Հավելված 40. ԵԳՊԱ որակի կառավարման կրկնակի համակարգ

Վերլուծել որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Նշել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

ԵԳՊԱ-ի գործունեության քաղաքականության և վարչարարության հիմքում ընկած է ԵԳՊԱ-ի որակի կառավարման համակարգը, որը հիմնվծ է Դեմինգի որակի կառավարման կրկնակի շրջափուլի վրա: Այն ներառում է ԵԳՊԱ-ի տեսլականին միտված երկարաժամկետ և առաքելությանը միտված միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման - իրականացման - ստուգման/գնահատման և բարելավման շրջափուլեր (Հավելված 40):

Երկարաժամկետ շրջափուլը ներառում է՝

- հերդական 5 տարիների առաքելության և ռազմավարության մշակումը, դրանց իրականացման համար անհրաժեշտ գործողությունների քարտեզագրումը
- նախատեսված գործողությունների իրականացումը
- իրականացվող գործողությունների տարեկան մշտադիտարկումը և 5 տարիների արդյունքների գնահատումը
- երկարաժամկետ ծրագրի իրականացման ընթացքում դուրս բերված դրույթները և փորձառությունը, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել հաջորդ ռազմավարական ծրագիրը մշակելիս:

Այս շրջափուլի իրականացումը ապահովում է ԵԳՊԱ-ի երկարաժամկետ գործունեության փոխկապվածությունը և ուղղորդվածությունը ստանձնված տեսլականի շարունակական իրականացմանը:

Միջնաժամկետ և կարճաժամկետ շրջափուլը ներառում է՝

- ԵԳՊԱ-ի ռազմավարական ծրագրի նպատակներին և խնդիրներին իրականացման համար անհրաժեշտ գործողությունների տրոհումը ենթագործողությունների և ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորումը:
- պլանավորված գործունեության իրականացումը
- գործունեության եռամսյակային մշտադիտարկումը և տարեկան գործունեության գնահատումը
- տարեկան գործունեության ընթացքում դուրս բերված խնդիրները և փորձառությունը որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ստորաբաժանումների հաջորդ տարվա գործունեության պլանները մշակելիս:

Այս շրջափուլի իրականացումը ապահովում է ԵԳՊԱ-ի միջնաժամկետ և կարճաժամկետ գործունեության փոխկապվածությունը և ուղղորդվածությունը ստանձնված առաքելության շարունակական իրականացմանը:

Այսպիսով ԵԳՊԱ-ի գործունեության քաղաքականությունը և վարչարարությունը իրականացվում է որակի կառավարման կրկնակի շրջափուլով, ինչը ապահովում է ԵԳՊԱ-ի գործունեության փոխկապակցվածությունը, նպատակասլացությունը և հետևաբար արդյունավետությունը ու բարձր որակը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	Հավելված 41. ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների կանոնակարգ՝ արխիվ Հավելված 42. ՄԿԾ-ի արդյունավետության գնահատումը գործատուների կողմից Հավելված 43. ՄԿԾ-ի արդյունավետության գնահատումը շրջանավարտների կողմից Հավելված 44. ԵԳՊԱ-ի մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության կառավարման կենտրոնի տեղեկատվության հավաքագրման ընթացակարգ Հավելված 45. ԵԳՊԱ ուսանողների զբաղվածության վերաբերյալ հարցման վերլուծություն Հավելված 46. ԵԳՊԱ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ հարցման վերլուծություն

Վերլուծել ՄՈՒՀ- ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների առաջընթացի մասին տեղեկությունները հավաքվում են նաև ուսումնական վարչությունում, դեկանատներում և թողարկող ամբիոններում՝ արձանագրությունների տեսքով, հետազոտական աշխատանքների վերաբերյալ նյութերն արձանագրվում են ԵԳՊԱ գիտ. քարտուղարի արձանագրություններում, արվեստագետ դասախոսների և ուսանողների ցուցադրությունների մասին տեղեկություններին տիրապետում են ամբիոններն ու ԵԳՊԱ պատկերասրահի տնօրինությունը: Ուսանողների շարժունության և փոխանակման ծրագրերով արտասահման մեկնած կամ արտասահմանցի ուսանողների մասին տեղեկությունները

կենտրոնացվում են Արտաքին կապերի բաժնում: Նաև տվյալները արխիվացվում և պահպանվում են համաձայն ԵԳՊԱ արխիվի կանոնակարգի (Հավելված 41):

ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծման հնարավորությունները կտրուկ կաճեն ԵԳՊԱ-ի նոր կառավարման էլեկտրոնային ամբողջական համակարգի ներդրման իրականացվող աշխատանքների ավարտից և համակարգի կիրառկումից հետո: Այդ համակարգը ներառում է ուսումնական գործընթացի վերաբերյալ ամբողջական բազա և բարդ հարցումների կատարման հնարավորություն, ինչը զգալի կմեծացնի ամփոփ վերլուծությունների իրականացման համար բոլոր անհրաժեշտ տվյալների տեսակները:

2013թ. ԵԳՊԱ-ում սկսվեց տարբեր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծության գործընթացը, որը մինչ այդ փաստաթղթավորված չէր: Տեղեկատվության հավաքագրումն իրականացվում է մի քանի օղակների միջոցով: 2012թ. ստեղծվեց ԵԳՊԱ-ի որակի ապահովման կենտրոնը, որը իր գործառույթները սահմանելուց հետո սկսեց մշակել և իրականացնել ԵԳՊԱ-ի գործունեության ու կրթական գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և դրանց արդյունավետության գնահատմանը միտված հարցումներ շահակիցների (դիմորդներ, ուսանողներ, դասախոսներ, շրջանավարտներ, գործատուների, վարչակազմ) շրջանում: Այդ հարցումները թույլ են տալիս բացահայտել նրանց կարծիքները ԵԳՊԱ-ի ՄԿԾ-երի, դասընթացների, ռեսուրսների, գնահատման համակարգի և այլ գործընթացների վերաբերյալ: Հարցումները վերլուծվում են և արդյունքում դուրս են բերվում հիմնական խնդիրները ու առաջարկները, որոնց կիրառումը կարող է նպաստել նշված գործընթացների բարելավմանը (Հավելվածներ 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 42, 43): Այնուհետ, դրանց արդյունքները ներկայացվում են ղեկավար օղակներին՝ քննարկման: Հարցումն իրականացվում են՝ համաձայն ԵԳՊԱ որակի ապահովման ձեռնարկի, որը ներառում է իր մեջ հարցումների անցկացման ժամանակացույցը գործիքները, գործիքների նկարագրերը և հարցումների անցկացման կարգերը (Հավելված 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18):

Հարցումները կրում են պարբերական բնույթ, ինչը թույլ է տալիս հետևել շահակիցների կարծիքի դինամիկային և եզրակացություններ անել տեղեկատվության հավաքագրման, մշակման ու կիրառման արդյունավետության վերաբերյալ:

Բացի այդ, 2013թ. ԵԳՊԱ-ում ՏԵՄՊՈՒՍ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծվել և գործում է Կարիերայի կենտրոնը, որի աշխատանքներն այժմ միտված են ԵԳՊԱ-ի շրջանավարտների և գործատուների մասին տեղեկատվության կենտրոնացված հավաքագրման, վերլուծության և կիրառման գործընթացի կազմակերպմանը (Հավելված 44): Հիմնադրումից ի վեր կենտրոնը ստեղծել է շրջանավարտների տվյալների հավաքագրման համակարգ, որտեղ կենտրոնանում են յուրաքանչյուր ուսումնական տարվա շրջանավարտների տվյալները: Նույն համակարգի միջոցով շրջանավարտներին հնարավորություն է ընձեռվում լրացնել հարցաշարեր, որոնք միտված են ստուգելու նրանց բավարարվածությունը ԵԳՊԱ-ի ուսումնական գործընթացի վերաբերյալ: Վերջին երեք տարիների ընթացքում իրականացվել է մոտ 20 հարցում, որոնց վերլուծության արդյունքները ներկայացվում են ռեկտորի ամենամյա զեկույցում: Շրջավարտների տվյալների հիման վրա գեներացնում է ինքնակենսագրությունների, որոնք հասանելի են գործատուներին:

Բացի դա Կարիերայի կենտրոնը շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացնում է հարցումներ, որոնց արդյունքները ներկայացվում են ԵԳՊԱ-ի ղեկավարությանը (Հավելվածներ 45 և 46):

Որոշակի ուսումնասիրություններ է սկսում իրականացնել նաև ԵԳՊԱ-ի նորաստեղծ «ուսանողական համայնք»-ը (Հավելված 38):

Այսպիսով ԵԳՊԱ-ում գործում են ՄԿԾ-ների և այլ հիմնական գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը գնահատող մեխանիզմներ: Սակայն դեռևս կան բացեր, որոնք անհրաժեշտ է շտկել: Դրանցից է այն, որ առկա հարցումները չեն անդրադառնում ԵԳՊԱ-ի գործունեության բոլոր ոլորտներին և անհրաժեշտություն կա հստակեցնել դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	Հավելված 47. ԵԳՊԱ-ի հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականություն և ընթացակարգ Հավելված 48.ԵԳՊԱ-ի ուսանողի ձեռնարկ

Վերլուծել ՄՈՒՀ- ի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ում գործում է հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականություն և ընթացակարգ (Հավելված 47), որով սահմանվում են ՄԿԾ-ների և ԵԳՊԱ-ում իրականացվող այլ հիմնական գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման քաղաքականության որդեգրումը և գործընթացի ապահովման ընդհանրական մոտեցումները:

ԵԳՊԱ-ի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը հրապարակվում է պաշտոնական կայքէջի, ԶԼՄ-ների, ուսանողի ձեռնարկի, ԵԳՊԱ մասին բուկլետների և բրոշյուրների, ինչպես նաև ԵԳՊԱ դասախոսների, ասպիրանտների և ուսանողների գիտական աշխատանքների և դիպլոմային աշխատանքների բաց պաշտպանության միջոցով (Հավելված 48, 110, 111, 112):

ԵԳՊԱ-ում իրականացվող գործողությունների վերաբերյալ ԶԼՄ-ների միջոցով հրապարակման ենթակա տեղեկատվության հավաքագրումը իրականացվում է հետևյալ կերպ՝ ԵԳՊԱ ենթակառուցվածքները Հասարակության հետ կապերի պատասխանատուին տրամադրում են իրենց գործունեությանը վերաբերող տեղեկություն, որը ստուգվում է պատասխանատու մարմնի կողմից և այնուհետև հրապարակվում՝ նախօրոք որոշված տեղեկատվական միջոցով: Այս գործընթացի միջոցով ապահովվում է իրականացվող միջոցառումների մասին թարմ տեղեկատվության տարածումը:

Բացի այդ 2014 թվականից ԵԳՊԱ-ում HEN-GEAR հարթակի միջոցով կատարվում է շրջանավարտների հարցում՝ ստացած կրթության, դասավանդման և ուսումնառության մեթոդների, ավարտելու պահին աշխատանքային զբաղվածության վերաբերյալ, որոնք վերլուծվում են և ամենամյա զեկույցի տեսքով հրապարակվում ԵԳՊԱ-ի կայքէջում (Հավելվածներ 45 և 46): ԵԳՊԱ-ի կայքէջում են տեղադրվում նաև որակի ապահովման և կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող բազմաբնույթ հարցումների վերլուծությունները: Այս գործընթացների միջոցով ապահովվում է ԵԳՊԱ-ի կրթական ծրագրերի վերաբերյալ

օբյեկտիվ և անկողմնակալ տեղեկատվության հրապարակումը:

ԵԳՊԱ-ում գործում են նաև հրապարակվող տեղեկատվության գնահատման որոշ մեխանիզմներ: Շահակիցների շրջանում որոշ գործընթացների վերաբերյալ իրականացվող հարցումներում հարցեր են պարունակվում նաև այդ գործընթացների վերաբերյալ տարածվող տեղեկատվության որակի մասին: օրինակ Բացի դրանից, հերդական ուսանողների ձեռնարկի պատրաստումից առաջ ուսանողների հետ կազմակերպվում են քննարկումներ ձեռնարկում զետեղված տեղեկատվության և այլ ասպեկտների որակի վերաբերյալ:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում գործում են կրթական և այլ գոծընթացների որակի մասին թարմեցված, օբյեկտիվ և անկողմնակալ տեղեկատվության հրապարակայնությունը ապահովող մեխանիզմներ, սակայն հրապարակումների որակը գնահատող մեխանիզմները բուհի գործունեության բոլոր ոլորտները չեն ծացքում:

Վերլուծել Չափանիշ 2-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր

1. *Արդյունավետ կազմակերպական կառուցվածք, որտեղ հստակ տարանջատված են ԵԳՊԱ ստորաբաժանումների միջև հաղորդակցական և ենթակայության կապերը:*
2. *ԵԳՊԱ երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործունեության պլանավորման համակարգված գործընթաց, որն ապահովում է բուհի առաքելության և ռազմավարական նպատակների ու խնդիրների արդյունավետ իրականացումը:*
3. *Հիմնական շահակիցների ներգրավվածության ապահովում որոշումների կայացման գործընթացներում:*
4. *Հաշվետվողականության մեխանիզմների առկայություն, որն ապահովում է բուհում իրականացվող գործընթացների թափանցիկությունը և արդյունավետությունը:*
5. *Որակի կառավարման սկզբունքերի , ինչպես նաև մակրո և միկրո միջավայրերի շարունակական ուսումնասիրության հիման վրա կառավարման արդյունավետ համակարգ:*
6. *Կառավարման համակարգի բարելավման նպատակով անդամակցություն ՏԵՄՊՈՒՍ-ի ԳՈՎԵՐՆ «Բոլոնիայի սկզբունքներին համահունչ բարձրագույն կրթության կառավարման համակարգի արդյունավետ բարեփոխումների իրականացում՝ խթանելով բուհերի ինքնավարությունը և հաշվետվողականությունը» դրամաշնորհային ծրագրին:*

Թույլ կողմեր

1. *ԵԳՊԱ-ում գործող մասնագիտության կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները չեն անդրադառնում բուհի գործունեության բոլոր ոլորտներին:*
2. *Առկա չեն բուհի տարբեր գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը գնահատող մեխանիզմների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ:*
3. *ԵԳՊԱ բոլոր գործընթացների վերաբերյալ հրապարակումների որակը գնահատող մեխանիզմները չեն անդրանդառնում բուհի գործունեության բոլոր ոլորտներին:*

Արտաքին հնարավորություններ

1. *Հաստատության ակադեմիական ազատության և ինքնավարության բարձրացում՝ պայմանավորված բուհի կազմակերպաիրավական ձևի և օրենսդրական դաշտի փոփոխմամբ:*

Արտաքին վտանգներ

1. *Կառավարման համատեքստում էթիկայի նորմերի համահանրապետական և օրենսդրական մակարդակով բացակայություն:*
2. *Մասնագիտական միավորումներում, ինչպես նաև համապատասխան մասնագիտական դաշտում միասնական մոտեցումների բացակայություն:*

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ԵԳՊԱ-ն վերոնշյալ թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ պլանավորում է իրականացնել հետևյալ քայլերը և գործընթացները.

1. *Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում և տեղեկատվության կառավարման համակարգի զարգացում :*
2. *Ստորաբաժանումների համագործակցության բարելավում:*
3. *Մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների զարգացում:*
4. *Ֆինանսական և նյութական ռեսուրսների տնօրինման արդյունավետության բարձրացում: :*
5. *Գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմների տարածում նաև ԵԳՊԱ-ի երկրորդական գործընթացների վրա:*
6. *ԵԳՊԱ-ի տարբեր գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը գնահատող մեխանիզմների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների մշակում:*
7. *ԵԳՊԱ բոլոր գործընթացների վերաբերյալ հրապարակումների որակը գնահատող մեխանիզմների ներդրում:*

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

ԵԳՊԱ-ն հավակնում է իրականացնել բովանդակային հստակ ձևակերպված մասնագիտության կրթական ծրագրեր, որոնք բխում են բուհի առաքելությունից, համադրելի են որակավորումների ազգային շրջանակին, արձագանքում են դասավանդման և ուսումնառության արդի մոտեցումներին և միտված են աշխատաշուկայի պահանջներին՝ ձևավորելով հստակ և չափելի ուսումնառության վերջնարդյունքներ: ԵԳՊԱ-ն հավակնում է նաև իրականացնել ՄԿԾ-եր, որոնք բովանդակային հուսալի են և նպաստում են ուսանողների ու պրոֆեսորադասախոսական կազմի շարժունությանը՝ բարձրացնելով բուհի մրցունակությունն ու հեղինակությունն ազգային և միջազգային մակարդակներում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:	
Հիմքեր	Հավելված 49. Համակարգչային գրաֆիկա ՄԿԾ-ի նկարագիրը Հավելված 50. Դիզայն ՄԿԾ-ի նկարագիրը Հավելված 51 ՄԿԾ-ի ինքնավերլուծություն (Համակարգչային գրաֆիկա բակալավրի և Դիզայն մագիստրոսական կրթական ծրագրերի) Հավելված 52. Հագուստի մոդելավորում ՄԿԾ-ի նկարագիրը Հավելված 53. 4 ՄԿԾ-երի համար համեմատական վերլուծություններ Հավելված 54. ՄԿԾ-երի ՈԱՇ-ի հետ համադրելիության ապահովում և ստուգման ուղենիշներ
Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ և համադրելիությունը պետական կրթական չափորոշիչների և Որակավորումների ազգային շրջանակի հետ: ԵԳՊԱ-ն, հավատարիմ մնալով իր որդեգրած առաքելությանը, իրականացնում է 8 բակալավրի և 8 մագիստրատուրայի (Դիզայն, Համակարգչային գրաֆիկա, Հագուստի մոդելավորում, Կիրառական արվեստ, Գրաֆիկա, Արվեստաբանություն, Գեղանկարչություն և Քանդակագործություն), ինչպես նաև հետբուհական կրթական ծրագիր (Կերպարվեստ,	

դիզայն, դեկորատիվ և կիրառական արվեստ): Բոլոր կրթական ծրագրերը միտված են բուհի առաքելության իրականացմանը, իսկ դրանց վերանայումը և արդի պահանջներին համապատասխանեցման ապահովումը մշտապես ԵԳՊԱ-ի ուշադրության կենտրոնում է և կարևորագույն նպատակներից է: Այս մասին են վկայում բուհի ռազմավարական ծրագրի (2012-2016թթ.) Նպատակ 1-ը և դրանից բխող և բուհում իրականացված գործողությունները, ինչպես նաև ռազմավարական ծրագրի (2017-2021թթ.) Նպատակ 2-ը և պլանավորված գործողությունները:

ԵԳՊԱ-ում իրականացվող ծրագրերից հատկապես Դիզայն, Հագուստի մոդելավորում և Համակարգչային գրաֆիկա ՄԿԾ-երը մեծ պահանջարկ են վայելում դիմորդների շրջանում, քանի որ առավելագույնս արձագանքում են աշխատաշուկայում ժամանակակից զարգացումներին և միտումներին: Միայն վերջին տարիներին վերոնշյալ ՄԿԾ-երի գծով գրանցվում է լուրջ մրցակցային պայքար: Եվ պատահական չէ, որ առաջին փուլով վերանայվեցին 4 ՄԿԾ (բակալավր և մագիստրատուրա) (Դիզայն, Հագուստի մոդելավորում, Համակարգչային գրաֆիկա, Կիրառական արվեստ)՝ դառնալով առավել մրցունակ: Բացի այդ ԵԳՊԱ-ում իրականացվող մյուս 4 ՄԿԾ-երը, տարիներ շարունակ պահպանելով ավանդական մոտեցումները, լավագույնս նպաստում են մշակութային արժեքների տարածելուն և հասարակությանը ծառայություն մատուցելուն (Գրաֆիկա, Արվեստաբանություն, Գեղանկարչություն և Քանդակագործություն): ԵԳՊԱ-ն, ունենալով լավագույն փորձի օրինակը, աստիճանաբար վերանայում է նաև այս ՄԿԾ-երը:

ԵԳՊԱ-ի համար վերջին տարիներին մարտահրավեր էր մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացումը, ուսումնառության վերջնարդյունքներով սահմանումը և Որակավորումների ազգային շրջանակի ու աշխատաշուկայի պահանջների հետ համադրելիության ապահովումը: Այս ուղղությամբ հատկապես վերջին 5 տարիների ընթացքում ԵԳՊԱ-ն կատարել է մի շարք գործընթացներ՝ գրանցելով կարևոր ու լուրջ առաջընթաց:

Նախևառաջ, 2013թ.-ից, իրականացնելով ՄԿԾ-երի արդի վիճակի ուսումնասիրություն, ԵԳՊԱ-ն ձեռնամուխ եղավ եռափուլ բարելավումների իրականացմանը: Դիմելով Համաշխարհային բանկի Նորարարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհային ծրագրին՝ իրականացվեց պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունների զարգացում, ՄԿԾ-երի վերանայում և լաբորատորիաների վերազինում: Արդյունքում վերանայվեց 4 բակալավրի և 4 մագիստրատուրայի ծրագիր (Դիզայն, Համակարգչային գրաֆիկա, Հագուստի մոդելավորում, Կիրառական արվեստ), ինչպես նաև վերազինվեցին համապատասխան լաբորատորիաները, իսկ պրոֆեսորադասախոսական կազմը հնարավորություն ունեցավ իրականացնելու նմանատիպ ծրագրերի համեմատական վերլուծություն՝ ծանոթանալով դասավանդման և ուսումնառության նոր մեթոդներին և փորձը փոխանակելու գործընկերներին: Սա նախադեպ էր բուհի համար, երբ ուսումնասիրվեց միջազգային փորձն ու մշակվեցին նոր ձևաչափեր կրթական ծրագրերի վերանայելու համար՝ արդի պահանջներին համապատասխան, որը և փորձարկվեց մյուս բոլոր ՄԿԾ-երի համար:

Հաջորդ քայլով, իրականացված աշխատանքները բարելավելու նպատակով ԵԳՊԱ-ն մեկնարկեց ՄԿԾ-երը Որակավորումների ազգային շրջանակին համադրելու գործընթացը: Սրան մեծապես օժանդակել է ՏԵՄՊՈՒՍԻ ALIGN («Մասնագիտության կրթական ծրագրերի՝ որակավորումների ազգային շրջանակների հետ համադրելիության իրականանացում և ապահովում») դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում առաջին հերթին

վերասահմանվեցին ընտրված երկու մասնագիտության կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքները (Դիզայն և Համակարգչային գրաֆիկա), որոնք բխում են ՀՀ Որակավորումների ազգային շրջանակից, և վերաձևակերպվեցին երկու ՄԿԾ-ի նկարագրերը՝ համապատասխան ձևաչափերով (Հավելվածներ 49 և 50): Զուգահեռաբար իրականացվեց նաև ՄԿԾ-ի համադրելիությունը ՈԱՇ-ին ապահովելու ազգային ուղեցույցի մշակումը (Հավելված 6), որում մեծ դեր ունեցավ ԵԳՊԱ-ն, ինչի հիման վրա տեղայնացվեց և մշակվեց ԵԳՊԱ-ի «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ»-ը՝ համապատասխան գործիքակազմով և ձևաչափերով (Հավելված 5): Ձեռնարկում հստակորեն նկարագրվում է ծրագրերի վերանայման գործընթացը, ինչպես նաև դրանց ուսումնառության վերջնարդյունքների՝ ՈԱՇ-ի հետ համադրելիության ապահովման ձևաչափը, որով և իրականացվել է փորձարկման համար ընտրված երկու ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների՝ ՈԱՇ-ի հետ համադրելիությունը (Հավելված 50): Վերանայման արդյունքում իրականացվեց երկու ՄԿԾ-ի համար վերլուծություն՝ համաձայն ծրագրի փորձագիտական խմբի կողմից ներկայացրած համադրելիության չափանիշների (Հավելված 51), իսկ արդյունքում երկու ՄԿԾ-երը ենթարկվեցին արտաքին գնահատման եվրոպական (Դուբլինի արվեստի, դիզայնի և տեխբոլոգիաների ինստիտուտի պրոֆեսոր Դեվիդ Քուին, Ադամ Միկիևիչի համալսարանի պրոֆեսոր Զբիգնիև Պալկա, Բելգիայի Կաթոլիկե համալսարանի պրոֆեսոր Անդրե Գովաերթ, Որակի ապահովման կենտրոնական և արևելյան եվրոպական ցանցի տնօրեն Իրինգ Վասեր), տեղական (Դիզայնի ամբիոնի դասախոս Բագրատ Գյուլխասյան, Համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման ամբիոնի դասախոս Վահան Բալասանյան), Հայաստանի ուսանողների ասոցիացիայի (Էրիկ Վարդանյան) Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոնի (տնօրեն Ռուբեն Թոփչյան, ավագ մասնագետ Վարդուհի Գյուլազյան) փորձագիտական խմբի կողմից: Արդյունքում կազմվեց փորձագիտական զեկույց՝ ներառյալ համապատասխան դիտարկումներ (Հավելված 39): Այս գործընթացը մեծ նշանակություն ուներ ԵԳՊԱ-ի համար, որը դառնալով ՀՀ-ի եզակի բուհերից, հնարավորություն ունեցավ մշակել համադրելիության գործիքներ և ներդնել համապատասխան մեխանիզմներ Վերոնշյալ լավագույն փորձն արդեն կիրառվել է ԵԳՊԱ-ի մյուս երկու ՄԿԾ-ի համար (Հագուստի մոդելավորում և Կիրառական արվեստ) (Հավելված 52): Նախատեսվում է համադրելիության գործընթացն աստիճանաբար կիրառել նաև մյուս ՄԿԾ-երի համար ինչը կապահովի մրցունակության էլ ավելի բարձրացում մասնագիտական դաշտում:

Այսպիսով՝ ԵԳՊԱ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերը բխում են և համահունչ են բուհի առաքելությանը, սահմանված են՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների, իրականացվող 4 ՄԿԾ (բակալավր և մագիստրատուրա) համադրելի է ՈԱՇ-ի հետ, և հիմք է մյուս ՄԿԾ-երի հետագա վերանայման և համադրելիության ապահովման համար:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ):

Համադրելի մասնագիտության կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծությունն ի սկզբանե եղել է ԵԳՊԱ-ի ՄԿԾ-երի վերանայումների համար կարևորագույն փուլերից: ԵԳՊԱ-ն մշակել և հաջողությամբ կիրառում է ՄԿԾ-երի համեմատական վերլուծության ձևաչափը, որը կազմում է «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ»-ի մասը (Հավելված 5): Վերոնշյալ ՄԿԾ-ների

վերանայման ընթացքում ԵԳՊԱ-ում իրականացվել է առաջատար հաստատությունների նմանատիպ ՄԿԾ-երի հետ համեմատական վերլուծություն (Հավելված 53)

Ստորև ներկայացվում է ԵԳՊԱ-ում ՄԿԾ-երի համեմատական վերլուծության համար ընտրված միջազգային կազմակերպությունների ցանկը.

- Լոնդոնի Արվեստի համալսարանին կից կենտրոնական Սուրբ Մարտինի անվան Արվեստի և Դիզայնի քոլեջ, Մեծ Բրիտանիա
- Միլանի գեղեցիկ արվեստների «Դոմուս» ակադեմիա, Իտալիա
- Նիդերլանդների «Դելֆտ» տեխնոլոգիական ակադեմիա. Նիդերլանդներ
- Աշֆորդի համալարան, Քլինթոն, ԱՄՆ
- Դիզայնի և բիզնեսի Ռաֆլսի քոլեջ, Սիդնեյ, Ավստրալիա
- Համակարգչային և թվային մեդիայի ԴեՓոլի համալսարան, Չիկագո, ԱՄՆ
- Մոսկվայի Տեքստիլ համալսարան, Ռուսաստան
- Ինստիտուտո Մարանգոնի, Իտալիա
- Լոնդոնի Սենտ-Մարտին արվեստի և դիզայնի բարձրագույն դպրոց, Մեծ Բրիտանիա
- Լոնդոնի ժամանակակից արվեստի քոլեջ, Մեծ Բրիտանիա

Բացի այդ, ԵԳՊԱ-ն, մասնակցելով ՏԵՄՊՈՒՍԻ ALIGN («Մասնագիտության կրթական ծրագրերի՝ որակավորումների ազգային շրջանակների հետ համադրելիության իրականանացում և ապահովում») դրամաշնորհային ծրագրին, հնարավորություն ունեցավ կրթական ծրագրերի մշակման և մեթոդաբանության ձևակերպման գործընթացում առաջնորդվել եվրոպական գործընկեր կազմակերպությունների կազմած Որակավորումների ազգային շրջանակի հետ համադրելիության ուղենիշներից, որում հիմնական ներկայացված են արվեստի բուհի օրինակներ (Հավելված 54): Ավելին, համագործակցելով Իռլանդիայի Դուբլինի դիզայնի, արվեստի և տեխնոլոգիայի ինստիտուտի հետ, անցկացվեց մի քանի հանդիպում և աշխատաժողով ԵԳՊԱ-ի և Դուբլինի ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի հետ՝ ծանոթանալով կրթական ծրագրերի մշակման, իրականացման, մեթոդաբանության և դասընթացների ձևակերպման իռլանդական փորձին, ձևաչափերին և գործիքակազմին, ինչը մեծապես օժանդակեց ԵԳՊԱ-ում ՄԿԾ-երի մշակման և համադրելիության գործընթացի իրականացմանը:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն խրախուսում է ՄԿԾ-երի պարբերական վերանայման գործընթացում առաջատար հաստատությունների նմանատիպ ՄԿԾ-երի հետ համեմատական վերլուծության իրականացումը, որը կատարվում է փաստաթղթային հենքով, այնպես էլ համագործակցային հիմունքներով հանդիպումների և քննարկումների ընթացքում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

	Հավելված 55. Դասընթացի նկարագրի ձևաչափ Հավելված 56. Համակարգչային գրաֆիկա ՄԿԾ-ի դասընթացի նկագրերի օրինակներ (2) Հավելված 57. Հագուստի մոդելավորում ՄԿԾ-ի դասընթացի նկագրերի

Հիմքեր	օրինակներ (2) Հավելված 58. Դիզայն ՄԿԾ-ի դասընթացի նկագրերի օրինակներ (2)

Վերլուծել ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ում մասնագիտության կրթական ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները հիմնականում ներկայացված են «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ»-ում, որոնք իրենց ձևակերպումներն են գտնում ՄԿԾ-ի համապատասխան դասընթացներում: ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերը կազմված են դասընթացներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նկարագիրը (Հավելված 55), որում հստակ սահմանված են տվյալ դասընթացի նպատակը, ուսումնառության վերջնարդյունքները, պահանջները, գնահատումը, ծանրաբեռնվածությունը, դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու ժամաքանակը: Ձևաչափի օրինակով էլ մշակվել են ընտրված և վերանայված ՄԿԾ-երի դասընթացների նկարագրերը (Հավելվածներ 56, 57, 58): Դասընթացի նպատակները և ուսումնառության վերջնարդյունքները բխում են ՄԿԾ-ի նպատակից և ուսումնառության վերջնարդյունքներից՝ նպաստելով դրանց արդյունավետ իրականացմանը: Այս համադրելիությունն ապահովելու նպատակով ԵԳՊԱ-ում կիրառվում է դասընթացների և ՄԿԾ-ի վերջնարդյունքների հետ համադրելիության աղյուսակը (Հավելվածներ 49, 50 և 52):

Դասընթացի ուսումնառության վերջնարդյունքներին հասնելու նպատակով կիրառվում են դասավանդման և ուսումնառության տարբեր մեթոդներ, որոնք սահմանված են դասընթացների նկարագրերում (Հավելված 55): Առանձնացվում են լսարանային (լաբորատոր, պրակտիկ և այլն) և ինքնուրույն (աշխատանք արվեստանոցներում, գրականության ուսումնասիրություն և այլն) ժամեր՝ կախված դասընթացի նպատակներից և բնույթից: Յուրաքանչյուր մեթոդի համար սահմանվում է համապատասխան առաջադրանք և գնահատման ձև՝ նպաստելով դասընթացի ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով բուհում պարբերաբար անցկացվում են հարցումներ ուսանողների շրջանում (Հավելված 33):

Հաշվի առնելով բուհի առանձնահատկությունը՝ մասնագիտական դասընթացները հիմնականում անց են կացվում փոքր խմբերում՝ հիմնվելով կոնկրետ մասնագիտական խնդիրների լուծման վրա: Բացի այդ, բուհի ուսանող-դասախոս հարաբերակցությունը ևս թույլ է տալիս դասավանդումը ծառայեցնել ուսանողակենտրոն ուսուցմանը՝ յուրաքանչյուր ուսանողին ցուցաբերելով անհատական մոտեցում իրենց աշխատանքները պատրաստելու և նախագծելու ընթացքում:

Այսպիսով՝ ԵԳՊԱ-ի ՄԿԾ-երի դասընթացները միտված են ՄԿԾ-ի նպատակների իրականացմանը և ուսումնառության վերջնարդյունքների ձևավորմանը, իսկ դասավանդման և ուսումնառության մեթոդները համապատասխանում են տվյալ դասընթացի և հետևաբար նաև ՄԿԾ-ի պահանջներին՝ առավելագույնս ապահովելով ուսանողակենտրոն ուսուցումը և արդյունավետորեն նպաստելով ուսանողի առաջընթացին և ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:	
Հիմքեր	Հավելված 59. Ուսանողի գնահատման համակարգ. հայեցակարգային դրույթներ Հավելված 60. Գնահատման համակարգի հայեցակարգի վերանայման մասին որոշում, ռեկտորատի նիստի արձանագրություն Հավելված 61. Ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ Հավելված 62. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի նախատեսված մոտեցումների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ում ուսանողի գիտելիքի գնահատումը սահմանված է «Ուսանողի գնահատման համակարգ. հայեկարգային դրույթներ» փաստաթղթում, որը մշակվել և կիրառվում է 2013թ.-ից (Հավելված 59): Հայեցակարգում հստակորեն սահմանված է, որ ԵԳՊԱ-ում գնահատումը իրականացվում է՝ ըստ ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների և շարադրված են գնահատման չափանիշերը և գնահատականի բաղադրիչները: «Ուսանողի գնահատման համակարգ»-ը գործարկումից ի վեր ենթարկվել է փոփոխության և վերայանման՝ հիմնվելով Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացված հարցումների, քննարկումների և առաջարկությունների վրա (Հավելված 60): Բացի այդ, յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար առանձնացվում են գնահատման մեթոդներ, որոնք ներկայացված են համապատասխան ՄԿԾ-ի նկարագրերում (Հավելվածներ 49, 50 և 52):

Գնահատման ընդհանուր հայեցակարգային մոտեցումից բացի ԵԳՊԱ-ում ընդունված ընթացակարգով իրականացվում է ուսանողի գիտելիքի գնահատում ՄԿԾ-երի դասընթացների մակարդակում: Յուրաքանչյուր դասընթացի նկարագրում սահմանված են գնահատման ձևերը, չափանիշերը՝ կախված դասընթացի բնույթից: Ուսումնառության վերջնարդյունքների ձեռբերման ընթացքում իրականացվում է ուսանողի գիտելիքի պարբերական գնահատում: Բուհում լայնորեն և արդյունավետորեն կիրառվում է թե՛ ձևավորող և թե՛ ամփոփիչ գնահատումը: Կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած աշխատանքներին (հիմնականում մասնագիտական-կիրառական դասընթացներ) տրվում են խորհրդատվություններ դասախոսի, ամբիոնի այլ մասնագետի կողմից՝ հնարավորություն տալով ուսանողին բարելավել իր նախագիծը/աշխատանքը: Արդեն ամփոփիչ դիտման/քննության ժամանակ ուսանողը ստանում է գնահատականը, որը տալիս է ամբիոնի մասնագետներից կազմված հանձնաժողովը: Նման մոտեցումը նպաստում է ուսանողի գիտելիքի առավել անաչառ գնահատմանը՝ նվազեցնելով սուբյեկտիվ գնահատման ռիսկերը:

Տեսական դասընթացների գնահատումն իրականացվում է բանավոր հարցումների, կուրսային աշխատանքների, շնորհանդեսների, թեստերի և այլնի տեսքով՝ համաձայն հստակ սահմանված գնահատման չափանիշների:

Բոլոր արդյունքները ամրագրվում են ամբիոնների արձանագրություններում, դեկանատներում և Ուսումնական գործընթացի հաշվառման բաժնում:

ԵԳՊԱ-ում ամփոփոիչ ատեստավորումը նույնպես իրականացվում և անցկացվում է

հստակ սահմանված կարգով (Հավելված 61): Բակալավրի կրթական ծրագրով ավարտական դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզի համար ուսանողներին տրվում է «Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց» (Հավելված 62), որտեղ հստակ նկարագրված են ներկայացվող պահանջները: Բակալավրի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքները գնահատվում են հատուկ հանձնաժողովի կողմից, որում ներգրաված են պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և մասնագիտական ոլորտի արտաքին մասնագետներ, որոնց տրված միջին գնահատականը համարվում է վերջնական: Ավարտական աշխատանքների պաշտպանությունները բաց են շահակիցների՝ ուսանողների, գործատուների, ինչպես նաև հասարակության համար՝ նպաստելով աշխատանքների անաչառ և թափանցիկ գնահատմանը:

ԵԳՊԱ-ն, որդեգրելով ուսումնառության վերջնարդյունքների հիման վրա անաչառ գնահատումը, կարևորում և արժևորում է ակադեմիական ազնվությունը՝ այն դարձնելով գնահատման քաղաքականության անքակտելի մաս: «Ուսանողի գնահատման համակարգ» հայեցակարգում հստակորեն նկարագրված են ակադեմիական ազնվության դրութեր: Բուհում խստիվ արգելվում է գրագողությունը: Դրան մեծապես օժանդակում են ընթացիկ իրականացվող դիտումները, հարցումները, ինչպես նաև ուսանողի հետ անհատական աշխատանքների անցկացումը:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում առկա է ուսանողի գիտելիքի գնահատման հստակ ձևակերպված քաղաքականություն, որը նպաստում է ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանը և ակադեմիական ազնվությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Հիմքեր	Հավելված 63. ԵԳՊԱ ուսանողների շարժունության կարգ Հավելված 64. ՀՀ բուհերում Կրեդիտների փոխանակման և կուտակման եվրոպական համակարգի կիրառման ուղենիշների ուղեցույց

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր:

Ուսանողների ներհոսք

	Երկիր, հաստատություն	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*
1	*Ֆրանսիա, Տուր, Անժեր, Մանսի արվեստի բարձրագույն դպրոց (փծ)*			*1*		
2	*Ուկրաինա, Լվովի արվեստի ազգային ակադեմիա (փծ)*				*2*	

3	*Ֆրանսիա, Բզանսոնի արվեստի բարձրագույն դպրոց (փծ)*					*1*
Ուսանողների արտահոսք						
	Երկիր, հաստատություն	*2012/ 2013*	*2013/ 2014*	*2014/ 2015*	*2015/ 2016*	*2016/ 2017*
1	*Ֆրանսիա, Մարսելի գեղարվեստի բարձրագույն դպրոց (փծ)*	*1*	*1*	*3*	*1*	
2	*Ֆրանսիա, Լիմոժ-Օբյուսոնի արվեստի բարձրագույն ազգային դպրոց (փծ)*				*1*	
3	*Ֆրանսիա, Ռեյմսի դիզայնի և արվեստի բարձրագույն դպրոց (փծ)*	*2*				
4	*ՌԴ, Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա (փծ)*	*1*	*3*	*4*	*2*	*6*
5	*Իտալիա, Պերուջայի համալսարան (փծ)*			*1*	*1*	
7	*Իտալիա, Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիա (փծ)*			*3*	*1*	

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և դասավանդողների թվա քանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի դասավանդող անձնակազմի փոխանակումն ու շարժունությունը ապահովող գործող համաձայնագրեր:

ԵԳՊԱ-ում վերջին հինգ տարիների ընթացքում ներհոսք և արտահոսք չի գրանցվել: Բուհում կան համատեղությամբ աշխատող դասախոսներ շարժունություն չի գրանցվել: Բուհն ունի մեկ հրավիրյալ դասախոս, ով անցկացնում է մի շարք դասընթացներ և վարպետաց դասեր:

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ՄՈՒՀ-ի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերը բովանդակային առումով հուսալի են, քանի որ բխում են բուհի առաքելությունից, սահմանված են՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների, համադրելի են ՈԱՇ-ին և հիմանականում անդրադառնում են աշխատաշուկայի արդի պահանջներին:

Նմանատիպ այլ առաջավոր ՄԿԾ-երի հետ համահունչ լինելն ապահովելու նպատակով բուհում իրականացվում են համեմատական վերլուծություններ արվեստի առաջատար դպրոցների ՄԿԾ-երի հետ, ինչպես նաև ուսումնասիրվում է տեղական և միջազգային լավագույն փորձը ՄԿԾ-երի բարելավման ուղղությամբ: Այս գործընթացն

առավել ակտիվ իրականացվում է 2013թ.-ից, որի արդյունքում մի շարք ՄԿԾ-երի ուսումնառության վերջնարդյունքները վերաձևակերպվեցին, իսկ մյուսներինը սահմանվեցին (Հավելվածներ 49, 50 և 52):

Բացի համեմատական վերլուծության բուն գործընթացից, բուհի համար կարևագույն քայլ էր ALIGN դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացված փորձի փոխանակումը: Եվրոպական գործընկեր հաստատությունների կողմից ներկայացված համադրելիության ուղենիշները և հատկապես Իռլանդիայի Դուբլինի արվեստի, դիզայնի և տեխնոլոգիաների ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի հետ համատեղ անցկացված աշխատաժողովները թույլ տվեցին մշակելու ԵԳՊԱ-ի ՄԿԾ-երի նկարագրերի (Դիզայն և Համակարգչային գրաֆիկա) միջազգայնորեն ընդունելի ձևաչափեր և համադրելիության գործիքակազմ: Սա նաև լավ փորձ էր մյուս ՄԿԾ-երի վրա տարածելու համար:

Վերոնշյալ միջոցառումները միտված էին ոչ միայն վերանայելու միջազգային պահանջներին համադրելի ՄԿԾ-եր, այլ նաև կազմելու մրցունակ ՄԿԾ-եր, որոնք առավելագույնս կնպաստեն ուսանողների շարժունությանը և միջազգայնացմանը:

Բացի վերանայված ՄԿԾ-երից, բուհում առկա ԵԳՊԱ-ի ուսանողների շարժունության կարգից, որում հստակ նկարագրված են շարժունության հնարավորությունները և գործընթացը (Հավելված 63), ինչպես նաև արտասահմանյան հաստատությունների հետ համագործակցության պայմանագրերից, որոնց շրջանակներում էլ իրականացվում են փոխանակային ծրագրեր (վիճակագրությունը բերված է վերևում), ուսանողների շարժունության գործընթացին մեծապես նպաստում է նաև մշակված ՀՀ բուհերում Կրեդիտների փոխանակման և կուտակման եվրոպական համակարգի կիրառման ուղենիշների ուղեցույցը, որը հնարավորություն է տալիս բուհում կանոնակարգել կրեդիտների կուտակման և փոխանակման համակարգի գործարկումը (Հավելված 64):

ԵԳՊԱ-ում ուսանողների և դասախոսների շարժունությանը խոչընդոտող հիմնական խնդիրներից է օտարալեզու ՄԿԾ-երի և դասընթացների բացակայությունը: Թերևս բուհը հնարավորինս օժանդակում է միջազգային ուսանողներին՝ նրանց համար կազմակերպելով լեզվի նախապատրաստական անվճար դասընթացներ, այդուհանդերձ, վերջինս, մարտահրավեր ընդունելով, ԵԳՊԱ-ն պլանավորում է քայլեր ձեռնարկել օտարալեզու ՄԿԾ-երի իրականացումը հնարավոր դարձնելու ուղղությամբ՝ բարձրացնելով բուհի գրավչությունը միջազգային ուսանողների շրջանում և նպաստելով շարժունության զարգացմանը:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն մշակում և իրականացնում է բովանդակային հուսալի ՄԿԾ-եր, որոնք համադրելի են նմանատիպ ՄԿԾ-երի հետ, բուհում գործարկվում է կրեդիտների կուտակման և փոխանակման եվրոպական համակարգը՝ նպաստելով ուսանողների շարժունությանը: Այդուհանդերձ հետագայում պլանավորված բարելավման գործընթացները մեծապես կապահովեն ուսանողների և դասախոսների շարժունության զարգացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Հիմքեր	Հավելված 65. ԵԳՊԱ-ում ՄԿԾ-երի մշտադիտարկման, վերանայման և բարելավման ուղղությամբ ՈԱ գործընթացների վերլուծություն

Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:

ԵԳՊԱ-ում ՄԿԾ-երի արդյունավետության գնահատումն ու վերանայումը վերջին տարիներին առաջնային խնդիրներից ու մարտահրավերներից է, որը և իր արտացոլումն է գտել թե 2012-2016թթ. և թե 2017-2021թթ. Ռազմավարական ծրագրերի նպատակներում (Հավելվածներ 2 և 3)։ Որդեգրելով պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում սկզբունքը բոլոր գործընթացների համար՝ ԵԳՊԱ-ն նույն մոտեցումն է կիրառում նաև ՄԿԾ-երի իրականացման և բարելավման ուղղությամբ:

Պլանավորում՝ ՄԿԾ-ի նկարագրին համապատասխան՝ ուսումնական պլանների մշակում և հաստատում, առարկայական նկարագրերի կազմում, դասացուցակի կազմում։

Իրականացում՝ դասընթացների իրականացում ըստ ուսումնական պլանի և դասացուցակի՝ համապատասխան արվեստանոցներում և լսարաններում։ ՄԿԾ-ի իրականացման մեկնարկ է հանդիսանում դիմորդների ներգրավումը, որի համար, ԶԼՄ-ներում, «Հայաստանի բուհեր» և նմանատիպ տեղեկատուներում տեղադրված հայտարարություններից բացի, ԵԳՊԱ-ն հանդիպումներ է կազմակերպում ՀՀ ավագ դպրոցներում և վարժարաններում, որոնց ընթացքում ներկայացվում են ԵԳՊԱ ՄԿԾ-երը։

ԵԳՊԱ-ն անց է կացնում նաև նախապատրաստական դասընթացներ՝ դիմորդների համար։

Ընդունելության քննությունները բարեհաջող հանձնած ուսանողների կրթական բուն գործընթացը ներառում է՝

- Մասնակցություն դասախոսություններին՝ տեսական նյութի մատուցում
- Աշխատանք արվեստանոցներում, արհեստանոցներում և լաբորատորիաներում՝ տեսական գիտելիքի կիրառում և գործնական կարողությունների զարգացում
- Ինքնուրույն անհատական և խմբային աշխատանքներ
- Գրականության ուսումնասիրություն
- Կատարած աշխատանքների ներկայացում և ցուցադրությունների մասնակցություն
- Ուսումնաարտադրական պրակտիկա, պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների ներկայացում
- Հետազոտության իրականացում
- Ավարտական աշխատանքների ներկայացում
- Շրջանավարտների հետ կապ՝ HEN-GEAR հարթակի և Կարիերայի կենտրոնի տվյալների բազայի միջոցով։

Ստուգում՝ ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման գնահատման համար կիրառվում են «Դասընթացի արդյունավետության գնահատում» և «ԵԳՊԱ առկա ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում» (Հավելված 119, 125, 126) հարցաթերթերը։ Վերլուծությունների արդյունքում հայտնաբերված խնդիրները ներկայացվում են ամբիոններին։ Վերլուծությունները ամփոփ ներկայացվում են նաև պաշտոնական կայքէջում։ Ամբիոնները միջոցառումներն են իրականացնում դասախոսներին

տեղեկացնելու հարցման արդյունքերին և դասավանդման մեթոդների ու համապատասխան ռեսուրսների բարելավման համար: ՄԿԾ-ի իրականացման գնահատումը կատարվում է նաև ըստ վերջնարդյունքների՝ շրջանավարտների և գործատուների շրջանում հարցումների անցկացման միջոցով:

Բարելավում՝ բարելավման միջոցառումների իրականացում՝ ստուգման արդյունքերի և նմանատիպ ՄԿԾ-երի համեմատական վերլուծության հիման վրա: «ԵԳՊԱ առկա ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում» հարցման արդյունքում վերազինվել են «Հագուստի մոդելավորում», «Դեկորատիվ կիրառական արվեստ», «Դիզայն», «Համակարգչային գրաֆիկա» լաբորատորիաներն ու արհեստանոցները, ինչն էլ նպաստեց տվյալ ՄԿԾ-երի իրականացման համար ուսումնական միջավայրի բարելավմանը:

Հատուկ նշանակություն տալով ՄԿԾ-երի արդիականացման և համադրելիության ապահովմանը՝ ԵԳՊԱ-ն ՄԿԾ-երի արդյունավետության գնահատումը և վերանայումը սահմանում է ՈԱ ձեռնարկում և «ՄԿԾ-երի մշակման և վերանայման ձեռնարկ»-ում, որում հստակորեն նկարագրված է կրթական ծրագրերի վերանայման գործընթացը:

Մասնագիտության կրթական ծրագրերի վերանայման և բարելավման անհրաժեշտությունը և պահանջը կարող է առաջանալ թե ամբիոնից, թե ղեկավար օղակներից: Երկու դեպքում էլ ԵԳՊԱ-ն ձեռնարկում է որոշակի քայլեր, ունի ընթացակարգ և մշակել է մեխանիզմներ և գործիքակազմ ապահովելու գործընթացի արդյունավետությունն ու հաջող իրականացումը:

- ***Առկա իրավիճակի ուսումնասիրություն.*** ԵԳՊԱ-ում ՄԿԾ-երի առկա վիճակի ուսումնասիրությունները պարբերաբար թույլ են տալիս հասկանալ, թե որտեղ է բուհը իր ՄԿԾ-երի արդյունավետության տեսանկյունից և ձեռնարկել համապատասխան քայլեր: Նման ուսումնասիրությունները դեռևս 2013թ. թույլ տվեցին հասկանալ ՄԿԾ-երում լուրջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը. արդյունքում դրանք սահմանվեցին՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների, նկարագրվեցին հստակ ձևաչափերի համաձայն:
- ***Մրցունակության և համադրելիության ապահովում.*** ԵԳՊԱ-ում խիստ անհրաժեշտություն կա ՄԿԾ-երը ժամանակակից մոտեցումներին և միտումներին համահունչ դարձնելու, աշխատաշուկայի պահանջների հետ համապատասխանեցնելու, ինչպես նաև նմանատիպ կրթական ծրագրերին և արտաքին պահանջներին համադրելի դարձնելու՝ ապահովելով դրանց մրցունակությունը: Այս ուղղությամբ ևս արդեն իսկ իրականացվել են մի շարք գործընթացներ, որի արդյունքն է ՄԿԾ-երի մշակման և վերանայման ձեռնարկի ստեղծումը, համեմատական վերլուծությունների իրականացումը, համադրելիության գործիքակազմի մշակումը, տեղայնացումն ու գործընթացի իրականացումը մի շարք ՄԿԾ-երի համար:
- ***Հարցումների անցկացում արդյունավետության գնահատման և բարելավման նպատակով.*** ԵԳՊԱ-ի արտաքին ու ներքին շահակիցների արձագանքը իրականացվող ՄԿԾ-երի վերաբերյալ մեծ նշանակություն ունի: ՄԿԾ-երի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործընթացը մանրամասն նկարագրված է ՈԱ ձեռնարկում (Հավելված 30): Բացի այդ ALIGN դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականցված 2 ՄԿԾ-ի ուղղությամբ վերլուծությունը փորձագիտական խմբին ներկայացնելիս կատարվել է նաև ՄԿԾ-ի մշտադիտարկման, վերանայման և բարելավման ՈԱ գործընթացների

վերլուծությունը և համապատասխան գործիքները (Հավելված 65):

Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված և իրականացվող գործընթացները նպաստում են պարբերաբար կարծիք ու արձագանք ստանալ թիրախային տարբեր խմբերից: Հիմնականում հարցումները անց են կացվում շրջանավարտների, ուսանողների և գործատուների շրջանում (Հավելվածներ 33, 42 և 43): Համապատասխան վերլուծությունները ներկայացվում են ամբիոններին ու ղեկավար օղակներին բարելավումներ իրականացնելու և փոփոխություններ կատարելու նպատակով: Վերլուծությունների ամփոփումը տեղադրվում է նաև ԵԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում: Գործատուների և շրջանավարտների շրջանում կատարված նման հարցումներից մեկի արդյունքում, օրինակ, պարզվել է, որ ԵԳՊԱ-ի շրջանավարտներն ունեն կատարելագործման կարիք հետևյալ ուղղություններով. թիմային աշխատանք, կատարված աշխատանքի բանավոր և գրավոր ներկայացման կարողություն, օտար լեզվի իմացություն: Այս արդյունքները հաշվի առնելով՝ բուհում արդեն իսկ նախաձեռնվել են մի շարք գործընթացներ. լրացուցիչ պարապմունքներ ուսանողների համար:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ԵԳՊԱ-ում գործում են ՄԿԾ-երի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման հստակ մեխանիզմներ, մշակվել է գործիքակազմ, որն ամփոփված է համապատասխան կարգում և ապահովում է գործընթացի արդյունավետ կազմակերպումը և իրականացումը՝ տեղ թողնելով հետագա բարելավումների ու զարգացումների:

Նկարագրել վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրի վերանայման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:

ԵԳՊԱ-ում վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրերի վերանայման շրջանակներում կատարվել են մի շարք ուսումնասիրություններ, որոնց արդյունքում էլ նախաձեռնվել և իրականացվել են գործընթացներ և բարելավումներ.

- ***Ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված ՄԿԾ-եր***. ԵԳՊԱ-ի ՄԿԾ-երը սահմանված են՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների, որոնք բխում են առաքելությունից և ՈԱՇ-ից:
- ***Համեմատական վերլուծություն***. ԵԳՊԱ-ն ունի համեմատական վերլուծություն իրականացնելու համար ձևաչափ և կատարել է մի շարք վերլուծություններ՝ որպես հիմք հետագա վերանայումների համար:
- ***ՄԿԾ-երի համադրելիության ապահովում***. ԵԳՊԱ-ում, ALIGN դրամաշնորհային ծրագրի օժանդակությամբ, մշակվել և ներդրվել են համադրելիության մեխանիզմներ և գործիքակազմ:
- ***Անհրաժեշտ փաստաթղթավորում***. մշակվել է ՄԿԾ-երի մշակման, իրականացման, վերանայման համար անհրաժեշտ փաստաթղթային հենք. ձեռնարկ, նկարագրերի ձևաչափեր և այլն:
- ***ՄԿԾ-երի արդյունավետության գնահատման գործիքակազմ***. ՄԿԾ-երի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ էր նաև համապատասխան գործիքակազմի մշակումն ու կիրառումը, որին հետևում է Որակի ապահովման կենտրոնը՝ իրականացնելով հարցումներ,

քննարկումներ և համապատասխան վերլուծություններ։

Վերը թվարկված բարելավումները միայն սկիզբ են այն գործընթացի, որը սկսվել և դեռևս հաջողություններ է գրանցում բուհում։ ԵԳՊԱ-ն, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, մրցունակության ապահովման և հեղինակության, ինչպես նաև ՄԿԾ-երի որակի բարձրացման նպատակով շարունակելու է ՄԿԾ-երի բարելավման, վերանայման, համադրելիության գործընթացը՝ տարածելով լավագույն փորձը։

Վերլուծել Չափանիշ 3-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր

1. *ԵԳՊԱ-ի բոլոր ՄԿԾ-երը բխում են բուհի առաքելությունից և սահմանված են՝ ըստ ուսումնառության վերջնարդյունքների, որոնք համադրելի են ՈԱՇ-ի հետ:*
2. *Առկա են հստակ ձևակերպված ՄԿԾ-ի և դասընթացների նկարագրեր:*
3. *Դասավանդման և ուսումնառության մեթոդները նպաստում են ուսանողի ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանը:*
4. *Բուհում գործում է ուսանողակենտրոն մոտեցումը:*
5. *ՄԿԾ-երը համադրելի են նմանատիպ այլ կրթական ծրագրերի հետ՝ ապահովելով մրցունակությունը ու շարժունությունը:*
6. *Գործում է գնահատման հստակ քաղաքականություն՝ խթանելով ակադեմիական ազնվությունը:*
7. *Բուհում հաջողությամբ իրականացվում է ՏԵՄՊՈՒՍ-ի ALIGN դրամաշնորհային ծրագիրը:*
8. *Բուհն ունի տեխնիկապես հագեցված արհեստանոցներ, արվեստանոցներ և լաբորատորիաներ:*
9. *Առկա են ՄԿԾ-երի արդյունավետության գնահատման, մշտադիտարկման և վերանայման հստակ մեխանիզմներ, անհրաժեշտ փաստաթղթեր և գործիքակազմ:*

Թույլ կողմեր

1. *ԵԳՊԱ-ի մյուս 4 ՄԿԾ-երի համար համադրելիության գործիքները կիրառված չեն:*
2. *Գրաֆիկա և Քանդակագործություն ՄԿԾ-երի բարելավում:*
3. *Օտարալեզու դասընթացների և ՄԿԾ-երի բացակայություն:*

Հնարավորություններ

1. *Աշխատաշուկայի ուսումնասիրության հիմա վրա՝ առկա են հնարավորություններ նոր ՄԿԾ-ի մշակման և իրականացման համար:*
2. *ՄԿԾ-երի նմանատիպ կրթական ծրագրերի հետ համադրելիության նոր հնարավորություններ, որոնք կնպաստեն դասախոսների և ուսանողների շարժունության բարձրացմանը:*

Վտանգներ

1. *Բնակչության արտահոսքի հետ կապված ՄԿԾ-երի պահանջարկի անկում:*
2. *ԵԳՊԱ-ում գործող կրթական ծրագրերի առաջարկի և աշխատաշուկայի պահանջարկի միջև անհամապատասխանություն:*

3. *Արտաքին շահակիցների հետաքրքրվածության անկում ՄԿԾ-երի վերանայման գործընթացում:*

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ԵԳՊԱ-ն վերոնշյալ թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ պլանավորում է իրականացնել հետևյալ քայլերը և գործընթացները.

1. *Օգտագործելով բուհում առկա լավագույն փորձը՝ համադրելիության գործիքները տարածել մյուս 4 ՄԿԾ-երի վրա և ապահովել ՄԿԾ-երով դասավանդող պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունների զարգացումը՝ շարունակաբար տեղեկացնելով դասավանդման և ուսուցման ժամանակակից մեթոդներին:*
2. *Հայթայթել ֆինանսավորման միջոցներ լաբորատորիաների համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով:*
3. *Մշակել օտարալեզու դասընթացներ՝ խթանելով բուհի միջազգայնացման զարգացումը և մեծացնելով շարժունությունը:*
4. *Ակտիվացնել արտաքին շահակիցների ներգրավումը ՄԿԾ-երի վերանայման գործընթացում՝ հաճախակի կազմակերպելով քննարկում-հանդիպումներ գործատուների հետ:*
5. *Ապահովել բոլոր ՄԿԾ-երի շարունակական բարելավումը և արդիականացումը՝ երաշխավորելով, որ արդի, միջազգային և աշխատաշուկայի պահանջները պարբերաբար հաշվի են առնվում:*

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

ԵԳՊԱ-ն հավակնում է ստեղծել ուսանողների համար արդյունավետ կրթական միջավայր՝ շարունակաբար բարելավելով ուսանողներին խորհրդատվություն և օժանդակություն տրամադրելու, աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու, իրավունքները պաշտպանելու, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության ապահովման ընթացակարգերի և մեխանիզմների արդյունավետության գնահատման և որակի ապահովման մեխանիզմները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:	
Հիմքեր	Հավելված 66. Բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ Հավելված 67. ԵԳՊԱ ընդունելության քննությունների հանձնարարություններ և գնահատման չափանիշեր Հավելված 68. ԵԳՊԱ-ի մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ Հավելված 69. Ասպիրանտուրայի ընդունելության ընթացակարգ Հավելված 70. ԵԳՊԱ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ Հավելված 71. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կնքված պայմանագրեր Հավելված 72. Հաստատությունների ցանկը Հավելված 73. ՀՀ բուհերում հեռացման (ազատման) և վերականգման կարգ Հավելված 74. ԵԳՊԱ ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման կարգ
Ուսանողներին հավաքագրելու նպատակով ԵԳՊԱ-ն կրթական ծրագրերի վերաբերյալ դիմորդներին տեղեկություն է տրամադրվում ռադիոյով, համացանցով, ինչպես նաև տարբեր տեղեկատուներով. Բուհը հայտարարություն է տպագրում «Հայաստանի Հանրապետություն» թերթում, ՀՀ ԿԳ նախարարության ամենամյա տեղեկագրում, «Հայաստանի բուհեր» տեղեկագրում, ինչպես նաև ԵԳՊԱ պաշտոնական կայքէջում: Ավելին, իրականացվում են հանդիպումներ ավագ դպրոցներում, արվեստի դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, որոնց ընթացքում ԵԳՊԱ անձնակազմը ներկայացնում է	

բուհի կրթական ծրագրերը, ուսումնառելու հնարավորություններն ու պայմանները, ինչպես նաև հարց ու պատասխանի միջոցով սպառիչ տեղեկատվություն է տրամադրում ԵԳՊԱ հնարավոր դիմորդներին: Դիմորդների համար ԵԳՊԱ-ն կազմակերպում է նաև բաց դռների օր, որի շրջանակում այցելուները կարող են ծանոթանալ ԵԳՊԱ կրթական ծրագրերին, դասախոսական անձնակազմին, կրթական միջավայրին: Հարկ է նշել, որ ԵԳՊԱ-ն իրականացնում է նաև նախապատրաստական դասընթացներ դիմորդների համար:

ԵԳՊԱ ուսանողների ընդունումը բակալավրական կրթական ծրագրով իրականացվում է ըստ «Բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ»-ի (Հավելված 66) և «ԵԳՊԱ ընդունելության քննությունների հանձնարարություններ և գնահատման չափանիշեր»-ի (Հավելված 67): Յուրաքանչյուր տարվա ընդունելության քննությունների անցկացման համար կազմվում են ընդունող (գործընթացը համակարգող) հանձնաժողով և մասնագիտական քննական (գնահատող) հանձնաժողովներ, որոնք գնահատում են դիմորդների քննական աշխատանքները: Քննության ընթացքը վերահսկվում է ակադեմիական ազնվության պահպանման նպատակով: ԵԳՊԱ-ի ընդունելության մասնագիտական առարկաների քննություններն անցկացվում են Ակադեմիայում, իսկ ոչ մրցութային կարգով պահանջվում է ավագ դպրոցի «Հայոց լեզվի» թեսթավորման գնահատականը (Ա մակարդակի): Յուրաքանչյուր առարկայի քննության առաջադրանքները, գնահատման չափանիշերը, պահանջվող պիտույքների ցանկը տեղադրված են ԵԳՊԱ պաշտոնական կայքէջում և հասանելի են դիմորդներին (http://www.yafa.am/?p=12124): Կայքում տեղադրված է նաև ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (http://www.yafa.am/?page_id=14762): Քննությունների համար տրամադրվում են մոլբերտներ, բնորդներ: Քննությունների ավարտից հետո ուսանողների գնահատականները փակցվում են բուհում, ինչպես նաև տեղադրվում ԵԳՊԱ պաշտոնական կայքէջում:

Մագիստրատուրայի ՄԿԾ-երի ընդունելությունն իրականացվում է ընդունող և մասնագիտական հանձնաժողովների կողմից՝ համաձայն «ԵԳՊԱ-ի մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի (Հավելված 68):

ԵԳՊԱ-ն իրականացնում է նաև հետազոտողի կրթական ծրագիր, որի ընդունելությունը կատարվում է «Ասպիրանտուրայի ընդունելության ընթացակարգ»-ի համաձայն (Հավելված 69):

ԵԳՊԱ-ն քայլեր է ձեռնարկում նաև միջազգային ուսանողներին ներգրավելու ուղղությամբ: Օտարերկրյա քաղաքացիների ընդունումն իրականացվում է «ԵԳՊԱ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ»-ի համաձայն (Հավելված 70), որտեղ հստակ ներկայացված են փաստաթղթերը ներկայացնելու և անձնական գործը վարելու ընթացակարգերը:

Բացի վերոնշյալից, ԵԳՊԱ կարող են դիմել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները կրթությունը բուհում շարունակելու նպատակով: ԵԳՊԱ-ն պայմանագիր է կնքել «Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ», «Աբովյանի պետական քոլեջ», «Արմավիրի արվեստի պետական քոլեջ», «Կապանի արվեստի պետական քոլեջ» և «Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, համաձայն որի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները իրենց կրթությունը շարունակում են ԵԳՊԱ-ի համապատասխան մասնագիտությամբ՝ 2-րդ կուրսում (Հավելված 71): Վերոնշյալը նպաստում է ՀՀ կրթական համակարգում շարունակական կրթության գաղափարի իրականացմանը և տարածմանը:

Այսպիսով, վերը նշված փաստաթղթերը ըստ պատշաճի կանոնակարգում են ընդունելության գործընթացը:

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:						
Ուսանողների թիվը		*2012-2013*	*2013-2014*	*2014-2015*	*2015-2016*	*2016-2017*
Բակալավրի	առկա	654	618	603	591	613
Մագիստրոսի	առկա	158	171	112	85	48
Հետզոտողի	առկա	6	6	3	1	
	հեռակա			2	3	4

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:						
Ուսանողների թիվը		*2012-2013*	*2013-2014*	*2014-2015*	*2015-2016*	*2016-2017*
Բակալավրի	առկա	130	124	132	152	136
Մագիստրոսի	առկա	22	18	11	10	13

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղ

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:						
Ուսանողների թիվը		*2012-2013*	*2013-2014*	*2014-2015*	*2015-2016*	*2016-2017*
Բակալավրի	առկա	6	4	5	7	5

Ուսումնառողների շարժունությունը

Ուսումնառողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով

Վերջին 5 տարիների ընթացքում ԵԳՊԱ-ում գրանցվել է 32 ներբուհական տեղափոխություն, իսկ ԵԳՊԱ Գյումրու մասնաճյուղում՝ ներբուհական 2 տեղափոխություն: Միևնույն ժամանակահատվածում ԵԳՊԱ-ից արտահոսք չի գրանցվել, ինչը վկայում է ԵԳՊԱ կրթական ծառայությունների որակի մասին:

ԵԳՊԱ-ն կարևորում է **ընդունվող ուսանողներ/շրջանավարտներ** հարաբերությունը որպես ցուցիչ (տես ստորև աղուսակները): Այս թվերը նույնպես վստահեցնում են, որ ԵԳՊԱ-ից արտահոսք չի լինում: Թվերի անհավասարությունը պայմանավորված է միայն տարեկետման կամ հեռացման/վերականգնման հետ, որի արդյունքում փոքր-ինչ հավասարակշռությունը խախտվում է:

ԸՆԴՈՒՆՄԱՆ և ԱՎԱՐՏԵԼՈՒ ՏԱՐԵԹՎԵՐ (Բակալավրի կրթական ծրագիր)					
	2009-2010/ 2012-2013	2010-2011 /2013-2014	2011-2012/ 2014-2015	2012-2013/ 2015-2016	2013-2014/ 2016-2017
Ընդունված ուսանողների թիվ	194	160	88	159	152
Ավարտած ուսանողների թիվ	170	175	85	148	-
(Մագիստրոսի կրթական ծրագիր)					
	2009-2010/ 2012-2013	2010-2011 /2013-2014	2011-2012/ 2014-2015	2012-2013/ 2015-2016	2013-2014/ 2016-2017
Ընդունված ուսանողների թիվ	53	61	68	67	53
Ավարտած ուսանողների թիվ	44	61	68	65	50
Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ (Բակալավրի կրթական ծրագիր)					
	2009-2010/ 2012-2013	2010-2011 /2013-2014	2011-2012/ 2014-2015	2012-2013/ 2015-2016	2013-2014/ 2016-2017
Ընդունված ուսանողների թիվ	52	35	10	43	41
Ավարտած ուսանողների թիվ	43	24	9	43	-
(Մագիստրոսի կրթական ծրագիր)					
	2009-2010/ 2012-2013	2010-2011 /2013-2014	2011-2012/ 2014-2015	2012-2013/ 2015-2016	2013-2014/ 2016-2017
Ընդունված ուսանողների թիվ	6	11	11	7	5
Ավարտած ուսանողների թիվ	5	12	11	6	5
Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղ (Բակալավրի կրթական ծրագիր)					
	2009-2010/ 2012-2013	2010-2011 /2013-2014	2011-2012/ 2014-2015	2012-2013/ 2015-2016	2013-2014/ 2016-2017
Ընդունված ուսանողների թիվ	6	9	5	6	4

Ավարտած ուսանողների թիվ	7	9	4	6	-

Ուսանողների շարժունության ապահովման նպատակով ԵԳՊԱ-ն 20 տեղական և միջազգային ուսումնական հաստատությունների հետ կնքել է պայմանագրեր (Հավելված 72):

Վերջին 5 տարիներին փոխանակման ծրագրով ԵԳՊԱ 31 ուսանող մեկ կիսամյակով ուսումնառել է արտասահմանյան բուհերում: Նույն ժամանակահատվածում փոխանակման ծրագրով 4 օտարերկրյա ուսանող մեկ կիսամյակով ուսումնառել է ԵԳՊԱ-ում:

Ուսանողների ներհոսք						
	Հաստատություն/երկիր	2012-2013	2013 - 2014	2014-2015	2015-2016	2016-2017
1	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	1	-	1	-	-
2	Երևանի «Հայբուսակ» համալսարան	-	-	1	-	-
3	Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան	-	-	1	-	-
4	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ	-	-	-	1	-
5	Մոսկվայի դիզայնի ազգային ինստիտուտ	-	-	-	1	-
6	Արցախի պետական համալսարան	-	-	-	-	1
7	Սանկտ Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական ակադեմիա	-	-		-	1

Վերլուծել հաստատությունում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների հավաքագրման մեխանիզմների արդյունավետության մասին են վկայում ԵԳՊԱ դիմորդների շրջանում իրականացված հարցման արդյունքերի վերլուծությունը, համաձայն որի՝ դիմորդները ԵԳՊԱ-ի մասին ստանում են համապարփակ տեղեկություն, մասնավորապես ԵԳՊԱ պաշտոնական կայքէջի միջոցով, իսկ տեղեկատվության մակարդակը ԵԳՊԱ թիրախային ոլորտների և գործընթացների վերաբերյալ դիմորդները համարում են «Բավարար» (Հավելված 31):

Կարևորելով ընդունելության գործընթացի որակի գնահատումը՝ ԵԳՊԱ ՈԱ կենտրոնը ուսումնական տարվա սկզբին իրականացնում է հարցումներ առաջին կուրսեցիների շրջանում ընդունելության գործընթացի արդյունավետության վերաբերյալ: Հարցման արդյունքների

վերլուծությունները ցույց են տալիս, որ ԵԳՊԱ ընդունելության գործընթացը արդյունավետ է, լավ կազմակերպված, իսկ գնահատումն անաչառ և համապատասխան նախապես սահմանված գնահատման չափանիշերին (Հավելված 32):

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները և տրամադրել տվյալ խնդիրների լուծման տարբերակները / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ ուսանողների ազատումը և վերականգնումն իրականացվում է «ՀՀ բուհերում հեռացման (ազատման) և վերականգման կարգ»-ի համաձայն (Հավելված 73): Ուսանողը հեռացվում է անհարգելի բացակայությունների, առարկայական պարտքերի և ուսման վարձը չվճարելու պատճառով: Ուսանողը կարող է ազատվել բուհից զինվորական ծառայության մեկնելու կապակցությամբ: Բացի այդ ուսանողը կարող է ազատվել բուհից իր դիմումի համաձայն: Ստորև աղյուսակում ներկայացված են վերջին 5 տարիների հեռացումներն՝ ըստ կատեգորիաների:

ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

ԿԱՏԵԳՈՐԻԱ	Ուսումնական տարի				
	2012-2013	2013-2014	2014-2015	2015-2016	2016-2017
Տարկետում	13	15	4	9	6
Առարկայական պարտք և վարձավճար	19	15	19	17	16
Համաձայն իր դիմումի	8	17	11	16	20
Անհարգելի բացակայություն	6	11	11	5	15
ԸՆԴԱՄԵՆԸ	**46**	**58**	**45**	**47**	**57**

ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԿԱՏԵԳՈՐԻԱ	Ուսումնական տարի				
	2012-2013	2013-2014	2014-2015	2015-2016	2016-2017
Տարկետում	2	3	2	1	-
Առարկայական պարտք և վարձավճար	8	3	5	5	3
Համաձայն իր դիմումի	3	2	6	6	4

Անհարգելի բացակայություն	1	-	-	1	2
ԸՆԴԱՄԵՆԸ	**14**	**8**	**13**	**13**	**9**
ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ					
ԿԱՏԵԳՈՐԻԱ	Ուսումնական տարի				
	2012-2013	2013-2014	2014-2015	2015-2016	2016-2017
Տարկետում	2	_	1	1	
Առարկայական պարտք և վարձավճար	_	_	1	_	_
Համաձայն իր դիմումի	_	_	_	_	_
Անհարգելի բացակայություն	_	_	1	_	1
ԸՆԴԱՄԵՆԸ	**2**	_	**3**	_	**1**

Հարկ է նշել, որ ԵԳՊԱ-ն քայլեր է ձեռնարկում ուսանողների հեռացման ցուցանիշը նվազեցնելու ուղղությամբ՝ միևնույն ժամանակ պահպանելով կրթության որակին ներկայացված պահանջները: ԵԳՊԱ-ում գործում է փոխատեղման և զեղչերի հստակ համակարգ, որը կարգավորվում է «ԵԳՊԱ ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման կարգ» (Հավելված 74) փաստաթղթով: Վերոնշյալը օժանդակում է այն ուսանողներին, որոնք ունեն ֆինանսական խնդիրներ: Բացի այդ, ֆինանսական դժվարություններ ունեցող ուսանողների համար մշակվում է վարձավճարի մարման անհատական ժամանակացույց: Առարկայական պարտքերի դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում 2 լուծարումների/լուծարք ընթացքում վերահանձնել քննություն(ներ)ը:

Եթե ազատված ուսանողը ցանկանում է վերականգնել ուսանողական իրավունքը, ապա վերջինս դիմում է ներկայացնում ռեկտորի անունով: Ուսանողը վերականգնվում է առարկայական պարտքերը հանձնելու և ուսման վարձը վճարելուց հետո:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում մշակվել և ակտիվորեն կիրառվում է ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մշակված քաղաքականություն, ինչպես նաև վերոնշյալ գործընթացների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր	Հավելված 75. ԵԳՊԱ ուսանողական խորհրդի կանոնադրություն և միջոցառումների ցանկ

Վերլուծել ուսանողների կարիքների վերհանման ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել

համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ ուսանողների կարիքների վերհանման կարևոր մեխանիզմ է ուսանողների ներգրավվածությունը բուհի կառավարման տարբեր օղակներում, մասնավորապես՝ ըստ ԵԳՊԱ կանոնադրության (Հավելված 1) կառավարման խորհրդում ուսանողների ներգրավվածությունը կազմում է 25%: Սա հնարավորություն է տալիս ուսանողներին անմիջապես մասնակցել բուհի կառավարման գործընթացին՝ բարձրաձայնելով իրենց կարիքները և պահանջները, ինչպես նաև իրենց կարծիքն արտահայտել ԵԳՊԱ տարբեր գործընթացների վերաբերյալ և մասնակցել որոշումների ընդունմանը:

Ուսանողների կարիքների վերհանման գործում կարևոր դեր է խաղում ԵԳՊԱ ուսանողական խորհուրդը, որը ինքնակառավարման մարմին է, ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող ընտրովի ներկայացուցչական կառույց: Այն կոչված է ապահովելու ուսանողական ինքնավարության և ինքնակառավարման գործընթացները, նպաստելու ուսանողների հասարակական, մշակութային, գիտական, ստեղծագործական, մտավոր, բարոյական և հոգևոր զարգացմանը (Հավելված 75):

Ուսանողների կարիքների վերհանումն իրականացվում է նաև ԵԳՊԱ դասախոսների, մասնավորապես՝ կուրսի ղեկավարների, դեկանատների և ամբիոնների միջոցով: Կուրսի ղեկավարները համակարգում են ուսումնական գործընթացը, հետևաբար ուսանողները ցանկացած հարցով կարող են դիմել ղեկավարին: Սակայն, եթե ուսանողները հարցեր ունեն դասավանդող պրոֆեսորադասախոսական կազմի հետ կապված, վերջիններս կարող են դիմել համապատասխան ամբիոնի վարիչին, որն էլ ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումները: Կազմակերպական ցանկացած հարցով ուսանողները կարող են դիմել կրթական ծրագրի համար պատասխանատու դեկանին:

ԵԳՊԱ ուսանողների կարիքների վերհանման քաղաքականության իրականացման գործընթացում կարևոր է ԵԳՊԱ ՈԱ կենտրոնի դերը, որը շարունակաբար հարցումներ է կատարում ուսանողների շրջանում՝ պարզելու վերջիններիս բավարարվածությունը ուսումնական միջավայրից, ինչպես նաև բացահայտելու ուսանողների կարիքները և պահանջները: 2011 թ. ԵԳՊԱ ՈԱ կենտրոնի կողմից հանդիպումներ և քննարկումներ են կազմակերպվել ռեկտորի, պրոռեկտորի և ուսանողների հետ՝ առկա խնդիրները կարգավորելու նպատակով: Արդյունքում, բարձրացվեցին մի շարք հարցեր, որոնք հիմնականում վերաբերում էին մասնագիտական դասաժամերի ավելացմանը, արվեստանոցներում հավելյալ աշխատելուն, նյութատեխնիկական և այլ խնդիրներին:

ՈԱ կենտրոնը մշակել է ԵԳՊԱ ռեսուրսների և ծառայությունների արդյունավետությունը, դասընթացի արդյունավետությունը (որի շրջանակներում ուսանողները գնահատում են նաև դասախոսի կատարողականը) (Հավելվածներ 33, 34, 35), ուսանողի գնահատման գործընթացի արդյունավետությունը (Հավելված 34) և այլ գործընթացներ գնահատող հարցաթերթեր: Հարցումներն անց են կացվում ըստ համապատասխան կանոնակարգերի, հարցաթերթերն ունեն նկարագրեր, որտեղ հստակ նշված է հարցման նպատակը ըստ ՌԾ-ի, թիրախային խումբը, ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման չափանիշերին համապատասխանությունը, հարցման անցկացման և հաշվետվության հաճախականությունը: Ընդհանուր առմամբ, 2013 – 2016 թթ. հարցումներին մասնակցել են 867 ուսանող:

Հարցման արդյունքները վերլուծվում են ՈԱ կենտրոնում, այնուհետև վերլուծությունը ներկայացվում է համապատասխան ստորաբաժանմանը: Վերհանված կարիքներն ամփոփվում են համապատասխան հարցումների վերլուծություններում, որոնք լրացված հարցաթերթերի հետ միասին պահվում են ՈԱ կենտրոնում: Վերլուծությունների տպագրված տարբերակները

բաժանվում են համապատասխան ամբիոններին և ԵԳՊԱ ուսումնական ստորաբաժանումներին: Հրապարակայնության ապահովման նպատակով վերլուծությունների ամփոփ եզրակացությունները ներկայացված են ԵԳՊԱ պաշտոնական կայքէջի ՈԱ բաժնում: Հետևաբար, ԵԳՊԱ բոլոր շահակիցները ամփոփ տեղեկատվություն կարող են ստանալ բուհում իրականացվող հարցումների վերաբերյալ:

Հարկ է նշել, որ ԵԳՊԱ-ն քայլեր է ձեռնարկում հարցումների արդյունքում վերհանված խնդիրները լուծելու ուղղությամբ: Այսպիսով, ՈԱ հարցումների իրականացման արդյունքում բարձրաձայնվել է լաբորատորիաների վերազինման հարցը: Արդյունքում, վերազինվել են հագուստի մոդալավորման, խեցեգործության, համակարգչային գրաֆիկայի և դիզայնի լաբորատորիաները: Համապատասխան ռեսուրսներով վերազինում իրականացվել է բուհի ֆինանսական միջոցների, ինչպես նաև մի շարք դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ:

«Նոր գնահատման համակարգի արդյունավետություն»-ը գնահատող հարցումն իրականացվեց ուսանողների և դասախոսների շրջանում: Հաշվի առնելով ստացված արձագանքը՝ ԵԳՊԱ գնահատման համակարգը բարելավվեց (Հավելված 59):

Բացի վերոնշյալից, ուսանողների ներգրավվածությունն ապահովելու և նրանց մասնկացությունը որոշումների կայացման ու բարեփոխումների գործընթացներում առավել արդյունավետ դարձնելու համար, ԵԳՊԱ-ն, մասնակցելով ՏԵՄՊՈՒՍ-ի ESPAQ դրամաշնորհային ծրագրին՝ ստեղծել է Ուսանողական համայնք, որն ակտիվորեն մասնակցում է բուհի որակի ապահովման գործընթացներին՝ բարձրացնելով ուսանողներին առավել հուզող հարցերը:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում գործում է ուսանողների կարիքների բացահայտման քաղաքականություն և մեխանիզմներ, որոնք ապահովում են ոչ միայն ուսումնական կարիքների վերհանումը, այլ նաև հնարավորության սահմաններում դրանց բավարարմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Հիմքեր	Հավելված 76. Ֆակուլտատիվ դասընթացների մասնակիցների ցանկ

Պատասխանել հետևյալ հարցին:	%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	100%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	65%	
Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ուսումնառողներին հատկացվու՞մ են խորհրդատուներ:	Այո	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվու՞մ է:		

Վերլուծել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսումնառության գործընթացում ԵԳՊԱ ուսանողները խորհրդատվություն կարող են ստանալ՝

- դասախոսից,
- կուրսի ղեկավարից,
- ամբիոնից,
- դեկանատից:

Պայմանավորված բուհի առանձնահատկությամբ՝ ուսումնառության գործընթացում ուսանողներին հիմնականում խորհրդատվություն է տրամադրում դասախոսը, ինչպես նաև կուրսի ղեկավարը: Ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստում է ամենօրյա ուսանող - դասախոս կապը: Բոլոր դասընթացները իրականացվում են ինտերակտիվ հիմունքներով՝ ուսանողակենտրոն մոտեցմամբ: Ավելին, ԵԳՊԱ-ում ուսուցումը կարելի է անգամ անհատական անվանել, քանի որ ուսանողներին գիտելիքի փոխանցումից հետո տրվում են անհատական առաջադրանքներ՝առաջադրվում են կոնկրետ խնդիրներ/թեմաներ՝ ելնելով ԵԳՊԱ ՄԿԾ-երի կիրառական/գործնական բնույթից: Առաջադրանքի իրականացման ժամանակ դասախոսները յուրաքանչյուր ուսանողի հետ, համակուրսեցիների ներկայությամբ, քննարկում են առաջադրանքների կատարումը, տալիս արձագանք, որը գիտելիքի ձևավորման աղբյուր է ինչպես տվյալ ուսանողի, այնպես էլ համակուրսեցիների համար: Բացի այդ, ավարտական աշխատանք կատարելիս, դասախոսը մշտապես օժանդակում է ուսանողին վերջնիս հետ անհատական հանդիպումների և քննարկումների միջոցով: Խորհրդատվություն ստանալու նպատակով ուսանողները կարող են դիմել համապատասխան ամբիոնի վարիչին, իսկ կազմակենպական հարցերի դեպքում՝ դեկանին: Վերջիններս, իրենց իրավասության շրջանակում տրամադրում են խորհրդատվություն կամ ուղղորդում ուսանողին: Այսպիսով, ԵԳՊԱ ուսանողները հնարավորություն ունեն անմիջական խորհրդատվություն ստանալ ցանկացած հարցի շուրջ:

Ուսանողների հմտությունները և կարողությունները զարգացնելու նպատակով ԵԳՊԱ-ն կազմակերպում է նաև լրացուցիչ պարապմունքներ: Բուհում կազմակերպվում են անգլերեն, իտալերեն, ֆրանսերեն, ռուսերեն և հայերեն (վերջին 2-ը նախատեսված է սփյուռքահայերի և օտարերկրացի ուսանողների համար) պարապմունքներ՝ անվճար հիմունքներով: Օտար լեզուների ընտրությունը պայմանավորված է վերջիններիս տարածվածությամբ և անհրաժեշտությամբ՝ թե՛ աշխատանքի անցնելու և թե՛ ուսումն արտերկրում շարունակելու հանգամանքով: Ընդհանուր առմամբ, 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում պարապմունքներին մասնակցել է 150 ուսանող, որը կազմում է ԵԳՊԱ ուսանողության 21.55% (Հավելված 76):

Բացի լսարանային պարապմունքներից, ԵԳՊԱ-ում կազմակերպվում են նաև ՀՀ և օտարերկրացի լավագույն մասնագետների վարպետաց դասեր, սեմինարներ, որոնց շրջանակներում ոլորտի մասնագետներն իրենց փորձն են փոխանցում ուսանողներին: Օտարերկրացի մասնագետների վարպետաց դասերի շնորհիվ ուսանողները ծանոթանում են նաև նոր մշակույթի: Անդրադառնալով վերջին միջոցառումներին, նշենք, որ 2017 թվականին Ճապոնիայի դեսպանատան հետ համատեղ իրականացվեց վարպետաց դասեր: Երկու օր իկեբանայի եւ սումիէ գեղանկարչության վարպետության դասեր անցկացրին Ճապոնիայից ժամանած պրոֆեսոր Միդորի Յամադան եւ նրան աշակերտած մոսկվայաբնակ Օլգա Սալիվանովան: 2016 թվականին Իտալիայից հրավիրյալ դասախոսը վարպետաց դաս անցկացրեց ԵԳՊԱ ուսանողների համար:

Հետազոտական կենտրոնը բարձր կուրսի ուսանողներին օգնում է ավարտական թեզերի թեմաների ընտրության հարցում, ինչպես նաև ուղղորդում աշխատանքի կառուցվածքի վերաբերյալ, տրամադրում է համապատասխան գրականություն՝ կենտրոնին կից հետազոտական գրադարանից: Կենտրոնը կազմակերպում է արտալսարանային սեմինար-քննարկումներ, որոնց ընթացքում ուսանողները ներկայացնում են զեկույց իրենց կատարած հետազոտության վերաբերյալ: Հաջողված և գրախոսված գիտական հոդվածները անվճար հիմունքներով տպագրվում են ԵԳՊԱ «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածուում:

Կարևոր է նաև ԵԳՊԱ Կարիերայի կենտրոնի դերը, որն ուղղորդում է ուսանողներին աշխատաշուկայում ներկայանալու գործընթացում, ապահովում է կապը շրջանավարտների և գործատուների միջև, կազմակերպում է սեմինարներ (գործատուին ներկայանալու, մոտիվացիոն նամակի և այլնի վերաբերյալ) (Հավելված 44):

ESPAQ ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ում ստեղծված որակի ապահովման ուսանողական համայնքի հետ Ուսումնական վարչությունը և ՈԱ կենտրոնը համատեղ քննարկումներ են կազմակերպում որակի ներքին ապահովման վերաբերյալ, իրականացվում են վերապատրաստումներ տարբեր թեմաներով՝ որն է ուսանողի դերը որակի ապահովման գործընթացում, որակի ապահովման ինչպիսի գործընթացներ են իրականացվում բուհում և որն է ուսանողների դերը այդ գործընթացներում, ինչպես կազմել հարցաթերթեր և իրականացնել հարցումներ և այլն:

Ուսանողական խորհուրդը ուսանողների համար կազմակերպում է միջոցառումներ՝ այլ բուհերի հետ համատեղ ցուցահանդեսներ, էքսկուրսիաներ, պլեներներ, որոնց շրջանակներում ուսանողները իրականացնում են փորձի փոխանակում ոչ ֆորմալ միջավայրում: Դրանց կազմակերպման համար ֆինանսական աջակցություն է ցուցաբերում ԵԳՊԱ-ն:
զբաղվածության ապահովումը:

Այսպիսով, ուսանողների հնարավորինս արդյունավետ ուսումնառությունը ապահովելու նպատակով ԵԳՊԱ-ն կազմակերպում է լրացուցիչ (արտալսարանային) պարապմունքներ, վարպետաց դասեր, պարապմունք- խորհրդատվություններ, ոչ ֆորմալ հանդիպումներ, որոնք նպաստում են ուսանողների մոտ հմտությունների և կարողությունների ձևավորմանը՝ խթանելով վերջիններիս մասնագիտական ոլորտում զբաղվածության ապահովումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:	
Հիմքեր	Հավելված 77. Ուսանողների շրջանում կատարված Ֆոկուս խմբերի վերլուծություն

Պատասխանել հետևյալ հարցին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	100%
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	21.55% (ֆակուլտատիվ դասընթացներ)
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	61.5%

Վերլուծել լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողներն իրենց տրամադրվող աջակցության մասին կարող են տեղեկանալ ինչպես ԵԳՊԱ պաշտոնական կայքէջից, ուսանողի ձեռնարկից, այնպես էլ անմիջապես դիմելով համապատասխան ստորաբաժանմանը: Ուսանողներին վարչական օժանդակություն են տրամադրում հետևյալ ստորաբաժանումները.

- Դեկանատներ
- Ամբիոններ
- Ուսումնական վարչություն
- Մարդկային ռեսուրսների բաժին
- Հաշվապահություն
- Արտաքին կապերի բաժին
- Կարիերայի կենտրոն
- «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահ
- Հետազոտական կենտրոն
- Որակի ապահովման կենտրոն
- Ուսանողական խորհուրդ
- Գրադարան
- Բուժկետ

Ուսանողներն իրենց հուզող հարցերով դիմում են համապատասխան ֆակուլտետի դեկանին, որը կազմակերպում և վերահսկում է ֆակուլտետի գործունեությունը կրթական, գիտական, ստեղծագործական, միջազգային և այլ ոլորտներում: Դեկանատի գործառույթների մեջ է մտնում իր լիազորությունների շրջանակում վարչական օժանդակություն տրամադրել ուսանողին կամ ուղղորդել վերջինիս՝ վարչական կամ ակադեմիական խորհրդատվություն ստանալու նպատակով համապատասխան ստորաբաժանմանը դիմելու համար:

Ուսանողներին խորհրդատվություն է տրամադրում ԵԳՊԱ ՈՒսումնական վարչությունը, որն իր գործառույթների շրջանակներում տեղեկատվություն է տրամադրում ընդունելության, ուսման վարձի զեղչի, ռոտացիայի, ընթացիկ գնահատականների, տեղափոխությունների, հեռացման և վերականգման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող կարգերի և այլնի վերաբերյալ: Ուսանողներին օժանդակում են նաև հաշվապահությունը և Մարդկային ռեսուրսների բաժինը: (տեղեկանքներ և այլ):

ԵԳՊԱ Արտաքին կապերի բաժինը աջակցում է (տեղեկատվություն, փաստաթղթերի փաթեթի կազմում, այլ) ուսանողներին փոխանակման ծրագրերով այլ բուհերում ուսումը շարունակելու կամ ուսումնական կարճատև այցեր կատարելու գործընթացներում: Արտաքին կապերի բաժինը ուսանողներին տրամադրում է լրացուցիչ աջակցություն՝ համագործակցող բուհերի հետ կազմակերպում է համատեղ պլեներներ, գիտաժողովներ, վարպետաց դասեր, ցուցահանդեսներ: ԵԳՊԱ միջազգային բաժինը պարբերաբար խորհրդատվություն և աջակցություն է տրամադրում նաև միջազգային ուսանողներին թե՛ բուհ ընդունվելիս և թե՛ ուսումնական գործընթացին ներգրավվելու ուղղությամբ:

Աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու գործում ԵԳՊԱ ուսանողներին ուղղորդում է Կարիերայի կենտրոնը, որն ապահովում է կապը շրջանավարտների և գործատուների միջև, շարունակաբար կայքում տեղադրում աշխատանքի հայտարարություններ, ինչպես նաև կազմակերպում սեմինարներ:

ԵԳՊԱ- ում գործում է ցուցասրահ, որն ուսանողներին հնարավորություն է ընձեռում անվճար հիմունքներով ցուցադրություններ կազմակերպել, իսկ «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածուում ուսանողները կարող են հրապարակել իրենց գրախոսված գիտական աշխատությունները՝ կրկին անվճար հիմունքներով: Այս գործում ուսանողներին օժանդակում է ԵԳՊԱ հետազոտական կենտրոնը:

Հարկ է նշել, որ ԵԳՊԱ ՈԱ կենտրոնը նույնպես օժանդակում է ուսանողներին՝ բարձրաձայնելու վերջիններիս կարիքները և պահանջները: ՈԱ կենտրոնը ԵԳՊԱ գործընթացներին ուսանողներին առավելագույնս ներգրավվելու համար իրականացնում է հարցումներ, կազմակերպում քննարկումներ՝ հնարավորություն է ընձեռում ուսանողներին իրենց կարծիքներն արտահայտելու: Կենտրոնի կողմից իրականացված հարցումների արդյունքում իրականացվել են մի շարք բարելավումներ ի նպաստ ուսանողների:

ESPAQ ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ում ստեղծվել է որակի ապահովման ուսանողական համայնք, որին համապատասխան ուղղորդում և խորհրդատվություն է տրամադրում ինչպես ԵԳՊԱ ՈԱ կենտրոնը, այնպես էլ Ուսումնական վարչությունը:

Ուսանողները աջակցություն և օժանդակություն են ստանում նաև ԵԳՊԱ ուսանողական խորհրդի կողմից, որը ոչ միայն խորհրդատվություն է տրամադրում ուսանողներին, այլ նաև ԵԳՊԱ ուսանողների իրավունքները և շահերը պաշտպանող ինքնակառավարման մարմին է: Վերջինս մշտապես բարձրաձայնում է ուսանողների ուսումնական կարիքները և պահանջները (Հավելված 75): Ուսանողական խորհրդի աջակցությամբ ԵԳՊԱ ուսանողներին Երիտասարդական հիմնադրամը ֆինանսական աջակցություն է տրամադրում՝ վարձավճարի մասնակի փոխհատուցման նպատակով:

ԵԳՊԱ-ում գործում է գրադարան, որը, թեև պարբերաբար համալրվում է նոր գրականությամբ, բայց դեռևս չի բավարարում ողջ ուսանողական համակազմին: 2017 թ. նախատեսվում է գրադարանի թվայնացում և հասանելիություն KOHA գրադարանային ցանցին:

ԵԳՊԱ-ում գործում է բուժօգնության կետ, որն ապահովված է առաջին օգնության դեղորայքով և պարագաներով:

Նշենք, որ ԵԳՊԱ ուսանողները տեղեկացված և բավարարված են վարչական օժանդակության մեխանիզմներից, որի մասին են վկայում ԵԳՊԱ-ում ուսանողների շրջանում անցկացվող ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության վերաբերյալ գնահատումների արդյունքները (Հավելված 35), ինչպես նաև Ուսանողական խորհրդի կողմից ստացված արձագանքը: 2014 թ. փետրվար ամսին ԵԳՊԱ ուսանողների հետ կազմակերպված ֆոկուս խմբի արդյունքում պարզ դարձավ, որ վարչական կազմին դիմած բոլոր ուսանողները ստացել են սպառիչ խորհրդատվություն (Հավելված 77): Նշենք, որ ուսանողները վարչական անձնակազմին կարող են դիմել ցանկացած ժամանակ, քանի որ բուհում չկա հստակ սահմանված ժամանակացույց, իսկ վարչական անձնակազմը պատրաստակամ է համապատասխան օժանդակություն տրամադրել ուսանողներին:

Այսպիսով, ԵԳՊԱ վարչական անձնակազմը հարկ եղած դեպքում օժանդակում և ուղղորդում է ուսանողներին՝ ապահովելով նպաստավոր կրթական միջավայր, որն էլ իր հերթին նպաստում է ուսանողի կրթական գործընթացի առավել դյուրին և արդյունավետ իրականացմանը: Բուհն արժևորում է օժանդակություն և ուղղորդում տրամադրելու մեխանիզմների արդյունավետության գնահատումը, ինչի նպատակով շարունակաբար հարցումներ է իրականացվում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հիմքեր	Հավելված 78. Պրակտիկայի կազմակերպությունների ցուցակ Հավելված 79. Կարիերայի կենտրոնի միջոցառումների ցուցակ

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	48%
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	27%
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	83.3%

Վերլուծել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ն կարևորում է ուսանողների, ինչպես նաև շրջանավարտների մասնագիտական ոլորտում զբաղվածության ապահովումը, ուստի շարունակաբար քայլեր է ձեռնարկում ուսանող- գործատու կապը ամրապնդելու ուղղությամբ: Մասնավորապես՝

- պրակտիկ ոլորտում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմ,
- ուսանողների պրակտիկայի կազմակերպում ոլորտի լավագույն կազմակերպություններում,
- ավարտական աշխատանքների ցուցադրմանը գործարար ոլորտի ներկայացուցիչների ներգրավում,
- Կարիերայի կենտրոնի ստեղծում

Ուսանողների կարիերային նպաստելու նպատակով ԵԳՊԱ-ն շարունակաբար համալրում իր անձնակազմը մասնագիտական ոլորտում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմով՝ ապահովելով վերջիններիս անմիջական շփումն ու համագործակցումը ուսանողների հետ: Բացի այդ, ԵԳՊԱ ուսանողները պրակտիկա են անցնում ոլորտի լավագույն կազմակերպություններում, որտեղ էլ շատերը շարունակում են իրենց աշխատանքը (Հավելված 78): Ուսանողների և գործատուների միջև կապն ամրապնդելու նպատակով ԵԳՊԱ-ն հրավիրում է նաև գործատուներին՝ հնարավորություն ստեղծելով ուսանողների և գործատուների անմիջական հաղորդակցման համար:

2013 թվականից ԵԳՊԱ-ում գործում է Կարիերայի կենտրոնը, որը կոչված է աջակցելու ԵԳՊԱ ուսանողներին/շրջանավարտներին մասնագիտական կողմնորոշման, աշխատաշուկայում վերջիններիս մրցունակության բարձրացման, շրջանավարտների և բուհի միջև կապի ու համագործակցության զարգացմանը: Կենտրոնն իրականացնում է աշխատաշուկայի ուսումնասիրություն, ուսանողների աշխատանքի տեղավորման և խորհրդատվական ծառայություններ, տվյալների հավաքագրման մեխանիզմների մշակում, տվյալների բազայի ընդլայնում, տվյալների նախնական վերլուծություն, խորհրդատվություն ուսանողների հետագա կարիերայի վերաբերյալ, շրջանավարտների և գործատուների հետ կապի հաստատում, աշխատաշուկայում ԵԳՊԱ-ում իրականացվող ՄԿԾ-երի ներկայացում՝ տարբեր լրատվական միջոցներով: Կենտրոնը նաև շնորհանդեսներ է կազմակերպում ավագ դպրոցներում, ներկայացնում ԵԳՊԱ-ն՝ դիմորդներ ներգրավելու համար: Կարիերայի կենտրոնը ՈԱ կենտրոնի հետ համատեղ մշակում է մեխանիզմներ գործատուների հետ շարունակական կապը պահպանելու նպատակով ինչպես ուսանողներին/շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու, այնպես էլ ՄԿԾ-երի վերանայման գործընթացում գործատուներին ներգրավելու համար:

Կենտրոնը շարունակաբար իրականացնում է միջոցառումներ՝ նպատակաուղղված ԵԳՊԱ ուսանողների/շրջանավարտների մասնագիտական ոլորտում զբաղվածության ապահովմանը: Այսպիսով, Կարիերայի կենտրոնը՝

- կազմակերպում է դասընթացներ (Հավելված 79)՝ զարգացնելու ուսանողի ոչ մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները: Վերջիններս օժանդակում են ուսանողներին մուտք գործել աշխատաշուկա, ճիշտ ներկայանալ գործատուին, ինչպես նաև նպաստում են կարիերայի աճին:
- Աշխատանքի հայտարարությունների, կամավորական ու կրթական ծրագրերի, կազմակերպվելիք միջոցառումների, ինչպես նաև ոլորտի նորությունների մասին տեղեկատվություն է տեղադրում ԵԳՊԱ պաշտոնական կայքէջում, բուհի և Կարիերայի կենտրոնի ֆեյսբուքյան էջերում: Ավելին, կենտրոնը ստեղծել է ուսանողների/շրջանավարտների էլեկտրոնային հասցեների բազա և վերոնշյալ տեղեկատվությունը ուղղարկվում է ուսանողների/շրջանավարտների էլեկտրոնային հասցեներին:

ԵԳՊԱ ուսանողների/շրջանավարտների կարիերային նպաստելու ևս մեկ քայլ եղավ HEN - GEAR հարթակի ներմուծումը և կիրառումը: Դրա շահագործումը բուհի կողմից հետապնդում է երկու հիմնական նպատակ. պարբերաբար կատարել ԵԳՊԱ գործունեության մասին շրջանավարտների կարծիքի հավաքագրումը, վերլուծությունը և հրապարակումը, ինչպես նաև ստեղծել շրջանավարտների և գործատուների միջև անմիջական կապ հարթակում աշխատանքային հնարավորությունների և շրջանավարտների ինքնակենսագրությունների տեղադրման միջոցով: Այսպիսով, հարթակը հնարավորություն է տալիս

- ուսանողներին գրանցվել ու ստեղծել սեփական էջը, անձնական տվյալները լրացնելուց հետո ունենալ ինքնակենսագրություն (CV), ինչպես նաև շարունակաբար թարմացնել այն,
- անմիջական կապի մեջ լինել գուրծատուների հետ, որոնք, գրանցվելով հարթակում, հնարավորություն ունեն տեղադրել աշխատանքի հայտարարություններ և ըստ իրենց անհրաժեշտ չափորոշիչների ընտրել ապագա աշխատակիցներ:

Հարկ է նշել, որ ԵԳՊԱ-ն կարևորում է նաև շրջանավարտներին, ուստի քայլեր է ձեռնարկում վերջիններիս հետ կապն ամրապնդելու և նրանց զբաղվածության խնդիրներն ուսումնասիրելու ուղղությամբ: Այդ նպատակով, Կարիերայի կենտրոնը ՈԱ կենտրոնի նախաձեռնությամբ իրականացրեց հեռախոսային հարցում 2014 և 2015թթ. շրջանավարտների հետ՝ պարզելու վերջիններիս զբաղվածության մակարդակը

Արժևորելով ուսանողների արձագանքը, ինչպես նաև կատարված միջոցառումների արդյունավետության գնահատումը՝ Կարիերայի կենտրոնը 2015-2016 ուսումնական տարվա ավարտին «Ուսանողների տեղեկացվածության մակարդակը կարիերային նպաստող ծառայությունների վերաբերյալ» թեմայով հետազոտություն իրականացրեց ուսանողների շրջանում, ինչի արդյունքում արձանագրվեց, որ Կարիերայի կենտրոնի ծառայություններից օգտվող ուսանողների 83.3% բավարարված է կենտրոնի տրամադրած ծառայություններից (Հավելված 45): Կենտրոնը մտադիր է նմանատիպ հարցում իրականացնել նաև 2016-2017 ուսումնական տարվա շրջանավարտների շրջանում:

Կենտրոնի կատարված աշխատանքների արդյունավետության մշտադիտարկումն ու գնահատումը իրականացվում է նաև եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացման և հետադարձ կապի հիման վրա բարելավումների իրականացման միջոցով:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն իրականացնում է ուսանողների, ինչպես նաև շրջանավարտների կարիերային նպատակաուղղված ծառայություններ, որոնց արդյունավետությունը ստուգվում է հիմնական շահակիցների, այն է՝ ուսանողների միջոցով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Հիմքեր	

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի

	Ուսումնառողներ	*2012-2013*	*2013-2014*	*2014-2015*	*2015-2016*	*2016-2017*
	Բակալավր					1
	Մագիստրոս			1	2	2
	Հետազոտող				4	2

Ուսումնառողների հեղինակությանբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը

	Տպագրված աշխատանք	*2012-2013*	*2013-2014*	*2014-2015*	*2015-2016*	*2016-2017*
1	Գիտական հոդվածներ ՀՀ գիտական ժողովածուներում	9	7	10	8	3

2	Գիտաժողովների թեզիսներ	2	2	3	5	2
3	Միջազգային գիտական ժողովածուներ		1		1	

Վերլուծել հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Կարևորելով հետազոտական ոլորտի զարգացումը և ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում՝ ԵԳՊԱ-ն իրականացրել է մի շարք գործողություններ, որոնք նախատեսված էին 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրով (Հավելված 2): Գործընթացը բուհում համակարգում է ուսումնագիտական գծով պրոռեկտորը, իսկ նորաստեղծ հետազոտական կենտրոնը և թողարկող ամբիոնները պատասխանու են բովանդակային բարեփոխումների համար: Ավելին, բուհը քայլեր է ձեռնարկել հետազոտությունը դասավանդմանը փոխկապակցելու ուղղությամբ: Մինչ այժմ ԵԳՊԱ-ում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունն ապահովելու, ինչպես նաև բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչը մեծացնելու նպատակով ԵԳՊԱ-ում իրականացվող բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքներին հատկացվել են կրեդիտներ: Բակալավրի կրթական ծրագրերում հետազոտություն իրականացնելու և ավարտական աշխատանք պատրաստելու համար հատկացվել է 26 կրեդիտ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրերում՝ 60 կրեդիտ: Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ապահովման համար պատասխանատու են թողարկող ամբիոնը և ուսումնական վարչությունը:
- Ուսանողների հետազոտական գործունեության ուղղորդման համար 2014թ. մշակվել և կիրառության է դրվել ԵԳՊԱ բակալավրի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց, որում ընդհանրացվել են աշխատանքներին ներկայացվող պահանջները (Հավելված 62): Ուսանողները, ավարտական աշխատանքները գրելիս, օգտվում են ուղեցույցից, որը նրանց հետազոտական գործունեությունը առավել համակարգված և թիրախային է դարձնում: Որպես խրախուսանք լավագույն մագիստրոսական թեզերը հոդվածի տեսքով տպագրվում են ԵԳՊԱ-ի գիտական հանդեսում՝ «Տարեգրքում»՝ անվճար հիմունքներով: Ավելին, ուսանողների մոտ հետազոտական հմտությունների զարգացման նպատակով ԵԳՊԱ-ում դասավանդում են հետատազոտության ներածություն, հետազոտության մեթոդներ և ստեղծագործական վերլուծություն առարկաները:
- Ելնելով իրականացվող մասնագիտությունների յուրահատկություններից՝ կիրառական ուղղվածություն ունեցող մասնագիտություններում (ինչպիսիք են՝ «Դիզայն», «Կիրառական արվեստ» և այլն) մասնագիտական առարկաները նույնպես ներառում են հետազոտական բաղադրիչ: Վերջինիս նպատակն է նյութերի և գործիքների ճանաչողության խորացումը, մասնագիտական

վարպետության հոկումը, գեղարվեստական միջոցների յուրացումն ու զարգացումը, ստեղծագործական երևակայության խթանումը և այս ամբողջի ուսումնասիրությունը գեղարվեստական գործընթացի համատեքստում: Օրինակ, որևիցե նոր իր նախագծելիս կամ այլ խնդիր լուծելիս՝ ուսանողի հանձնարարության մաս է նմանատիպ արդեն գոյություն ունեցող իրերի և դրանց պարամետրերի հետազոտումը:

- Տեսական ուղղվածություն ունեցող մասնագիտություններում (ինչպիսին է՝ «Արվեստաբանությունը») ներառված է հատուկ դասընթացների շարք, որոնց սահմաններում ուսանողներին ներկայացվում են ԵԳՊԱ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները՝ վերջիններիս ներգրավելով գիտահետազոտական աշխատանքներում: Այդ դասընթացները հաճախ փոփոխվում են և նախատեսված են հետազոտություններ իրականացնող դասախոսների ընթացիկ հետազոտական աշխատանքի արդյունքները դասավանդման միջոցով ներկայացնելու համար:
- Տեսական ուղղվածությամբ կրթական ծրագրերում իրականացվում է գիտական-տեսական հետազոտություն, որի նպատակն է ուսումնասիրել արվեստի ստեղծագործությունները և արվեստաբանական ու հումանիտար մտքի զարգացումը պատմական գործընթացում: Նման հետազոտության շրջանակներում ուսանողներն ուսումնասիրում են գեղարվեստական փաստերը, դրանց ստեղծման բովանդակային, ոճական և ձևային օրինաչափությունները և այլն:
- ԵԳՊԱ հետազոտական գործունեության բարելավման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավման հիմնաքարերից է VERITAS դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում ոչ միայն վերանայվեց հետազոտողի ծրագիրը՝ համապատասխան Զալցբուրգյան սկզբունքներին, այլ նաև ստեղծվեց ԵԳՊԱ Հետազոտական կենտրոնը, որի նպատակն է համակարգել բուհում կատարվող հետազոտական աշխատանքը, մշակել ու իրականացնել գիտահետազոտական ծրագրեր՝ ընդգրկելով ոչ միայն պրոֆեսորադասախոսական կազմին, այլ նաև մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերի ուսանողներին, կապեր հաստատել և համագործակցել տեղական և միջազգային հետազոտական կենտրոնների ու հաստատությունների հետ, նպաստել ԵԳՊԱ- ի հետազոտական աշխատանքի միջազգայնացմանը, աջակցել ասպիրանտի՝ որպես երիտասարդ հետազոտողի կայացմանը: Կենտրոնին կից գործում է հետազոտական գրադարան, որտեղ ուսանողները կարող են գտնել անհրաժեշտ գրականություն ավարտական և դիպլոմային աշխատանքների համար:
- Հետազոտական կենտրոնը մշակել է մանրամասն և թիրախավորված ռազմավարական ծրագիր՝ հետազոտության համար և սահմանել է արվեստի տեսական ոլորտում բուհում կիրառվելիք հետազոտական ուղղությունները առաջիկա հինգ տարիների համար: Այդ ուղղությունները սահմանվել են՝ հաշվի առնելով բուհի մարդկային և նյութական ռեսուրսները, միջազգային մակարդակով արվեստի հետազոտության ոլորտում արդի իրավիճակը, ժամանակակից խնդիրները, զարգացման միտումները, մրցակցություն ապահովող ոլորտներն ու թեմաները, ինչպես նաև տեղական պահանջարկը:
- Հետազոտական կենտրոնը, ստեղծագործական ամբիոնների հետ համատեղ Կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտների համար

Հայաստանում առաջին անգամ մշակել է հետազոտության ուղղություններ, սահմանել է զարգացման միտումները և ընտրել է թեմաներ, որոնք պետք է ապահովեն բուհի առաքելության իրականացումը հետազոտության ոլորտում և տեղական ու միջազգային մակարդակով մրցունակության բարձրացումը:

- Հետազոտական կենտրոնը պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ՝ հանդիպումներ, բանախոսություններ, զեկույց-քննարկումներ, թեմատիկ ելույթներ, ճանաչողական ճամփորդությունների հաղորդումներ ինչպես բուհի դասախոսների և ուսանողների, այնպես էլ օտարերկրյա մասնագետների և հրավիրյալ դասախոսների մասնակցությամբ:
- Հետազոտողի կրթական ծրագրի ուսանողներն իրենց կատարած հետազոտությունների արդյունքները ներկայացնում են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին՝ վերջիններիս ներգրավելով գիտահետազոտական աշխատանքների իրականացման գործընթացում:
- Հետազոտողի կրթական ծրագրի ուսանողների հեղինակած գիտական հոդվածները ցածր կուրսերի ուսանողների համար երբեմն դառնում են անհրաժեշտ գրականություն: Բացի այդ, ԵԳՊԱ-ում իրականացված հետազոտությունների արդյունքները հաճախ դառնում են մեթոդական ուղեցույցեր և գրքեր: Վերջին տարիներին հրապարակվել են «Հայ կերպարվեստի պատմություն» և «Հայ մանրանկարչության պատմություն» դասագրքերը, ինչպես նաև 12 ուսումնամեթոդական ձեռնարկ՝ երաշխավորված ԵԳՊԱ Գիտական խորհրդի և ընդունված ՀՀ ԲՈՀ-ի կողմից:

Հարկ է նշել, որ գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ԵԳՊԱ-ն նախատեսում է ներդնել ներբուհական գրանտային ծրագրեր, որը կնպաստի նաև հետազոտության ոլորտում ուսանող-դասախոս համագործակցության ամրապնդմանը:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում գործում են գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովման մեխանիզմներ, որոնք շարունակաբար բարելավվում են : Հետամուտ լինելով արդեն իրականացված միջոցառումներին՝ ԵԳՊԱ-ն իր հետագա գործողություններում ևս կարևորել է գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության մակարդակի բարձրացումը և հետազոտության զարգացումը՝ հատկապես դասավանման և հետազոտության փոխկապակցումը, որը և սահմանված է 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Հիմքեր	Հավելված 80. Ուսանողի հետ կնքվող պայմանագիր

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների որ տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:	100%
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:	73%

Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	71%

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության տարբեր մեխանիզմներ: Ուսանողների իրավունքները ամրագրված են ԵԳՊԱ կանոնադրությամբ (Հավելված 1), որը բուհի գործունեության հիմնադիր փաստաթղթերից է: Ուսանողների իրավունքների պաշտպանության կարևոր փաստաթուղթ է նաև ուսանողի և բուհի միջև կնքվող պայմանագիրը, որտեղ հստակ նշվում են ինչպես ԵԳՊԱ պարտավորություններն ու իրավունքները, այնպես էլ ուսանողի պարտավորություններն ու իրավունքները (Հավելված 80): Բացի այդ, ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգում (Հավելված 27) նույնպես անդրադարձ է կատավում ուսանողների իրավունքներին: ԵԳՊԱ կանոնադրությունը, պայմանագիրը, ինչպես նաև ներքին կարգապահական կանոնակարգը իրավական ուժ ունեն, ուստի այնտեղ տեղ գտած դրույթները խախտելու դեպքում կողմը ենթարկվում է պատասխանատվության:

Բացի փաստաթղթային հենքից, ԵԳՊԱ-ում գործում է նաև Ուսանողական խորհուրդ, որն էլ ուսանողներին միավորող, նրանց շահերն ու իրավունքները պաշտպանող ընտրովի ներկայացուցչական կառույց է: Ուսանողական խորհրդի լիազարություններն ու պարտականությունները սահմանված են ԵԳՊԱ և իրենց կանոնադրությամբ (Հավելված 75):

ԵԳՊԱ Ուսանողական խորհուրդն ապահովում է ուսանողական ինքնավարությունը, ուսանողների մասնակցությունը բուհի կառավարմանը (ԵԳՊԱ կառավարման մարմիններում ուսանողները կազմում են 25%), բացահայտում և բարձրաձայնում է ուսանողների կարիքներն ու պահանջները, ինչպես նաև կառավարման համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր: Անդամակցելով ռոտացիայի և մասնակի զեղչերի հանձնաժողովներին՝ ուսանողական խորհուրդը միջնորդում է բարձր առաջադիմությամբ կամ անապահով ուսանողների վարձավճարների մասնակի զեղչի համար, կազմակերպում է ցուցահանդեսներ՝ մրցանակաբաշխությամբ և այլն: Խորհուրդը նպաստում է նաև ուսանողների հասարակական, ստեղծագործական, մշակութային, գիտական և հոգևոր զարգացմանը, ստեղծում կապեր ՀՀ և արտերկրի բուհերի, գիտական, կրթական և այլ կազմակերպությունների հետ:

Մեծ է ուսանողական խորհրդի դերը ուսանող-բուհ հարաբերություններում կոնֆլիկտների լուծման գործում. Օրինակ, երբ ծրագրային անճշտությունների պատճառով ռոտացիան ավելի ուշ իրականացվեց, քան մասնակի զեղչերի քննարկումները, հետևաբար ռոտացիայի արդյունքում անվճար տեղերը կորցրած ուսանողները չհասցրին դիմել մասնակի զեղչերի համար, ՈՒԽ-ի միջամտությամբ կրկին նիստ հրավիրվեց և ուսանողների դիմումները բավարարվեցին: ԵԳՊԱ ուսանողական խորհուրդն իր լիազորությունների շրջանակում փորձում է նաև ֆինանսական հարցերում օժանդակել ուսանողներին: Երբ ուսանողները չեն կարողանում ժամանակին վճարել ուսման վարձը, ՈՒԽ-ի միջնորդությամբ նրանց համար սահմանվում է վարձի մարման անհատական ժամանակացույց: Բացի այդ, ուսանողական խորհրդի միջնորդությամբ Երիտասարդական հիմնադրամը ֆինանսական աջակցություն է տրամադրում ԵԳՊԱ ուսանողներին:

ԵԳՊԱ ուսանողական խորհրդի կատարված աշխատանքների և ուսանողների մատուցած ծառայությունների արդյունավետության վերաբերյալ ԵԳՊԱ ՈԱ կենտրոնը իրականացրել է ֆոկուս խումբ (Հավելված 77) ուսանողների շրջանում, որի արդյունքները չեն բացահայտել դժգոհությունների ՈՒԽ գործունեության վերաբերյալ, սակայն առաջարկ ներկայացվեց Ուս. խորհրդին չսահմանափակվել միայն ակտիվ ուսանողներ ներգրավելով, այլ ընդլայնել ուսանողական համակազմի մասնակցությունը ՈՒԽ գործունեությանը:

Այսպիսով, կարևորելով ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ԵԳՊԱ-ն վերջիններիս իրավունքներն ամրագրել է հիմնադիր փաստաթղթերում, ինչպես նաև ստեղծել ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, որի գործունեության արդյունավետության մասին են վկայում ուսանողների շրջանում կատարված հարցումների արդյունքները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Հիմքեր	

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ն կարևորում է ոչ միայն ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցումը, այլ նաև դրանց արդյունավետության գնահատումը և որակի ապահովման մեխանիզմների մշակումն ու կիրառումը:

Բուհի ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և որակի ապահովման կարևոր մեխանիզմներից է ԵՊԳԱ ՈԱ կենտրոնի կողմից շարունակաբար իրականացվող հարցումները.

- **«ԵԳՊԱ ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում», գ**ործիքը իրենից ներկայացնում է հարցաթերթ, որում ներառված հարցերը վերաբերում են՝
  - մասնագիտական և վարչական խորհրդատվությանը,
  - գրադարանի ծառայություններին,
  - սանիտարահիգիենիկ պայմաններին,
  - լաբորատորիաներ, արվեստանոցների, լսարանների հագեցվածությանը
  - բուժկետին
  - դասընթացների շրջանակներում կիրառվող ՏՀՏ-ներին և այլ:

Ուսանողները հնարավորություն ունեն ներկայացնել իրենց առաջարկները՝ միտված ԵԳՊԱ ռեսուրսների և ծառայությունների բարելավմանը: Հարցումն իրականացվում է՝ համաձայն ժամանակացույցի (ԵԳՊԱ ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում իրականացվում է նաև ԵԳՊԱ-ի ՊԴ կազմի շրջանում): Հարցման արդյունքները ներկայացվում են վարչական կազմին փոփոխություններ իրականացնելու նպատակով:

- **«Դասընթացի արդյունավետության գնահատում»** գործիքը կիրառվում է ԵԳՊԱ բոլոր ՄԿԾ-երի ուսանողների շրջանում: Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր տարի: Հարցաթերթը բաղկացած է երկու մասից. առաջինը վերաբերում է դասընթացին, իսկ երկրորդը՝ դասավանդողի մեթոդաբանությանը և մասնագիտական կարողություններին: Հարցման արդյունքները վերլուծվում են ՈԱ կենտրոնում և ներկայացվում համապատասխան ամբիոնի վարիչին, ինչպես նաև ուսումնագիտական գծով

պրոռեկտորին: Ամբիոնի վարիչին ներկայացնելուց հետո, վերջինս դասախոսական կազմի հետ քննարկում է արդյունքները, ինչպես նաև տալիս խորհրդատվություն դասընթացի արդյունավետության և դասավանդողի կատարողականի բարձրացման նպատակով:

Բացի ՈԱ կոնտրոնից, հարցումներ են իրականացնում նաև ամբիոնները. Համակարգչային գրաֆիկայի, կիրառական արվեստի, հագուստի մոդելավորման ամբիոնը և դիզայնի ամբիոնը յուրաքանչյուր տարի իր բակալավրի 2-րդ-4-րդ և մագիստրատուրայի 1-ին-2-րդ կուրսերի ուսանողների շրջանում հարցում է իրականացնում՝ պարզելու նրանց զբաղվածության աստիճանը: Վերջինիս ցուցանիշները նույնպես կարևոր են ուսանողներին մատուցվող կրթական ծառայությունների արդյունավետությունը ստուգելու տեսանկյունից:

ԵԳՊԱ կարիերայի կենտրոնը և ուսանողական խորհուրդը իրենց մատուցած ծառայությունների որակի գնահատումը նույնպես իրականացնում են ուսանողների շրջանում հարցումներ իրականացնելու միջոցով:

Լինելով ԵԳՊԱ հիմնական շահակիցներ՝ ուսանողները ներգրավված են նաև բուհի գործունեության որակի ապահովման գործընթացներում. մասնավորապես՝ ուսանողները հնարավորություն ունեն մասնակցել բուհի կառավարմանը՝ դառնալով որոշումների կայացման գործընթացի անմիջական մասնակիցներ: Վերջինս հնարավորություն է տալիս ուսանողներին բարձրաձայնել իրենց հուզող հարցերը, կարիքները և պահանջները ԵԳՊԱ կառավարման տարբեր օղակներում, ինչպես նաև ապահովել իրենց տրամադրվող ծառայությունների որակը: Բացի այդ, ուսանողները ներգրավված են նաև ՄԿԾ-երի մշակման և վերանայման գործընթացում:

Որակի ներքին ապահովման գործընթացում ուսանողների ներգրավմանը նպաստում է նաև ESPAQ ծրագրի շրջանակներում ստեղծված ուսանողական համայնքը: Ուսանողները իրականացնում են հարցումներ, վերապատրաստվում տարբեր թեմաներով ՈԱ կենտրոնի, ինչպես նաև Կարիերայի կենտրոնի կողմից: ՈԱ կենտրոնը իրականացրել է տարբեր թեմաներով վերապատրաստումներ՝ հարցաշարերի մշակման և հարցումների անցկացման, շնորհանդեսի պատրաստման և ներկայացման, խոսքի որակի բարձրացման թեմաներով: Ուսանողական համայնքը ՈԱ կենտրոնի հետ համատեղ իրականացրել է հարցում բուհի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների շրջանում՝ պարզելու կրթությունը ԵԳՊԱ-ում շարունակելու և/կամ չշարունակելու դրդապատճառները (Հավելված 38): Ուսանողական համայք-ՈԱ կապը առավել սերտացնելու նպատակով առաջիկայում պլանավորվում է իրականացնել նոր վերապատրաստումներ, քննարկումներ և այլն:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում գործում է ուսանողների կրթական, խորհրդատվական և օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման քաղաքականություն, ինչպես նաև հստակ սահմանված մեխանիզմներ և գործիքակազմ: Հաշվի առնելով որակի ապահովման ոլորտում իրականացվող փոփոխությունները՝ ԵԳՊԱ-ն պարբերաբար վերանայում է որակի ապահովման գործիքներն ու մեխանիզմները:

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար (թվով):

	Զբաղվածություն/ուսման շարունակություն	*2014*	*2015*
1	Ավարտելուց անմիջապես հետո	9	6
2	Նախքան ավարտելը	8	13

3	Մասնագիտությամբ	21	18
4	Ոչ-մասնագիտությամբ	7	3
5	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը	23	7
6	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը		
7	Գործազուրկ ուսանողների տոկոսը	23	11
8	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը		

2016թվականին իրականացվեց նմանատիպ հարցում՝ ներառելով վերջին 3 տարիների շրջանավարտներին (Հավելված 46):

Վերլուծել Չափանիշ 4-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր

1. *ԵԳՊԱ-ում գործում է ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ սահմանված ընթացակարգ, մեխանիզմներ և փաստաթղթային հենք:*
2. *ԵԳՊԱ-ն քայլեր է իրականացնում ՀՀ կրթական համակարգում շարունակական կրթության գաղափարի իրականացման և տարածման ուղղությամբ:*
3. *ԵԳՊԱ-ն միջոցառումներ է ձեռնարկում նպաստելու ուսանողների ստեղծագործական և գիտական աճին:*
4. *ԵԳՊԱ-ն ապահովում է ուսանողների կարիքների վերհանման, ինչպես նաև շահերի պաշտպանության քաղաքականության իրականացման և մեխանիզմների ու գործիքների կիրառման արդյունավետությունը:*
5. *ԵԳՊԱ-ն իրականացնում է լրացուցիչ պարապմունքներ՝ նպաստելով ուսանողների հաղորդակցման կարողությունների զարգացմանը և մասնագիտական ոլորտում զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև ապահովում կարիերային նպաստող ծառայությունների իրականացման արդյունավետությունը:*
6. *ԵԳՊԱ-ում գործում է խորհրդատվության, օժանդակություն, ինչպես նաև կրթական ծառայությունների գնահատման և որակի ապահովման արդյունավետ կիրառվող մեխանիզմներ:*
7. *ԵԳՊԱ-ն ապահովում է ուսանողների ներգրավվածությունը կառավարման, մասնավորապես՝ որոշումների կայացման և որակի ապահովման գործընթացներում:*

Թույլ կողմեր

1. *Կրթական ծառայությունների գնահատումը և որակի ապահովումը հիմնականում իրականացնում է ԵԳՊԱ ՈԱ կենտրոնը:*

2. Ցածր է ԵԳՊԱ ուսանողների՝ օտար լեզվի իմացությունը, ինչը բացասական է ազդում վերջիններիս՝ շարժունության գործընթացի զարգացման վրա:
3. Ցածր է ուսանողների ներգրավածությունը ԵԳՊԱ-ում իրականացվող գիտահետազոտական գործընթացներում:

Արտաքին հնարավորություններ

1. ԵԳՊԱ կազմակերպահրավական կարգավիճակի փոփոխությունը հնարավորություն կտա հավելյալ ֆինանսական միջոցներ հայթհայթել և դրանք օգտագործել կրթական միջավայրի բարելավման, մասնավորապես՝ ուսանողներին ֆինանսական օժանդակությունը մեծացնելու համար:
2. Գիտահետազոտական գրանտային ծրագրերին անդամակցելու նախաձեռնում:

Արտաքին վտանգներ

1. Ուսանողական համակազմի նվազում՝ կապված բնակչության արտահոսքի հետ:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ԵԳՊԱ-ն վերոնշյալ թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ պլանավորում է իրականացնել հետևյալ քայլերը և գործընթացները.

1. Կրթական գործընթացում ներգրաված ստորաբաժանումներում կրթական ծառայությունների գնահատման և որակի ապահովման սեփական մեխանիզմների ներդրում:
2. ԵԳՊԱ ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված նոր մեխանիզմների մշակում և ներդրում:
3. ԵԳՊԱ-ի գիտահետազոտական գործընթացներում ուսանողների ներգրավածության բարձրացմանը ուղղված մեխանիզմների մշակում և ներդրում:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Առաքելությունը, կրթական և այլ նպատակներն իրականացնելու համար ԵԳՊԱ-ն հավակնում է ունենալ անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող վարչական և ուսումնաօժանդակ կազմ և կերպարվեստի, դիզայնի, կիրառական արվեստի և արվեստաբանության ՀՀ ճանաչված մասնագետներից կազմված պրոֆեսորադասախոսական կազմ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:	
Հիմքեր	Հավելված 81. ԵԳՊԱ-ի հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ ամբիոնների (գիտական աստիճաններ և կոչումներ) Հավելված 82. ԵԳՊԱ ստորաբաժանումների և աշխատատեղերի տարակարգերի մասին կանոնակարգ
Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը ՄՈՒՀ-ի առաքելությանը և կրթական ծրագրի նպատակներին: Կրթական նպատակների իրականացման համար ԵԳՊԱ-ն ներգրավում է կերպարվեստի, դիզայնի, կիրառական արվեստի և արվեստաբանության ՀՀ լավագույն, աշխատաշուկայում մեծ համբավ վայելող մասնագետներին: ԵԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական կազմն ունի անհրաժեշտ մասնագիտական կարողություններ: ԵԳՊԱ-ի 2 ֆակուլտետների 8 ամբիոններում, ինչպես նաև Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերում դասավանդում են 3 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 5 գիտությունների դոկտոր 37 պրոֆեսոր, 23 գիտությունների թեկնածու, 25 դոցենտ (Հավելված 81): ԵԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական կազմի բարձր ստեղծագործական մտքի մասին են վկայում նաև դասախոսների բազմաթիվ ցուցադրությունները: ԵԳՊԱ-ում դասավանդողների	

զգալի մասն ունի պետական մրցանակներ ու պատվոգրեր, նրանց ստեղծագործական գործունեությունը ստացել է միջազգային ճանաչում ու արժևորվել հասարակության և պետության կողմից:

ԵԳՊԱ-ում խրախուսվում է նաև երիտասարդ դասախոսների ներգրավումը կրթական գործընթացում՝ ապահովելով աստիճանական սերնդափոխություն: Երիտասարդ դասախոսների առաջին քայլերը զուգակցվում են փորձառու գործընկերների կողմից տրամադրվող խորհրդատվություններով և ուղղորդումներով:

ԵԳՊԱ-ի փորձառու և երիտասարդ դասախոսական կազմի մոտ դասավանդման և գնահատման ժամանակակից մոտեցումների և մեխանիզմների վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով ԵԳՊԱ-ն շարունակաբար վերապատրաստումներ, քննարկումներ և խորհրդատվություններ է կազմակերպում: Դասախոսական կազմի դասավանդման, ուսումնառության և գնահատման կարողությունների զարգացման համար օգտագործվում են դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում եվրոպական ճանաչված մասնագետների կողմից կատարվող վերապատրաստումները և խորհրդատվությունները, որոնց մասնակցած դասախոսները ձեռք բերված գիտելիքներով իրենց կոլեգաների հետ կիսվում են ԵԳՊԱ-ում (inhouse trainings):

ԵԳՊԱ-ի ուսումնական արվեստանոցներում և լաբորատորիաներում ուսանողների աշխատանքների բնականոն իրականացմանը աջակցում են լաբորատորիաների ղեկավարները, լաբորանտները և ուսումնական վարպետները: Դրանք փորձառու մասնագետներ են, ովքեր իրենց արհեստավարժությունը ապացուցել են բազում տարիների աշխատանքով և իրենց աջակցության շնորհիվ ուսանողների մոտ գրանցվող առաջխաղացմամբ:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ունի իր առաքելության և կրթական նպատակների իրականացման համար անհրաժեշտ բարձր որակավորումներով օժտված պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ:

Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ մարդկային ռեսուրսների զարգացումը հաստատության մշտապես արդիական խնդիրներից է, ուստի այն ամրագրված է 2012-2016թթ. ՌԾ-ի նպատակ 1-ի 4-րդ և 6-րդ խնդիրներում և 2017-2021 թթ. ՌԾ-ի նպատակ 1-ի 1.3 խնդրում ու նպատակ 2-ի 2.4 խնդրում:

Ուսումնագիտական և ուսումնաօժանդակ կազմի պլանավորման գործընթացում մասնակցում են ամբիոնները, ուսումնական վարչությունը, մարդկային ռեսուրսների բաժինը և ուսումնագիտական գծով պրոռեկտորը: Հիմնական դասախոսական կազմի ընտրությունը կատարվում է գիտական խորհրդի կողմից մրցութային սկզբունքով: Մարդկային ռեսուրսների ներգրավման և կառավարման գործընթացների հիմքում ընկած են ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ԵԳՊԱ կանոնադրությունը (Հավելված 1), ԵԳՊԱ ստորաբաժանումների և աշխատատեղերի տարակարգերի մասին կանոնակարգը (Հավելված 82) և ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգը (Հավելված 27):

Դասախոսական անձնակազմի հավաքագրումը կատարվում է մրցութային սկզբունքով

(երկարաժամկետ 5 տարի) և/կամ հրավերով (կարճաժամկետ մինչև 1 տարի):

Մրցութային սկզբունքով հավաքագրվում է ԵԳՊԱ հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը: Թափուր պաշտոնի և այն զբաղեցնողին ներկայացվող նվազագույն պահանջների վերաբերյալ մարդկային ռեսուրսների բաժինը տարածում է հայտարարություն: Պաշտոնը զբաղեցնելու համար դիմածների մրցույթը կայացնում է գիտական խորհուրդը փակ գաղտնի քվեարկությամբ: Մրցութային սկզբունքով ընտրված դասախոսների հետ կնքվում է պայմանագիր 5 տարի ժամկետով: Այս գործընթացը միտված է ԵԳՊԱ-ի դասախոսական կազմում ոլորտի լավագույն մասնագետներ ընդգրկելուն:

Հրավիրվող դասախոսների պլանավորումը կատարվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար: Ուսումնական վարչությունը կազմում է ամբիոնների ծանրաբեռնվածությունը և տրամադրում այն ամբիոնների վարիչներին: Ամբիոնների վարիչները քննարկումներ ունենալով ամբիոնի անձնակազմի հետ, կազմում են հիմնական (ընտրված) դասախոսների ծանրաբեռնվածությունը, ըստ որի հաշվարկվում է դասախոսի հաստիքը: Ամբիոնի հիմնական դասախոսների ծանրաբեռնվածությունը ապահովելուց հետո, ազատ ուսումնական դասընթացների/միավորների առկայության դեպքում ծագում է նոր դասախոսներ հրավիրելու անհրաժեշտություն: Առաջացած պաշտոնը զբաղեցնելու համար թեկնածություն կարող է առաջարկել ամբիոնը այդ ոլորտի արտաքին մասնագետների թվից: Հակառակ դեպքում ամբիոնը դիմում է մարդկային ռեսուրսների բաժին պաշտոնի համար մրցույթ հայտարարելու և կազմակերպելու համար: Պաշտոնը զբաղեցնողի ընտրությունը կատարում է ամբիոնի վարիչը: Հրավիրված դասախոսների հետ կնքվում է պայմանագիր մինչև 1 տարի ժամկետով:

ԵԳՊԱ վարչական և ուսումնաօժանդակ կազմը համալրվում են մրցութային կարգով: Թափուր պաշտոնի վերաբերյալ հայտարարությունը և մրցույթի ընթացքը կազմակերպում է մարդկային ռեսուրսների բաժինը: Ընտրությունը կատարելու նպատակով ձևավորվում է առնվազն 5 հոգուց բաղկացած հանձնաժողով, որում պարտադիր կերպով ներգավվում են մարդկային ռեսուրսների բաժնի ղեկավարը, համապատասխան ոլորտի պրոռեկտորը և համապատասխան ստորաբաժանման ղեկավարը: Կախված հայտարարված պաշտոնի գործառույթներից հանձնաժողովում կարող են ընդգրկված լինել նաև այլ աշխատակիցներ: Մրցույթը անցկացվում է պաշտոնը զբաղեցնողին ներկայացվող պահանջներին համապատասխանության սկզբունքով: Ընտրությունը կատարվում է այդ նպատակով ձևավորված հանձնաժողովի անդամների քննարկումների և միասնական կարծիքի գալու արդյունքում: Մասնագետի ընտրության վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ռեկտորը:

ԵԳՊԱ-ի աշխատակիցների խրախուսման, տույժի ենթարկելու և աշխատանքից հեռացնելու քաղաքականությունը սահմանվում է ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգով, որը ներառում է աշխատանքային կանոնները, աշխատողների ընդհանուր իրավունքները ու պարտականությունները, էթիկայի կանոնների պահպանման, կարգապահության, աշխատանքի տույժի, աշխատողների խրախուսման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին դրույթները և այլն (Հավելված 27):

Նշված մոտեցումների և ընթացակարգերի կիրառումը հնարավորություն է տալիս ապահովել ԵԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և այլ կազմի ներգրավման, խրախուսման, տույժի և հեռացման գործընթացների արդյունավետ իրականացումը և էթիկայի կանոնների պահպանումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:	
Հիմքեր	

Հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին:

ԵԳՊԱ-ում սահմանված են իրականացվող կրթական ծրագրերի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող նվազագույն հստակ պահանջներ (Հավելված 82): Սակայն այս պարագայում կարևոր դեր է խաղում ՀՀ ճանաչված, լավագույն մասնագետներից պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման քաղաքականությունը: Այս քաղաքականության, դասախոսների հավաքագրման վերը նշված ընթացակարգի և դասախոսների շարունակական վերապատրաստումների շնորհիվ հնարավոր է դառնում ապահովել պահանջվող մասնագիտական որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածությունը յուրաքանչյուր կրթական ծրագրում:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ունի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող նվազագույն հստակ պահանջներ և մեխանիզմներ է գործարկում ՀՀ լավագույն մասնագետներին կրթական գործընթացում ներգրավելու նպատակով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:	
Հիմքեր	Հավելված 83. Դասընթացի արդյունավետության գնահատման հարցաթերթեր Հավելված 84. Ամբիոնների աշխատակազմի աշխատանքի արդյունավետության գնահատման ամփոփ վերլուծություն և ձևաչափ

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որակի կառավարման սկզբունքների կիրառումը որպես կառավարման քաղաքականություն որդեգրելով՝ ԵԳՊԱ-ն որդեգրել է նաև իր բոլոր գործողությունների և մասնավորապես ուսումնական գործընթացի տարբեր ասպեկտների գնահատման քաղաքականություն:

ԵԳՊԱ-ում դասախոսների գնահատումը կատարվում է հետևյալ բաղադրիչներով՝

- Հարցումներ ուսանողների շրջանում
- Ամբիոնների վարիչների կողմից աշխատանքի արդյունավետության գնահատում
- Գործընկերային գնահատում՝ դիտումների ժամանակ գործընկերների արձագանքը ուսանողների հետ կատարված աշխատանքի վերաբերյալ:

Ուսանողների շրջանում հարցումները ՈԱ կենտրոնի կողմից սկսեցին իրականացվել 2013 թվականից: Հարցումների շրջանակներում գնահատվում է դասախոսական

հմտությունները, դասավանդման, ուսումնառության և ուսանողներին գնահատելու մեթոդների արդյունավետությունը և այլն (Հավելվածներ 10, 83 և 33): Դեռևս հարցումները իրականացվել են հիմնականում մասնագիտական դասընթացների շրջանակներում, սակայն պլանավորվում է այն կիրառել նաև ոչ մասնագիտական դասընթացների շրջանակներում: 2016 թվականին իրականացված հարցումների հիման վրա ստացված արդյունքները ներկայացվեցին դասախոսին, ինչից հետո յուրաքանչյուր դասախոս ամբիոնի վարիչի հետ քննարկեց դասավանդման և գնահատման մեթոդաբանության բարելավմանն ուղղված խնդիրները:

2014 թվականից ՈԱ կենտրոնը դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի արդյունավետության գնահատման հարցում է կատարել նաև ամբիոնների վարիչների շրջանում (Հավելված 84): Հարցումը միտված էր գնահատել թե որքանով են դասախոսները և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները համապատասխանում իրենցից ակնկալվող հմտություններին և վարվելակերպին: ՈԱ-ն կենտրոնի կողմից իրականացվող հարցումների ընթացակարգերը սահմանված են ԵԳՊԱ որակի ապահովման ձեռնարկում (Հավելված 30):

ԵԳՊԱ-ում դասախոսական գործունեության ուղղորդման և գնահատման կարևոր մեխանիզմ է ուսանողների աշխատանքների միջանկյալ և ամփոփիչ դիտումների ժամանակ տվյալ կուրսը ղեկավարող դասախոսի աշխատանքի գնահատումը: Ամբիոնի դասախոսներից կազմված դիտման խումբը ուսումնասիրում է ուսանողների աշխատանքները, քննարկում, թե որքանով են դրանք համապատասխանում նախանշված արդյունքներին և ուղղորդում կամ խորհրդատվություն են տրամադրում կուրսի ղեկավար հանդիսացող դասախոսին առկա թերությունների շտկման ուղղությամբ: Այս մեխանիզմի արդյունավետությունը առավել ակնառու է երիտասարդ դասախոսների կողմնորոշման հարցում:

ԵԳՊԱ-ի որպես արվեստի բուհի առանձնահատկությունից ելնելով՝ պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման միջոց են նաև ստեղծագործական աշխատանքների ցուցադրությունները և գիտահետազոտական աշխատանքների տպագրությունը: Ստեղծագործող դասախոսներին հնարավորություն է տրվում ցուցադրել իրենց գործերը ԵԳՊԱ ցուցասրահում, իսկ գիտական հոդվածները տպագրվում են «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածուում և այլ հանրապետական ու միջազգային ամսագրերում:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ընդունել է դասախոսական կազմի պարբերաբար գնահատելու քաղաքականություն և ունի դրա իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգեր ու մեխանիզմներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Հիմքեր	Հավելված 85. Դասավանդողների վերապատրաստումների թեմաները

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման գործընթացների արդիականությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում մարդկային ռեսուրսների

զարգացումը, ինչն անմիջականորեն ազդում է բուհի տարբեր գործընթացների արդյունավետության վրա: Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման հիմնատարրերից է աշխատաշուկայի պահանջները գիտակցող և կրթության ոլորտի միտումներին քաջատեղյակ, դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդաբանությամբ զինված դասախոսական կազմը: Ընդ որում, այդ գիտելիքները կարևոր են ոչ միայն ուսումնական, այլ նաև կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացներում:

Դասախոսական անձնակազմի կատարելագործումը և մասնագիտական աճը խթանելու նպատակով ԵԳՊԱ-ն իրականացնում է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- ԵԳՊԱ-ն նախաձեռնում է վերապատրաստումներ՝ միտված դասախոսական կազմի մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացմանը (Հավելված 85):
- ԵԳՊԱ-ն նաև անդամակցում է մի շարք դրամաշնորհային ծրագրերի, որոնց շրջանակներում վերապատրաստվում են դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչներ: Վերապատրաստումները միտված են ԵԳՊԱ-ի կրթական ծրագրերի մշակմանը և վերանայմանը, հետազոտական գործունեության զարգացմանը, միջազգայնացմանը: ԵԳՊԱ-ի արտերկրում վերապատրաստված կազմը իրականացնում է լավագույն փորձի փոխանակում (in-house trainings) բուհի ներսում:
- ԵԳՊԱ-ն մշտապես նպաստում է աշխատակիցների մասնագիտական աճին՝ ստեղծագործող դասախոսներին հնարավորություն տալով անվճար ցուցադրել իրենց գործերը ԵԳՊԱ-ի ցուցասրահում, իսկ հետազոտողներին՝ գիտական հոդվածները անվճար հիմունքներով տպագրել «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածուում, ինչը նպաստում է իրենց կարիերայի աճին:
- ԵԳՊԱ-ն պայմաններ է ստեղծում երիտասարդ դասախոսների աշխատանքային գործունեության համար, ինչը թույլ է տալիս իրականացնել դասախոսների ներդաշնակ և սահուն սերնդափոխություն: Առաջատար դասախոսները ուղղորդում են դասավանդման ոլորտում իրենց առաջին քայլերը կատարող երիտասարդ դասախոսներին: Մյուս կողմից, դասավանդման և ուսումնառության ժամանակակից մոտեցումները ենթադրում են ժամանակակից տեխնոլոգիաների և գաջեթների օգտագործումը: Ուստի կարևոր մարտահրավեր է համապատասխան կարողություններով օժտված երիտասարդ մարդկային ռեսուրսների ներգրավումը և փորձառու աշխատակիցների հետ նրանց համագործակցության խթանումը: Նման մոտեցումը թույլ է տալիս ապահովել նոր մոտեցումների և լավագույն ավանդույթների փոխկապակցումը:

Դասախոսական կազմի մասնագիտական աճն ապահովելու համար իրականացվող գործողություններն առավել համակարգված դարձնելու նպատակով ԵԳՊԱ-ն նախատեսում է մշակել մասնագիտական զարգացման քաղաքականություն և վերապատրաստումների հստակ ժամակացույց:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն, քաջ գիտակցելով փոփոխությունների ու բարելավումների անհրաժեշտությունը, գնահատելով իր ուժեղ ու թույլ կողմերը և հետագա պլանները, հատկապես վերջին տարիներին ակտիվորեն հետևում է դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը և աճին՝ ստեղծելով նորանոր հնարավորություններ և փորձելով

հնարավորինս լայն շրջանակներին ներգրավել տարբեր միջոցառումներում:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:	
Հիմքեր	Հավելված 86. Դասախոսական կազմի տարիքային բաշխվածության գրաֆիկ
Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների արդիականությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչպես արդեն ներկայացված էր «Չափորոշիչ 5ա»-ում ԵԳՊԱ-ի բոլոր ամբիոնները ապահովված են կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական կազմով (Հավելված 81): Դրա գրավականն է դասախոսական կազմի ներգրավման քաղաքականությունը և ընթացակարգերը, իսկ ապացույցը՝ ուսանողների և շրջանավարտների ընթացիկ ու ավարտական աշխատանքների որակը և զբաղվածության բարձր մակարդակը: Սակայն հիմնական դասախոսների միջին տարիքը բավականին բարձր է (Հավելված 86): Դասախոսական կազմի կայունությունը ապահովելու նպատակով վերջին տարիներին ԵԳՊԱ-ն որդեգրել է դասախոսական կազմի երիտասարդեցման քաղաքականություն: Այդ նպատակով ԵԳՊԱ-ն համատեղությամբ կամ վամավճարային կարգով երիտասարդ կադրեր է ներգրավում ուսումնական գործընթացում՝ երիտասարդներին ինքնադրսևորման հնարավորություն ընձեռելով: Արժանի դրսևորած երիտասարդները աստիճանաբար զբաղեցնում են աշխատանքից հեռացող դասախոսներին՝ ապահովելով դասախոսական կազմի սահուն սերնդափոխությունը: Ինչպես երևում է Հավելված 86-ից, որդեգրած քաղաքականությունը իր դրական արդյունքներ է տալիս և դրա իրականացումը ապահովում է դասախոսական կազմի երիտասարդեցումը և կայունության ապահովումը:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	Հավելված 87. ԵԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճին նպաստող գործընթացների ընթացակարգ
Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: ԵԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական կազմը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ • արվեստով կամ դիզայնով զբաղվող կիրառական մասնագետներ • արվեստաբանության մասնագետներ՝ տեսաբաններ: Կիրառական ստեղծագործական ուղղվածության դասախոսների մասնագիտական աճին	

նպաստելու համար ԵԳՊԱ-ն հնարավորություն է տալիս անվճար խմբային և անհատական ցուցադրություններ կազմակերպել ԵԳՊԱ-ի ցուցասրահում, ինչպես նաև աջակցում է այլ վայրերում ցուցահանդեսների կազմակերպմանը:

Գիտական հետազոտություններով զբաղվող դասախոսների մասնագիտական աճին նպաստելու համար ԵԳՊԱ-ն հնարավորություն է տալիս գիտական հոդվածները անվճար հիմունքներով տպագրել «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածուում, ինչպես նաև խրախուսում է այլ գիտական հանդեսներում դասախոսների տպագրությունը: Հետազոտական աշխատանքներ իրականացնող դասախոսներին խրախուսելու համար կիրառվում են նաև հավելավճարներ:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ունի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճի ապահովման քաղաքականություն և որոշ ընթացակարգեր, որոնք սակայն բազմազանեցման կարիք ունեն (Հավելված 87):

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հիմքեր	Հավելված 88. Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների

Վերլուծել ՄՈՒՀ-ի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ի ռազմավարական նպատակները հստակ բաժանվում են երեք հիմանական ուղղությունների՝

- Ուսումնառություն և դասավանդում
- Հետազոտություն և զարգացում
- Ծառայություններ հասարակությանը

ԵԳՊԱ-ի կառուցվածքը, ստորաբաժանումները, մարդկային ռեսուրսները, ստորաբաժանումների ենթակայության և համագործակցային կապերը միտված են նշված ուղղությունների իրականացմանը, որոնցից կարևորագույնն է ուսումնառությունը և դասավանդումը:

ԵԳՊԱ-ում դասավանդման ու ուսումնառության գործընթացի վարչարարությունը կարգավորվում է մի շարք հիմնարար փաստաթղթերով՝ ԵԳՊԱ կանոնադրություն, ՄԿԾ մշակման և վերանայման ձեռնարկ, ՄԿԾ-ի նկարագիր, Ուսանողի գնահատման համակարգ, ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ և այլն: Դրանցով սահմանվում են գործընթացների իրականացման կանոնները և էթիկան, մասնավորապես՝ վարչարարական համապատասխան գործընթացում ընդգրկված մարմինների համագործակցության շրջանակը և ենթակայության կապերը, գործունեության կազմակերպման ընթացակարգը, մասնակիցների լիազորություններն ու պատասխանատվությունները և այլն:

Դասավանդման և ուսումնառության գործընթացի վարչարարության համար պատասխանատու են ԵԳՊԱ-ի Ուսումնական վարչությունը, դեկանատները, ամբիոնները, որոնք անմիջականորեն համակարգում ու կազմակերպում են ուսումնական գործընթացը: Սակայն ԵԳՊԱ-ի վարչական մյուս ստորաբաժանումները՝ Մարդկային ռեսուրսների և

ընդհանուր բաժինը, ՈԱ կենտրոնը, Ֆինանսատնտեսական բաժինը, Արտաքին կապերի բաժինը և այլն, օժանդակում և նպաստում են դասավանդման և ուսումնառության գործընթացի սահուն իրականացմանը:



Վերոնշյալ բոլոր օղակները, հիմք ընդունելով կանոնակարգող փաստաթղթերը, դասավանդման և ուսումնառության գործընթացի վարչարարությունն իրականացնելիս կարևորում են էթիկայի նորմերի պահպանումը (Հավելված 27) և առաջնորդվում հետևյալ սկզբունքներով՝

- *կառավարման պատվիրակային մոտեցում.* հանձնարարականները տրվում և կատարվում են՝ ըստ ԵԳՊԱ ստորաբաժանումների միջև գործող ենթակայության ու հաղորդակցական կապերի
- *համագործակցություն.* Գործընթացներն իրականացվում են ստորաբաժանումների միջև համահունչ և փոխկապակցված գործունեության միջոցով,
- *թափանցիկության ապահովում.* ԵԳՊԱ-ն ձգտում է ապահովել դասավանդման և ուսումնառության գործընթացի հասանելիությունը ներքին ու արտաքին շահակիցներին:

Դասավանդման և ուսումնառության վարչարարությունը կարգավորող ստորաբաժանումներն օժանդակում են գործընթացին դրա պլանավորման, անհրաժեշտ փաստաթղթային հենքի ստեղծման ու մշակման, նյութական ու ֆինանսական ռեսուրսների տրամադրման, ուսանողներին ֆինանսական աջակցության և այլնի միջոցով: Ինչպես ցույց են տվել դասախոսների և ուսանողների շրջանում վարչարարության և կառավարման վերաբերյալ կատարված հարցումների արդյունքները, նշված գործընթացները բավականին լավ ու համակարգված են գործում:

Ինչպես արդեն նշվեց, ուսումնառության և դասավանդման գործընթացը անմիջականորեն իրականացվում է ամբիոնների կազմից, որոնց անդամ է հանդիսանում նաև ուսումնաօժանդակ կազմը: ԵԳՊԱ-ի ուսումնական արվեստանոցներում և լաբորատորիաներում ուսանողների աշխատանքների բնականոն իրականացումը, ինչպես նաև ուսանողների կողմից պատրաստվող ընթացիկ և ավարտական աշխատանքները վկայում են ԵԳՊԱ-ի ուսումնաօժանդակ կազմի բարձր պատրաստվածության և արհեստավարժության մասին: Առանց անհրաժեշտ կարողություններով օժտված անձնակազմի նման արդյունքների նվաճումը անհնար կլիներ:

ԵԳՊԱ-ի հետազոտություն և զարգացում ու ծառայություններ հասարակությանը մատուցելու ուղղությունների իրականացման վարչարարությունն իրականացվում է նույն սկզբունքներով, ինչպիսիք նկարագրված են ուսումնառության և դասավանդման վարչարարության համար:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ իր կրթական և այլ ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված վարչարարական գործընթացները արդյունավետ իրականացնելու համար:

Վերլուծել Չափանիշ 5-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր

1. *ԵԳՊԱ-ում դասավանդում են կերպարվեստի, դիզայնի, կիրառական արվեստի և արվեստաբանության ճանաչված մասնագետներ:*
2. *ՀՀ լավագույն մասնագետներին կրթական գործընթացում ներգրավելու մեխանիզմների առկայություն:*
3. *ԵԳՊԱ-ում գործում են դասախոսական կազմին պարբերաբար գնահատելու քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ:*
4. *ԵԳՊԱ-ն ունի դասախոսական կազմի երիտասարդեցմանն և կայունության ապահովմանն ուղղված քաղաքականություն և մեխանիզմներ:*
5. *ԵԳՊԱ-ն ունի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր:*
6. *ԵԳՊԱ-ն ունի անհրաժեշտ վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ աշխատակազմ իր ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված վարչարարական գործընթացները արդյունավետ իրականացնելու համար:*

Թույլ կողմեր

1. *Պրոֆեսորադասախոսական կազմը դասավանդման և ուսումնառության նոր մոտեցումների ուղղությամբ շարունակական վերապատրաստումների կարիք ունեն:*
2. *Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճի ապահովման ընթացակարգերը բազմազանեցման կարիք ունեն:*

Արտաքին հնարավորություններ

1. *Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերի բարձրացմանն ուղղված պետական ֆինանսավորման մեծացում:*

2. *Բուհերի աշխատակիցների մանկավարժական ենթամասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված պետական ծրագրեր:*

Արտաքին վտանգներ

1. *Երկրի սոցիալական մակարդակի նվազում և արտագաղթ:*

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ԵԳՊԱ-ն վերոնշյալ թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ պլանավորում է իրականացնել հետևյալ քայլերը և գործընթացները.

1. *Դասավանդման և ուսումնառության նոր մոտեցումների կիրառման ուղղությամբ պրոֆեսորադասախոսական կազմի շարունակական վերապատրաստումների ծրագրի մշակում և իրականացում:*
2. *Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճի ապահովման նոր ընթացակարգերի և մեխանիզմների մշակում և ներդրում:*
3. *Պրոֆեսորադասախոսական կազմի օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված մեխանիզմների մշակում և ներդրում:*

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

ԵԳՊԱ-ն հավակնում է լինել արվեստի ոլորտում հետազոտությունների իրականացման և ուսումնառության հետ դրանց փոխկապակցման միջոցով՝ գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը նպաստող հաստատություն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:	
Հիմքեր	Հավելված 89. ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի ռազմավարությունը և հետազոտության ուղղությունները Հավելված 90. ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի գործառույթները և կառուցվածքը Հավելված 91. Գեղանկարի, գրաֆիկայի, դիզայնի և կիրառական արվեստի գծով արվեստաբանության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման համար ատենախոսության պատրաստման ուղեցույցի նախագիծ Հավելված 92. ԵԳՊԱ Հետազոտողի (PhD) նոր պիլոտ ծրագիր Հավելված 93. ԵԳՊԱ Հետազոտողի (PhD) նոր պիլոտ ծրագրի վերաբերյալ ինքնավերլուծություն

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ի հետազոտական հավակնությունները բխում են առաքելությունից և առանձին ռազմավարական ուղղություն են կազմում: Հետազոտական ոլորտի զարգացմանն են ուղղված ԵԳՊԱ-ի 2012-2016 թվականների և 2017-2021 թվականների ՌԾ-ների 3-րդ նպատակները (Հավելվածներ 2 և 3): Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ ԵԳՊԱ-ն հիմնականում ստեղծագործական ուղղվածություն ունի և ի տարբերություն դասական համալսարանների և գիտահետազոտական ուղղվածություն ունեցող այլ բուհերի, ԵԳՊԱ-ում իրականացվող հետազոտությունները գիտական բնույթ հաճախ չեն կրում: ԵԳՊԱ-ի հետազոտությունները հիմնականում ստեղծագործական են և իրենց ոլորտային առանձնահատկություններն ունեն: Այնուամենայնիվ, վերջին տարիներին որոշակի գործողություններ են իրականացվել նաև ԵԳՊԱ-ի գիտահետազոտական բաղադրիչի զարգացման ուղղությամբ: ԵԳՊԱ-ի

հետազոտական ոլորտի առանձնահատկություններն են.

- **Գործնական-կիրառական հետազոտություն**. Հետազոտության այս տեսակը վերաբերում է ստեղծագործական ուղղություններին՝ գեղանկար, քանդակ, գրաֆիկա, դիզայն և դեկորատիվ կիրառական արվեստ: Այս ոլորտներում Հետազոտության նպատակն է նյութերի և գործիքների ճանաչողության խորացումը, մասնագիտական վարպետության հղկումը, գեղարվեստական միջոցների յուրացումն ու զարգացումը, ստեղծագործական երևակայության խթանումը և այս ամբողջի ուսումնասիրությունը գեղարվեստական գործընթացի համատեքստում:
- **Գիտական-տեսական հետազոտություն**. Հետազոտության այս տեսակը հիմնականում վերաբերում է արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնին և ներառում է արվեստի ու արվեստաբանության պատմության ուսումնասիրությունը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել արվեստի ստեղծագործությունները և արվեստաբանական ու հումանիտար մտքի զարգացումը պատմական գործընթացում, որը ենթադրում է գեղարվեստական փաստերի, դրանց ստեղծման բովանդակային, ոճական ու ձևային օրինաչափությունների, ինչպես նաև արվեստաբանական դպրոցների, դրանց փոխառնչությունների և արվեստային գործընթացում դրանց ներդրման հետազոտությունը՝ ըստ դարաշրջանների, քաղաքակրթական-մշակութային միավորների, անհատ արվեստագետների ու արվեստաբանների: Հատուկ ուշադրություն է դարձվում հայ արվեստի և արվեստաբանության ուսումնասիրությանը՝ դիտարկելով այն տարածաշրջանային և համաշխարհային արվեստի ու մշակույթի համատեքստում:

2014 թվականին ԵԳՊԱ-ում ստեղծվել է Հետազոտական կենտրոն (Արվեստի և հումանիտար հետազոտությունների կենտրոն), որը հավակնում է լինել միջգիտակարգային: Այսպես, բացի արվեստի տարբեր ճյուղերի միջև նախատեսվող հետազոտական թեմաներից, խրախուսվում են նաև արվեստի ու հումանիտար գիտությունների միջև կատարվող հետազոտությունները:

Հետազոտական կենտրոնը մշակում, կենտրոնացնում և համակարգում է ԵԳՊԱ-ի հետազոտական գործունեությունը, ինչպես նաև հետբուհական կրթական ծրագիրը (Հավելված 90): Հետազոտական կենտրոնը մշակել է ռազմավարական ծրագիր և սահմանել է արվեստի հետազոտության որոշակի ուղղություններ՝ հաշվի առնելով բուհի մարդկային և նյութական ռեսուրսները, միջազգային մակարդակով արվեստի հետազոտության ոլորտում արդի իրավիճակը, ժամանակակից խնդիրները, զարգացման միտումները և մրցակցություն ապահովող ոլորտներն ու թեմաները (Հավելված 89): Ընդ որում, Հայաստանում առաջին անգամ մշակվել են հետազոտության ուղղություններ կերպարվեստի, դիզայնի ու կիրառական արվեստի մասնագիտությունների համար (Հավելվածներ 91, 92 և 93): Այս մոտեցումների որդեգրումը հնարավորություն կտա.

- առավել թիրախավորված, համակարգված և կենտրոնացված հետազոտական աշխատանք կատարել
- մասնագիտանալ նշված հետազոտական ուղղությունների գծով, ինչը միջազգային մակարդակով կապահովի բուհի մրցունակությունը արվեստի հետազոտության ոլորտում
- պատրաստել առավել որակավորված մասնագետներ արվեստի հետազոտության ոլորտում
- ապահովել կապը ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների և արվեստի տեսական հետազոտության միջև

- խթանել ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների գծով հետազոտության զարգացումը, որ միջազգայնորեն արդիական պահանջ է:

Այսպիսով, ԵԳՊԱ-ի հետազոտական ոլորտի հետաքրքրությունները և հավակնությունները բխում են առաքելությունից, շարունակաբար արտացոլվում են բուհի ռազմավարական ծրագրերում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:	
Հիմքեր	Հավելված 94. Տարեգրքում հրապարակվող հոդվածներին ներկայացվող պահանջներ Հավելված 95. Տարեգիրք № 1, 2 և 3 Հավելված 96. Հետազոտական միջոցառումներին մասնակցության ցուցակ

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հետազոտական ոլորտում ԵԳՊԱ-ի երկարաժամկետ ռազմավարությունը, նպատակները և խնդիրները արտացոլվում են ռազմավարական ծրագրերում (Հավելվածներ 2 և 3): ՌԾ-ի հետազոտական ուղղության իրականացմանն ուղղված նպատակները և խնդիրները ուղենիշ են ԵԳՊԱ-ի գործունեության հետազոտական բաղադրիչի զարգացման ուղղությամբ գործողություններ իրականացնող բոլոր ստորաբաժանումների համար: Հետազոտական ոլորտում իրենց գործունեության տարեկան պլանավորումը իրականացնելիս՝ ստորաբաժանումները կենտրոնանում են ՌԾ-ով իրենց առջև դրված խնդիրների լուծման վրա:

Հետազոտական գործունեությունը համակարգվում է Հետազոտական կենտրոնի կողմից, որը, հիմնվելով այդ ոլորտում ԵԳՊԱ-ի առաքելության վրա, կազմել է նաև իր ռազմավարությունը (Հավելված 89), համաձայն որի նախատեսված է.

1. Հետազոտական մեթոդների, գիտական լեզվի, արվեստագիտական հայացքների արդիականացում
2. Հետազոտական աշխատանքի համար պահանջվող տեղեկատվական, գիտատեխնիկական միջոցների, սարքավորումների արդիականացում և հարստացում
3. Հետազոտական ոլորտում ընդգրկված դասախոսների և ուսանողների համար, բացի մայրենի լեզվից առնվազն երկու օտար լեզվի բավարար տիրապետմանը ուղղված միջոցառումներ
4. Հետազոտական և գիտական աշխատանքների արդյունքների ընդգրկում ուսումնական գործընթացում,
5. Հետազոտությունների միջազգայնացմանն ուղղված միջոցառումներ:

Նշված նպատակներին հասնելու համար ԵԳՊԱ-ն հետազոտական ոլորտում

իրականացնում է հետևյալ գործողությունները.

1. Հետազոտական թվային գրադարանի ստեղծում՝ 2016 թվականից մեկնարկել է ԵԳՊԱ-ի գրադարանի թվայնացման գործընթացը: Ավարտին է մոտենում գրադարանի քարտարանի թվայնացումը, իսկ 2017 թվականից նախատեսվում է սկսել գրքերի թվայնացումը:
2. Դասախոսների և ուսանողների հետազոտական հրապարակումների անհատական մատենագիտության հավաքագրում և առցանց տարածում: ՀՀ ԲՈՀ-ի կողմից ճանաչվող «Տարեքիրք» գիտական ամսագրի հրատարակում (Հավելվածներ 94 և 95):
3. Հետազոտական հետաքրքրությունների խթանում՝ արդի հետազոտական թեմաների շուրջ ներքին և հրավիրված մասնագետների ու ուսանողների մասնակցությամբ դասախոսությունների (պրեզենտացիաների) և քննարկումների, ճանաչողական ճամփորդությունների, ուսանողական հետազոտական աշխատանքների ներկայացումների և քննարկումների, Birthright Armenia ծրագրով սփյուռքահայ երիտասարդ մասնագետների հետ հետազոտական և ուսումնական համագործակցությունների միջոցով (Հավելված 96): Օրինակ.
   - ԵԳՊԱ-ում տարբեր թեմաներով զեկուցումներ են կարդացել արտասահմանյան անվանի պրոֆեսորներ Կլոդ Մութաֆյանը (Ֆրանսիա) և Մայքլ Սթոունը (Իսրայել), երիտասարդ արվեստաբաններ արգենտինահայ Պատրիսիո Դեր Քրիքորյանը և իտալահայ Ալբերտո Ազաքանը:
   - 2015 թվականից սկսած յուրաքանչյուր տարի ԵԳՊԱ-ում դասավանդելու համար Իտալիայից հրավիրվում է փիլիսոփ. գիտ. դոկտոր (PhD), արվեստագետ Լեոնարդո Ֆիլաստոն:
   - Մի շարք դասախոսներ զեկուցումներով հանդես են եկել արտասահմանում, մասնավորապես՝ Վ. Ազատյանը՝ Ֆրանսիայում, Դ. Քերթմենջյանը՝ Վրաստանում, Ս. Արզումանյանը՝ Արևմտյան Հայաստանում, Ն. Ղարիբյանը՝ Իտալիայում:
4. Հետազոտական և կրթական դրամաշնորհային նախագծերի նախաձեռնում և իրականացում.
   - 2014 թվականից ԵԳՊԱ-ն մասնակցում է TEMPUS-ի միջազգային ծրագրերի, որոնցից երեքը ուղղված են հետազոտողի կրթական ծրագրի բարելավմանը և/կամ բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի ծրագրերի որակի ապահովմանը (VERITAS, ALIGN, C3QA):
   - 2016 թվականի դեկտեմբերից հետազոտական կենտրոնը նախաձեռնել է Արվեստ Հայաստան հիմնադրամի Արվեստի նախագծերի դրամաշնորհին մասնակցելու նախագիծ՝ արվեստի պատմության և գրաֆիկայի ու գծանկարի ամբիոնի երկու դասախոսների մասնակցությամբ (վերջնաժամկետը՝ 2017 փետրվար):
   - 2016 թվականի դեկտեմբերից կենտրոնը գործողություններ է նախաձեռնել «Թանգարան Անիպեմզայում» միջազգային մեկամյա նախագիծ՝ ամերիկյան ARISC Collaborative Heritage Managment դրամաշնորհային ծրագրին դիմելու համար (վերջնաժամկետը 2017 մարտ):
   - 2016 թվականի հունիսից աշխատանքներ են տարվում Ֆրանսիայի Հետազոտական ազգային կենտրոնի Միջերկրածովյան միջնադարյան հնագիտական լաբորատորիայի և Էքս-ան-Պրովանս համալսարանի հայ արվեստի պատմության ամբիոնի պրոֆեսոր Պատրիկ Դոնաբեդյանի հետ՝ Վաղմիջնադարյան թաղումնային մշակույթի և հարակից արվեստների թեմայով միջազգային բազմամյա միջգիտակարգային հետազոտական ծրագիր կազմելու ուղղությամբ:

- 2017 թվականից նախատեսվում է ԵԳՊԱ-ի ներքին հետազոտական գրանտային համակարգի նախաձեռնումը, համաձայն որի յուրաքանչյուր տարի կհայտարարվի հետազոտական ծրագրերի մրցույթ: Մրցույթում հաղթող հետազոտական խմբերին ծրագրով նախատեսված հետազոտությունները իրականացնելու համար կհատկացվի ֆինանսական բյուջե, որը կներառի աշխատավարձային ֆոնդ և սարքավորումների ու նյութական միջոցների ձեռքբերման նախահաշիվ: Մրցույթին մասնակցելու պարտադիր պայման կհանդիսանա հետազոտական խմբում ուսանողների առկայությունը:

5. Հետազոտական միջավայրի բարելավում՝ ԵԳՊԱ-ն տեխնիկական և համակարգչային սարքավորումներ է ձեռք բերել դրամաշնորհային ծրագրով հատուկ հետազոտության ոլորտի համար:
6. Հետազոտողի կրթական ծրագրի բարելավում՝ 2014-2015 ուսումնական տարվանից մեկնարկել է հետազոտողի կրթական ծրագրի (PhD) բարելավում համաձայն Զալցբուրգյան սկզբունքների (Հավելված 92): Ծրագրի նախագիծն այսօր չորրորդ և վերջին տարվա փուլում է: Եվրոպական բուհերի փորձի ուսումնասիրության, ԵԳՊԱ ռեսուրսների ու ավանդույթների գնահատման, ինչպես նաև Հայաստանում արվեստի ոլորտային առանձնահատկությունների ու հասարակական պահանջարկի ուսումնասիրության հիման վրա կազմվել է նոր բարելավված հետբուհական (ասպիրանտական) կրթական ծրագիր: Այն ճկուն է և բաղկացած է երկու առանձին ճյուղերից, որոնք ներառում են առավել ադապտացված և թիրախավորված պահանջներ ու համահունչ են բուհում տրվող մասնագիտական պատրաստվածության որակավորումներին.
   - արվեստի պատմություն և տեսություն,
   - կերպարվեստ, դիզայն և կիրառական արվեստ:

   Երկրորդ ճյուղը Հայաստանում բոլորովին նոր երևույթ է և առաջին անգամ ներկայացնելու է այս մասնագիտությունների գծով ասպիրանտական կրթության բովանդակային առաջարկ, որտեղ ընդգրկված են ընդունելության, թեզի կատարման ու պաշտպանության վերաբերյալ նոր պահանջներ: Ըստ այդմ՝ ստեղծագործական-կատարողական մասնագիտությունների գծով թեզը ներկայացնում է ոչ թե արվեստաբանական հետազոտություն, ինչպես դա արվում էր մինչ այժմ, այլ ստեղծագործական նախագծի առաջարկ և այդ նախագծի շուրջ կատարված հետազոտական գրավոր աշխատանք՝ ավարտագիր:
7. ԵԳՊԱ-ի բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի հզորացում.
   - Արվեստի պատմություն և տեսություն մասնագիտության ծրագրերում 2013 թվականից ներմուծվեցին հետազոտության հմտությունների խթանմանն ուղղված հատուկ դասընթացներ, ինչպիսիք են՝ «Գիտահետազոտության ներածություն», «Ստեղծագործության վերլուծություն», «Հետազոտական գործնական դասընթաց», «Հետազոտության մեթոդներ», «Մասնագիտական թեմատիկ դասընթացներ»: Արդյունքը շոշափելի է՝ վերջին երեք տարում պաշտպանված մագիստրոսական թեզերի և բակալավրական ավարտական աշխատանքների որակը զգալի բարձրացել է, թե՛ թեմաների ընտրության, թե՛ կատարված հետազոտական աշխատանքի, թե՛ շարադրանքի հասունության տեսանկյունից:
   - Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքներին հատկացվել են կրեդիտներ: Բակալավրի կրթական ծրագրերում հետազոտություն իրականացնելու և ավարտական աշխատանք

պատրաստելու համար հատկացվել է 26 կրեդիտ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրերում՝ 60 կրեդիտ։

- 2013 թվականից կիրառության մեջ է դրված Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույցը (Հավելված 62), որը միտված է ավարտական աշխատանքների և թեզերի պատրաստման ընթացքում ուսանողների ուղղորդմանը։ Հետազոտական կենտրոնի և գիտական մասի նախաձեռնությամբ 2013թ-ից կատարվում է տարվա երեք լավագույն թեզերի ընտրություն, որոնք հոդվածի ձևով հրապարակվում են Տարեգրքում։ Սա նպաստում է ուսանողների հետազոտական հմտությունների զարգացմանը և խթանում է նրանց հետազոտական աշխատանքի մոտիվացիան։

8. Հետազոտական ոլորտի միջազգայնացում՝ 2015 թվականից հետազոտական կենտրոնը աշխատանքներ է տանում ԵԳՊԱ-ի հետազոտության ոլորտը միջազգայնացնելու ուղղությամբ։ Կապեր են հաստատվել Սորբոնի համալսարանի Բարձրագույն հետազոտական դպրոցի, Բոլոնիայի համալսարանի Պատմության և մշակույթների ֆակուլտետի հայագիտական ամբիոնի, Ֆրանսիայի Էքս-ան-Պրովանսի համալսարանի հայ արվեստի ամբիոնի, Չեխիայի Մազարիկա համալսարանի արվեստի ֆակուլտետի հետ հետազոտական ոլորտում համագործակցության և փոխանակման երկկողմանի համաձայնագրերի, միջազգային դրամաշնորհային ծրագրերի, համատեղ ասպիրանտական ծրագրերի և ասպիրանտների համատեղ ղեկավարության համար։ ԵԳՊԱ-ում կազմակերպվում են նաև օտար լեզուների ֆակուլտատիվ դասընթացներ, որոնք բաց են և՛ ուսանողների և՛ դասախոսների համար։

Հետազոտական ոլորտում իրականացվող գործունեությունը արտացոլվում է ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների եռամսյակային և տարեկան հաշվետվություններում և ամփոփվում են ռեկտորի տարեկան զեկույցներում։

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ունի հետազոտության ոլորտում իր հետաքրքրությունների ու հավակնությունների իրականացմանն ուղղված երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, համաձայն որոնց էլ կազմակերպում է գործընթացները՝ գործունեության հիմքում ունենալով ՊԻՍԲ սկզբունքները։

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով։

Հիմքեր	

Վերլուծել ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/։

ՄԿԾ-երի շրջանակներում իրականացվող հետազոտական գործընթացները փաստաթղթավորված են և որպես ուսումնական ծրագրերի մաս ներառվում են մասնագիտությունների ուսումնական պլաններում։ Բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի ՄԿԾ-երը ներառում են հետազոտական բաղադրիչներ, որոնք նկարագրվում են առարկայական, պրակտիկայի կամ այլ նկարագրերում, ինչպես նաև ուղղորդող ձեռնարկներում և ուղեցույցերում։ Օրինակ կարող է հանդիսանալ ԵԳՊԱ Բակալավրական ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույցը (Հավելված

62):

Հետազոտական դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող հետազոտությունները համակարգվում են այդ ծրագրերի իրականացման նկարագրերի, պահանջների և ժամանակացույցերի համապատասխան:

Դասախոսների և ուսանողների անհատական հետաքրքրություններով պայմանավորված հետազոտությունները չեն փաստաթղթավորվում, դրանց ընթացքը ուղղորդվում է հետազոտական կենտրոնի կողմից իրականացվող խորհրդատվություններով, հետազոտական քննարկումներով և այլ միջոցառումներով:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ունի հետազոտությունների իրականացումը և զարգացումը ապահովող քաղաքականություն և ընթացակարգեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:	
Հիմքեր	Հավելված 97. ԵԳՊԱ-ի 2014-2017 թվականներին հրատարակված գիտական հոդվածների ցանկ Հավելված 98. 2014-2017 թվականների ընթացքում միջազգային գիտաժողովներին մասնակցած դասախոսների ցուցակ

Վերլուծել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ն, կարևորելով իր գործունեության բոլոր ոլորտների միջազգայնացումը, հատուկ ուշադրություն է դարձնում նաև հետազոտական ոլորտի միջազգայնացմանը, և մասնավորապես հետազոտողի կրթական ծրագրի միջազգայնացմանը, ինչի ապացույցն է 2017-2021 թվականների ԵԳՊԱ ռազմավարական ծրագրի խնդիր 3.3-ը:

Հետազոտողի կրթական ծրագրի բարելավման նպատակով ԵԳՊԱ-ն նախաձեռնեց և ներգրավվեց TEMPUS-ի VERITAS դրամաշնորհային ծրագրին, որի շրջանակներում իրականացվում է ԵԳՊԱ-ի հետազոտողի կրթական ծրագրի վերանայում և համապատասխանեցում Զալցբուրգյան սկզբունքներին: Այս գործընթացը կապահովի ԵԳՊԱ-ի հետազոտողի կրթական ծրագրում եվրոպական հայտնի բուհերի լավագույն փորձի ներդրումը և ծրագրի համապատասխանությունը եվրոպական միասնական պահանջներին, որն էլ կնպաստի ծրագրի սահմաններում իրականացվող հետազոտությունների միջազգայնացումը և միջազգային ճանաչումը:

ԵԳՊԱ-ն նախաձեռնել և ներգրավվել է նաև ERASMUS PLUS-ի C3QA դրամաշնորհային ծրագրին, որի շրջանակներում կմշակվի և կներդրվի եվրոպական ճանաչված բուհերի և հավատարմագրման գործակալությունների լավագույն փորձի վրա հիմնված հետազոտողի կրթական ծրագրի և դրա բոլոր բաղադրիչների որակի ապահովման համակարգը: Սա կարևորագույն քայլ կհանդիսանա հետազոտողի կրթական ծրագրի ազգային և միջազգային հավատարմագրման համար:

ԵԳՊԱ-ում իրականացվող հետազոտությունների զարգացման և միջազգայնացման մակարդակի բարձրացման նպատակով 2017-2021 թվականների ԵԳՊԱ ռազմավարական ծրագրում նախատեսված է կիրառել մի շարք մոտեցումներ.

- Դասախոսական կազմի ընտրության հարցում հետազոտական գործունեության կարևորում:
- Դասախոսների հետազոտական աշխատանքների համակարգում, նրանց հետազոտական գործունեությանը աջակցում:
- Գիտական հետազոտությունների միջազգայնացմանը միտված նոր

քաղաքականության մշակում: • Արդի պահանջներին համապատասխան հետազոտողի կրթական ծրագրի վերանայում: • Կրթական ծրագրերի հետազոտության բաղադրիչի զարգացում, հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության խթանում: • Հետազոտության և դասավանդման փոխկապակցման հստակ մեխանիզմների մշակում: • Արտաքին գործընկերների հետ համագործակցության զարգացում: • Իրականացվող հետազոտությունների արդյունքների տարածում: Նշված մոտեցումների կիրառումը միանշանակ կնպաստի ԵԳՊԱ-ում իրականացվող հետազոտությունների զագրացմանը և միջազգայնացմանը և ամուր հիմքեր կստեղծի ազգային մտքի և արվեստի միջազգային տարածմանը և ճանաչմանը: Այսպիսով, ԵԳՊԱ-ն կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը և գործողություններ է իրականացնում դրա ապահովման ուղղությամբ:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:	
Հիմքեր	

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ում կապը հետազոտության և դասավանդման միջև ապահովվում է կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների մոտ հետազոտական կարողությունների ձևավորման, ինչպես նաև ասպիրանտների և դասախոսների կողմից իրականացվող հետազոտությունների արդյունքները ուսանողների շրջանում տարածելու միջոցով: Այնուամենայնիվ, իրականացվող հետազոտությունների և ուսումնական գործընթացի փոխկապակցումը, մասնավորապես՝ դրա կանոնակարգումը շարունակում է կարևոր մարտահրավեր մնալ.

- Փաստաթղթային հենքի ստեղծում
- Դասավանդման մեջ հետազոտությունների արդյունքների կիրառմանը միտված հստակ մեխանիզմների մշակում
- Ներբուհական **նպատակային** հետազոտությունների դրամաշնորհային համակարգի ներդրում
- Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության ապահովում
- Արտաքին ֆինանսական միջոցների հայթայթում:

Մինչ այժմ վերոնշյալ մարտահրավերներին ԵԳՊԱ-ն անդրադարձել է մի շարք բարեփոխումների իրականացման միջոցով, որոնց շրջանակներում.

- Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում առավել ուշադրություն դարձվեց հետազոտական բաղադրիչին
- Բարձրագույն կրթության 3-րդ մակարդակի համակարգի բարելավման նպատակով ԵԳՊԱ-ն ներգրավվեց ՏԵՄՊԻՍ-ի ՎԵՐԻՏԱՍ ծրագրին, որի շրջանակներում ստեղծվեց հետազոտական կենտրոնը և վերանայվեց հետազոտողի կրթական ծրագիրը (PhD programme)
- Ասպիրանտները դասավանդում են բակալավրիատի և/կամ մագիստրատուրայի ուսանողներին, որի շրջանակներում ներկայացնում են իրենց հետազոտությունները:

Կարևորելով հետազոտական ոլորտի զարգացումը՝ ԵԳՊԱ-ն իրականացրել է մի շարք գործողություններ, որոնք նախատեսված էին 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրով: Գործընթացը բուհում համակարգում է ուսումնագիտական գծով պրոռեկտորը, իսկ նորաստեղծ հետազոտական կենտրոնը և թողարկող ամբիոնները պատասխանու են բովանդակային բարեփոխումների և հետազոտությունը դասավանդմանը փոխկապակցելու աշխատանքների կարգավորման, ինչպես նաև արդյունքների տարածման համար: Մինչ այժմ ԵԳՊԱ-ում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Դասավանդման և հետազոտության կապը ապահովելու նպատակով ԵԳՊԱ-ում իրականացվող բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքներին հատկացվել են կրեդիտներ: Բակալավրի կրթական ծրագրերում հետազոտություն իրականացնելու և ավարտական աշխատանք պատրաստելու համար հատկացվել է 26 կրեդիտ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրերում՝ 60 կրեդիտ: Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ապահովման համար պատասխանատու են թողարկող ամբիոնը և ուսումնական վարչությունը:
- Ելնելով իրականացվող մասնագիտությունների յուրահատկություններից՝ կիրառական ուղղվածություն ունեցող մասնագիտություններում (ինչպիսիք են՝ «Դիզայն», «Կիրառական արվեստ» և այլն) մասնագիտական առարկաները նույնպես ներառում են հետազոտական բաղադրիչ: Վերջինիս նպատակն է նյութերի և գործիքների ճանաչողության խորացումը, մասնագիտական վարպետության հղկումը, գեղարվեստական միջոցների յուրացումն ու զարգացումը, ստեղծագործական երևակայության խթանումը և այս ամբողջի ուսումնասիրությունը գեղարվեստական գործընթացի համատեքստում: Օրինակ, որևիցե նոր իր նախագծելիս կամ այլ խնդիր լուծելիս ուսանողի հանձնարարության մաս է հանդիսանում նմանատիպ արդեն գոյություն ունեցող իրերի և դրանց պարամետրերի հետազոտումը:
- Տեսական ուղղվածություն ունեցող մասնագիտություններում (ինչպիսին է՝ «Արվեստաբանությունը») ներառված է հատուկ դասընթացների շարք, որոնց սահմաններում ուսանողներին ներկայացվում են ԵԳՊԱ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները: Այդ դասընթացները հաճախ փոփոխվում են և նախատեսված են հետազոտություններ իրականացնող դասախոսների ընթացիկ հետազոտական աշխատանքի արդյունքները դասավանդման միջոցով ներկայացնելու համար:
- Տեսական ուղղվածությամբ կրթական ծրագրերում իրականացվում է գիտական-տեսական հետազոտություն, որի նպատակն է ուսումնասիրել արվեստի ստեղծագործությունները և արվեստաբանական ու հումանիտար մտքի զարգացումը պատմական գործընթացում: Նման հետազոտության շրջանակներում ուսանողներն ուսումնասիրում են գեղարվեստական փաստերը, դրանց ստեղծման բովանդակային, ոճական և ձևային օրինաչափությունները և այլն:
- Ուսանողների հետազոտական գործունեության ուղղորդման համար 2014թ. մշակվել և կիրառության է դրվել ԵԳՊԱ բակալավրի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց, որում ընդհանրացվել են աշխատանքներին ներկայացվող պահանջները (Հավելված 62): Ուսանողները ավարտական աշխատանքները գրելիս օգտվում են ուղեցույցից, որը նրանց հետազոտական գործունեությունը առավել համակարգված և թիրախային է դարձնում:

- ԵԳՊԱ հետազոտական գործունեության բարելավման հիմնաքարերից է հետազոտողի կրթական ծրագրի մշակումը՝ համապատասխան Զալցբուրգյան սկզբունքներին: Այդ նպատակով բուհը դիմել է VERITAS դրամաշնորհային ծրագրին, որի արդյունքում ոչ միայն վերանայվեց հետազոտողի ծրագիրը, այլ նաև ստեղծվեց ԵԳՊԱ Հետազոտական կենտրոնը:
- Հետազոտողի կրթական ծրագրի ուսանողներն իրենց կատարած հետազոտությունների արդյունքները ներկայացնում են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին: Հետազոտողի կրթական ծրագրի ուսանողների հեղինակած գիտական հոդվածները ցածր կուրսերի ուսանողների համար երբեմն դառնում են անհրաժեշտ գրականություն:
- ԵԳՊԱ-ում իրականացված հետազոտությունների արդյունքները հաճախ դառնում են մեթոդական ուղեցույցեր և դասագրքեր: Վերջին տարիներին հրապարակվել են «Հայ կերպարվեստի պատմություն» և «Հայ մանրանկարչության պատմություն» գրքերը, ինչպես նաև 12 ուսումնամեթոդական ձեռնարկ՝ երաշխավորված ԵԳՊԱ Գիտական խորհրդի և ընդունված ՀՀ ԲՈՀ-ի կողմից:
- Նորաստեղծ հետազոտական կենտրոնը մշակել է մանրամասն և թիրախավորված ռազմավարական ծրագիր՝ հետազոտության համար և սահմանել է արվեստի տեսական ոլորտում բուհում կիրառվելիք հետազոտական ուղղությունները առաջիկա հինգ տարիների համար: Այդ ուղղությունները սահմանվել են՝ հաշվի առնելով բուհի մարդկային և նյութական ռեսուրսները, միջազգային մակարդակով արվեստի հետազոտության ոլորտում արդի իրավիճակը, ժամանակակից խնդիրները, զարգացման միտումները, մրցակցություն ապահովող ոլորտներն ու թեմաները, ինչպես նաև տեղական պահանջարկը:
- Հետազոտական կենտրոնը, ստեղծագործական ամբիոնների հետ համատեղ Կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտների համար Հայաստանում առաջին անգամ մշակել է հետազոտության ուղղություններ, սահմանել է զարգացման միտումները և ընտրել է թեմաներ, որոնք պետք է ապահովեն բուհի առաքելության իրականացումը հետազոտության ոլորտում և տեղական ու միջազգային մակարդակով մրցունակության բարձրացումը:
- Հետազոտական կենտրոնը պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ՝ հանդիպումներ, բանախոսություններ, զեկույց-քննարկումներ, թեմատիկ ելույթներ, ճանաչողական ճամփորդությունների հաղորդումներ ինչպես բուհի դասախոսների և ուսանողների, այնպես էլ արտաքին մասնագետների և հրավիրյալ դասախոսների մասնակցությամբ:
- Այս տարվանից կենտրոնի նախաձեռնությամբ նախատեսվում է ներդնել հիմնական և համատեղությամբ աշխատող դասախոսների համար հետազոտական սահմանված թեմաների պլանային ներկայացման համակարգ, նվազագույնը՝ մեկ, առավելագույնը՝ երեք տարով: Թեմաները պետք է ընտրվեն բուհի և կենտրոնի սահմանած հետազոտական ուղղությունների և ռազմավարական ծրագրի շրջանակներում:

Հետազոտության զարգացումը շարունակում է մնալ ԵԳՊԱ կարևորագույն ոլորտներից մեկը և հաջորդ ռազմավարական ծրագիրը մեծ տեղ է հատկացնում իրականացվող հետազոտությունների և դասավանդման գործընթացի էլ ավելի սերտ փոխկապակցմանը և համակարգմանը (Հավելված 3):

Այսպիսով, ԵԳՊԱ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հստակ մեխանիզմներ:

Վերլուծել Չափանիշ 6-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր

1. *Հետազոտական ոլորտի հետաքրքրությունները և հավակնությունները արտացոլված են ԵԳՊԱ-ի առաքելությունում, ռազմավարական նպատակներում և խնդիրներում, որոնցից էլ բխում են բուհի գործողությունները:*
2. *ԵԳՊԱ-ն իրականացնում է հետազոտական ոլորտի երկարաժամկետ, միջնաժամկետ ու կարճաժամկետ պլանավորում, համաձայն որոնց էլ կազմակերպում է գործընթացները՝ գործունեության հիմքում ունենալով ՊԻՍԲ սկզբունքները:*
3. *ԵԳՊԱ-ում գործում են հետազոտությունների իրականացումը և զարգացումը ապահովող քաղաքականություն և ընթացակարգեր:*
4. *ԵԳՊԱ-ն կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը և գործողություններ է իրականացնում դրա ապահովման ուղղությամբ:*
5. *ԵԳՊԱ-ն ունի հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հստակ մեխանիզմներ:*

Թույլ կողմեր

1. *ԵԳՊԱ-ի գիտական հետազոտությունների զարգացման անհրաժեշտություն:*
2. *Միջազգային ամսագրերում հրատարակվող գիտահետազոտական աշխատանքների թվաքանակի ցածր մակարդակ:*

Արտաքին հնարավորություններ

1. *Հետազոտական և գիտական դրամաշնորհային ծրագրերի նախաձեռնում:*
2. *Արվեստի ոլորտում կազմակերպվող ցուցահանդեսների և այլ միջոցառումների առկայություն:*

Արտաքին վտանգներ

1. *Երկրի տնտեսական մակարդակի անկում և արտագաղթ:*

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ԵԳՊԱ-ն վերոնշյալ թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ պլանավորում է իրականացնել հետևյալ քայլերը և գործընթացները.

1. *Գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերի նախաձեռնում և ԵԳՊԱ-ի գիտական հետազոտությունների զարգացմանն ուղղված այլ գործընթացների և մեխանիզմների մշակում և ներդրում:*
2. *Հետազոտությունների արդյունքները միջազգային ամսագրերում հրատարակմանը նպաստող և խրախուսող քաղաքականության և մեխանիզմների մշակում և ներդրում:*

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Առաքելության, կրթական և այլ նպատակների իրականացման նպատակով ԵԳՊԱ-ն ձգտում է պահպանել և բարելավել իր ռեսուրսները՝ ապահովելով անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:	
Հիմքեր	Հավելված 99. Հագուստի մոդելավորման լաբորատորիայի սարքավորումների ցանկ Հավելված 100. Կիրառական արվեստի լաբորատորիայի սարքավորումների ցանկ Հավելված 101. Դիզայնի ամբիոնի մանրակերտի լաբորատորիայի սարքավորումների ցանկ Հավելված 102.Դիզայնի ամբիոնի համակարգչային լաբորատորիայի սարքավորումների ցանկ Հավելված 103. Մետաղի արհեստանոցի սարքավորումների ցանկ Հավելված 104. Համակարգչային նախագծման լաբորատորիայի սարքավորումների ցանկ Հավելված 105. Գրաֆիկայի լաբորատորիայի սարքավորումների ցանկ Հավելված 106. Կերպարվեստի ֆակուլտետի համակարգչային լաբորատորիայի սարքավորումների ցանկ Հավելված 107. Գյումրու մասնաճյուղի լաբորատորիայի սարքավորումների ցանկ Հավելված 108.Դիլիջանի մասնաճյուղի լաբորատորիայի սարքավորումների ցանկ

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	72%
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	69%

Վերլուծել ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ:

Նյութատեխնիկական հագեցվածության և կրթական միջավայրի բարելավումը ԵԳՊԱ-ի ռազմավարական խնդիրներից է, ինչը ամրագրված է ԵԳՊԱ-ի 2012-2016թթ. ՌԾ-ի նպատակ 1-ի 7-րդ խնդրում և 2017-2021թթ. ՌԾ-ի նպատակ 2-ի 2-րդ խնդրում (Հավելվածներ 2 և 3): Կրթական միջավայրի առկայությունը կարևոր պայման է արդիական և որակյալ կրթական ծառայությունների մատուցման համար: Յուրաքանչյուր կրթական ծրագրի իրականացումը պահանջում է դրա յուրահատկություններին համապատասխանող միջավայր, որն իր մեջ ներառում է ժամանակակից սարքավորումներով հագեցված լաբորատորիաներ, արվեստանոցներ, արհեստանոցներ, գրադարան և այլն:

ԵԳՊԱ-ում իրականացվում են 17 կրթական ծրագրեր, որոնցից 8-ը բակալավրի, 8-ը մագիստրոսի և 1 հետազոտողի կրթական ծրագրերով: Նշված ՄԿԾ-երից 14-ը կիրառական բնույթի են և պահանջում են հատուկ արվեստանոցային և լաբորատոր ապահովվածություն (Հավելվածներ 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108): ՄԿԾ-երի և դրանց իրականացման համար անհրաժեշտ պայմաններով բավարարվածությունը արտահայտվում է աղյուսակում.

Մասնագիտությունը	Կրթական աստիճանը	Առկա հատուկ պայմանները
Դիզայն	Բակ., Մագ.	Արվեստանոցներ, Մանրակերտի (մակետի) լաբորատորիա, Համակարգչային լաբորատորիա, Մետաղի լաբորատորիա, Գրադարան:
Համակարգչային գրաֆիկա	Բակ., Մագ.	Արվեստանոցներ, Համակարգչային լաբորատորիա, Գրադարան:
Հագուստի մոդելավորում	Բակ., Մագ.	Արվեստանոցներ, Կարի լաբորատորիա, Համակարգչային լաբորատորիա, Գրադարան:
Կիրառական արվեստ	Բակ., Մագ.	Արվեստանոցներ, Խեցեգործության լաբորատորիա կամ/և Մետաղագործական արհեստանոց կամ/և Գորգագործական ու գոբելենագործական արհեստանոց, Համակարգչային լաբորատորիա, Գրադարան:
Գեղանկարչություն	Բակ., Մագ.	Արվեստանոցներ, Գրադարան:
Քանդակագործություն	Բակ., Մագ.	Արվեստանոցներ, Գրադարան:
Գրաֆիկա	Բակ., Մագ.	Արվեստանոցներ, Գրադարան, Գրաֆիկայի լաբորատորիա:
Արվեստաբանություն	Բակ., Մագ.	Լսարաններ, Գրադարան:
Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն	Հետազոտող	Հետազոտական կենտրոն, Գրադարան:

Անհրաժեշտ է նշել, որ կիրառական բնույթի մասնագիտությունների յուրաքանչյուր կուրսին հատկացվում է առանձին արվեստանոց, իսկ մասնագիտական լաբորատորիաները հարմարեցված են տարբեր կուրսերի և կրթական մակարդակների ուսանողների կարիքների բավարարմանը:

Այսպիսով, ԵԳՊԱ-ի ուսումնական ռեսուրսները ամբողջովին համապատասխանում են իրականացվող ՄԿԾ-երի կարիքներին:

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի արդյունավետությունը նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ն իր գործունեությունը իրականացնում է Երևանի երկու մասնաշենքերում՝ 3511,1 քմ և 2996.8 քմ, ինչպես նաև Գյումրու՝ 1618.9 քմ և Դիլիջանի՝ 1297.2 քմ մասնաճյուղերում:

ԵԳՊԱ-ն ունի շուրջ 15 լաբորատորիաներ և արհեստանոցներ ու ավելի քան 70 արվեստանոցներ և լսարաններ, որոնք օգտագործվում են ուսումնական ծրագրերի իրականացման համար: ԵԳՊԱ-ում գործում է 137 քմ. մակերեսով գրադարան, որը պարբերաբար թարմացվում է նոր գրականությամբ և մասնագիտական ամսագրերով: Գրադարանը, որի մասնաճյուղը գործում է նաև Գյումրիում ունի 18.224 օրինակ գիրք, որից՝

դասագիրք	547
արվեստի գրականություն և ալբոմ	10.307
գեղարվեստական	5.875
քարտեզ	61
ատլաս	7
ուսումնամեթոդական	1.055
այլ	1.794

Գրադարանում կան եզակի նմուշի գրքեր, որոնք տրվում են միայն տեղում ուսումնասիրելու, բայց գրադարանում առկա է պատճենահանման սարք, որն ուսանողներին հնարավորություն է տալիս պատճենահանել անհրաժեշտ նյութերը:
2016 թվականից մեկնարկել է գրադարանի քարտարանի թվայնացման գործընթացը, իսկ 2017թվականից կմեկնարկի գրադարանի գրքերի թվայնացումը: 2017 թվականին ԵԳՊԱ-ն կանդամակցի նաև KOHA միջազգային գրադարանային ռեսուրսների ցանցին:

2013 թվականին լաբորատորիաների, արվեստանոցների և արհեստանոցների հագեցվածությունից բավարարվածության վերաբերյալ ներքին շահակիցների շրջանում իրականացված հարցումների արդյունքում դուրս բերվեցին մի շարք խնդիրներ: Այդ խնդիրների լուծման նպատակով ԵԳՊԱ-ն դիմեց Համաշխարհային բանկի «Նորարարությունների մրցակցային հիմնադրամ» վարկային ծրագրին, որի սահմաններում ժամանակակից սարքավորումներով ամբողջությամբ վերազինվեցին ԵԳՊԱ-ի Հագուստի մոդելավորման, Համակարգչային գրաֆիկայի, Խեցեգործության և Դիզայնի լաբորատորիաները: 2015 թվականին իրականացված նմանատիպ հետազոտությունները ցույց տվեցին, որ ուսանողների 69% բավարարված են ԵԳՊԱ-ի լաբորատոր հագեցվածությամբ (Հավելված 35):

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ապահովված է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրով և ներքին շահակիցների արձագանքների հիման վրա գործողություններ է իրականացնում դրա բարելավման ուղղությամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:	
Հիմքեր	

Վերլուծել բյուջեի բաշխման արդյունավետությունը: Արդյո՞ք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ի տարեկան գործունեությունը պլանավորելիս՝ ֆինանսների բաշխումը կատարվում է՝ ըստ ռազմավարական ծրագրով տվյալ տարվա համար նախատեսված գործողությունների: Ուսումնասիրելով ԵԳՊԱ-ի առաքելությանը հասնելու համար այդ տարում նախատեսվող գործողությունները և հաշվի առնելով ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման և շենքային և նյութական ռեսուրսների պահպանման համար անհրաժեշտ ծախսերը՝ կազմվում է նախահաշիվ: Արդյունքում ստացվող բյուջեի նախահաշիվը քննարկվում և հաստատվում է կառավարման խորհրդի կողմից: Ֆինանսների բաշխման քաղաքականության թափանցիկության ապահովման նպատակով յուրաքանչյուր տարվա բյուջեի բաշխումը ըստ մուտքերի և ծախսերի ներկայացվում է ռեկտորի տարեկան հաշվետվությունում, որը հրապարակվում է կայքէջում (Հավելված 23):

ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների միջև ռեսուրսների արդյունավետ բաշխումը իրականացվում է ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգով նախատեսված գործողությունների միջոցով: Յուրաքանչյուր ստորաբաժանում, իր տարեկան գործունեությունը պլանավորելիս, ներկայացնում է նաև իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ցուցակը, որը համաձայնեցվում է պրոռեկտորների հետ, և որի հաստատումից հետո ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորը միջոցառումներ է իրականացնում դրանց ձեռքբերման և ստորաբաժանումներին տրամադրելու ուղղությամբ:

Վերջին տարիներին, բացի առկա ռեսուրսների պահպանման համար անհրաժեշտ ծախսերից, ԵԳՊԱ-ն զգալի ներդրումներ է անում ուսումնական լաբորատորիաները և վարչական աշխատակազմի համար նոր սարքավորումներով ապահովելու ուղղությամբ, որի համար հաճախ օգտագործում է արտաքին միջազգային ազբյուրներից ստացվող ֆինանսավորումը: Վերջին 3 տարիներին նոր սարքավորումների վրա ծախսված գումարը կազմում է.

տարին	միջազգային արտաքին աղբյուրներ	ուս. վճարներ	ընդամենը
2014	32.221.765դր	17.612.915դր	49.834.680 դր (9.5%)
2015	3.717.000դր	-	3.717.000դր (0.8%)
2016	14.188.615դր	5.578.560դր	19.767.175 (3.1%)

ԵԳՊԱ-ի Գյումրու մասնաճյուղում նույն ժամանակահատվածում նոր սարքավորումների վրա ծախսված գումարը կազմում է մոտ 5.000.000 դր.

Հաշվի առնելով, որ այդ տարիների ընթացքում աշխատավարձային ֆոնդը միջինում կազմել էր բյուջեի 82%, բավականին մեծ ներդրում է:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ունի իր առաքելությանը և ռազմավարական նպատակներին

համապատասխան ռեսուրսների բաշխման հստակ քաղաքականություն և մեխանիզմներ ու համապատասխան ֆինանսական ներդրումներ է անում իր գործունեության համար անհրաժեշտ միջոցների և սարքավորումների գործարկման և զարգացման համար:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:	
Հիմքեր	
Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ու շարունակականությունը ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչպես արդեն նշվել է, ԵԳՊԱ-ի առաքելության և կրթական ու այլ նպատակների իրականացման, գործընթացների շարունակականության ապահովման ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը նկարագրված է 7.բ չափորոշչում: ՄԿԾ-երի նպատակների իրականացման համար անմիջականորեն պատասխանատու են համապատասխան ֆակուլտետները (ուսումնական միջավայրի ապահովման և գործընթացների ընդհանրական կազմակերպման տեսակետից) և ամբիոնները (բովանդակության և ուսումնական գործընթացի ապահովման տեսակետից): Ինչպես ԵԳՊԱ բոլոր ստորաբաժանումները, այնպես էլ դեկանատները ու ամբիոնները յուրաքանչյուր տարի կազմում են ՄԿԾ-երի և այլ գործողությունների տարեկան պլան, համաձայն որի տրամադրվում են իրենց լիազորությունների սահմաններում գործընթացների ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսները (Հավելված 19): Այսպիսով, ԵԳՊԱ-ում գործում են ՄԿԾ-երի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն և մեխանիզմներ:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:	
Հիմքեր	
Վերլուծել որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ռազմավարական ծրագրի սահուն և արդյունավետ իրականացման պայման է համապատասխան ռեսուրսային բազայի առկայությունը, պահպանումը և բարելավումը: ԵԳՊԱ-ի կրթական նպատակների իրականացման համար օգտագործվող ռեսուրսային բազան և դրա պահպանման ու բարելավման քաղաքականությունը և մեխանիզմները նկարագրված են 7.ա և 7.բ չափորոշչում: Հետազոտությունները հիմնականում իրականացվում են ամբիոններում, մասնագիտական լաբորատորիաներում, արվեստանոցներում, գրադարանում: Հետազոտական գործունեությունը համակարգում է ԵԳՊԱ-ի հետազոտական կենտրոնը, որը իրականացնում է հետազոտություններ կատարող դասախոսների խորհրդատվություն, կազմակերպում է ԵԳՊԱ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքների տարածումը	

և այլն:

Հասարակությանը ծառայություններ մատուցելու նպատակով ԵԳՊԱ-ն շարունակաբար իրականացնում է ցուցահանդեսներ, պլենեռներ, քննարկումներ, խորհրդատվություններ և այլ միջոցառումներ, ինչպես նաև նախապատրաստական դասընթացներ:

ԵԳՊԱ-ի տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվող միջոցառումների արդյունավետ կազմակերպելու նպատակով ԵԳՊԱ-ն վերանորոգել և կիրառման մեջ է դրել մեծ կոնֆերանս դահլիճը և քննարկումների ու խորհրդատվությունների փոքր դահլիճը, ինչպես նաև ցուցասրահը: Այս նոր պայմանների ստեղծումը միտված է ԵԳՊԱ-ի հետազոտության և ծառայությունների մատուցման ուղղություններով իրականացվող գործողությունների նոր մակարդակի բարձրացմանը:

ԵԳՊԱ-ի վարչական անձնակազմը նույնպես ապահովված է բոլոր անհրաժեշտ սարքերով և սարքավորումներով, որոնք պարբերաբար թարմացվում են:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ապահովված է իր կրթական և այլ ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով և միջոցառումներ է իրականացնում առկա ռեսուրսների պահպանման և զարգացման ուղղությամբ, ինչը նպաստում է գործընթացների կայունության ապահովմանը և բարելավմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Հիմքեր	Հավելված 109. ԵԳՊԱ փաստաթղթաշրջանառության սխեմա

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ փաստաթղթերի կառավարման համակարգը հստակորեն տարանջատում և ցույց է տալիս բուհի մուտքային, ներքին և ելքային փաստաթղթերի շարժը: Առկա համակարգը ապահովում է բուհում իրականացվող տարբեր գործընթացների սահուն և թափանցիկ ընթացքը (Հավելված 109):

ԵԳՊԱ ներքին փաստաթղթերի մշակման, պահպանման, ինչպես նաև վերանայման համար առկա են կազմակերպական կանոններ: Յուրաքանչյուր մշակված փաստաթուղթ պահպանվում է թղթային և/կամ էլեկտրոնային տարբերակով: Հրապարակման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերը տեղադրվում են նաև ԵԳՊԱ կայքէջում:

Փաստաթղթերը մշակվում և պահպանվում են ԵԳՊԱ տարբեր ստորաբաժանումներում՝ կախված գործընթացի բնույթից. ուսանողների վերաբերյալ հիմնական փաստաթղթերը պահվում են Ուսումնական գործընթացի հաշվառման բաժնում, կրթական գործընթացների բարեփոխումներին վերաբերող փաստաթղթերը՝ Ուսումնամեթոդական բաժնում, բուհի աշխատակիցների վերաբերյալ տեղեկությունը՝ Մարդկային Ռեսուրսների բաժնում և այլն: Վաղեմության ժամկետը անցած բուհի բոլոր փաստաթղթերը պահվում են արխիվում, որի գործունեության հիմքում ընկած է «ԵԳՊԱ արխիվի կանոնակարգ»-ը (Հավելված 41):

Բուհի առանձին ստորաբաժանումներում առկա են տվյալների պահպանման և կառավարման էլեկտրոնային համակարգեր, ինչպիսիք են՝ հաշվապահական գործընթացների, ուսանողների ուսումնական առաջադիմության, աշխատակազմի տվյալների համար նախատեսված համակարգերը:

Դասավանդման և ուսուցման փաստաթղթաշրջանառության գործընթացը առավել

համակարգված դարձնելու նպատակով բուհը կիրառում է ուսանողների անձնական և ուսումնական գործընթացին վերաբերող տվյալների պահմանման ու կառավարման էլեկտրոնային համակարգ: Այն իր մեջ ներառում է միայն ուսանողների առաջադիմության, անձնական և այլ տվյալների վերաբերյալ տեղեկություն, ուստի չի արտացոլում և պարունակում դասավանդման ու ուսուցման գործընթացին վերաբերող ամբողջ տեղեկությունը և փաստաթղթերը: Դասավանդման և ուսուցման վերաբերյալ հիմնական տեղեկությունը և փաստաթղթերը հավաքագրվում և պահվում են ամբիոններում, դեկանատներում և Ուսումնական վարչությունում:

Դասավանդման և ուսուցման գործընթացի վերաբերյալ փաստաթղթերը նպաստում են կրթական ծրագրերի առավել արդյունավետ իրականացմանը: Սակայն դրանց կիրառության ժամանակ կարող են առաջանալ որոշակի մարտահրավերներ, որոնք հաղթահարելու նպատակով կազմակերպվում են սեմինար-քննարկումներ, տեղի է ունենում փորձի փոխանակում:

Առկա համակարգերը միմյանց հետ կապակցված չեն, ուստի ԵԳՊԱ փաստաթղթաշրջանառության գործընթացում հիմնական մարտահրավերը փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային ամբողջական համակարգի ձևավորումն է: Ներկայումս ԵԳՊԱ-ն քայլեր է ձեռնարկում միտված փաստաթղթաշրջանառության գործընթացի բարելավմանը: 2017թ. կներդրվի էլեկտրոնային կառավարման նոր համակարգը, որը միտված է ԵԳՊԱ փաստաթղթաշրջանառության գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև կնպաստի ստորաբաժանումների միջև հաղորդակցական կապերի ամրապնդմանը:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում գործում է փաստաթղթաշրջանառության քաղաքականություն և գործընթացների կառավարման ընթացակարգեր, որոնք բարելավման փուլում են:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Հիմքեր	

Վերլուծել առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետությունը , հիմնվելով շահեկիցների արձագանքների վրա:

Ներքին շահակիցների անվտանգ գործունեությունը ապահովելու նպատակով ԵԳՊԱ-ում գործում են պարետային ստորաբաժանում և բուժօգնության կետ: Պարեկային ստորաբաժանումը ապահովում է կողմնակի անձանց մուտքի սահմանափակումը, ինչպես նաև ԵԳՊԱ-ի տարածքների և գույքի շուրջօրյա հսկումը: Բուժօգնության կետը ապահովում է ներքին շահակիցների առաջնային բուժօգնությունը, ինչի համար առանձնացված է հատուկ տարածք: Բուժկետը նաև ապահովված է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքով, որը պարբերաբար թարմացվում է:

ԵԳՊԱ-ն առանձնակի ուշադրություն է դարձնում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներին: Ցավոք, տարածքները հարմարեցված չեն հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող ուսանողների համար, բայց ԵԳՊԱ-ն ուսումնական գործընթացում ակտիվ ներգրավում է լսողական, խոսակցական և տեղաշարժի հնարավորությունները չսահմանափակող այլ արատներով ուսանողներին: Թիրախային նման խմբի համար առավել արդյունավետ կրթություն ապահովելու, ինչպես նաև նրանց տարբեր գործընթացներում ներգրավելու համար, ԵԳՊԱ-ն նախաձեռնել է ERASMUS PLUS-ի

INCLUSION ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ոչ միայն ձեռք կբերվեն նյութական ռեսուրսներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների, այլ նաև կմշակվեն հատուկ մեթոդներ նրանց ուսուցման և այլ գործընթացներում լիարժեք ներգրավելու համար:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում ստեղծված է առողջապահական և անվտանգության պահպանման ապահով և անվտանգ միջավայր: Հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող ուսանողների համար միջավայրը դեռևս հարմարեցված չէ, սակայն ուսումնական գործընթացում ներգրավված են այլ կրթության առանձնահատում պայմանների կարիք ունեցող այլ ուսանողներ, ինչպես նաև ակտիվ միջոցառումներ են ձեռնարկվում (ֆինանսավորում, գործողությունների ծրագիր և այլն) այդ ուսանողների միջավայրը բարելավելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հիմքեր	

Վերլուծել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողներին և դասախոսներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով ԵԳՊԱ-ի Որակի ապահովման կենտրոնը պարբերաբար հարցումներ է անցկացնում ուսանողների և դասավանդողների շրջանում (Հավելված 12): Ռեսուրսների վերաբերյալ տվյալներ են հավաքագրվում նաև դեկանների և ամբիոնների վարիչների հետ ՈԱ կենտրոնի աշխատակիցների հանդիպում-քննարկումների արդյունքում: Ստացված տվյալները վերլուծվում են և արդյունքների հիման վրա կազմվում են հաշվետվություններ (Հավելված 35), որոնք թափանցիկության ապահովման նպատակով հրապարակվում են կայքէջում: Վերլուծությունների արդյունքները հաշվի են առնվում հետագա գործունեության պլանավորման ընթացքում, ինչի մեխանիզմները նկարագրված են 2.գ չափորոշչում:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Վերլուծել Չափանիշ 7-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր

1. *ԵԳՊԱ-ն ապահովված է կրթական ծրագրերի և այլ ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով, ուսումնական միջավայրով և ներքին շահակիցների արձագանքների հիման վրա գործողություններ է իրականացնում դրանց բարելավման ուղղությամբ:*
2. *ԵԳՊԱ-ն ունի իր առաքելությանը և ռազմավարական նպատակներին համապատասխան ռեսուրսների բաշխման հստակ քաղաքականություն և*

մեխանիզմներ ու համապատասխան ֆինանսական ներդրումներ է անում իր գործունեության համար անհրաժեշտ միջոցների և սարքավորումների գործարկման և զարգացման համար:

3. *ԵԳՊԱ-ում գործում է փաստաթղթաշրջանառության քաղաքականություն և գործընթացների կառավարման հաստակ ընթացակարգեր:*
4. *ԵԳՊԱ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ:*

Թույլ կողմեր

1. *Հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող անձանց համար չհարմարեցված միջավայր:*
2. *Կազմակերպաիրավական ձևով պայմանավորված ձեռնարկատիրական գործունեության սահմանափակումների արդյունքում լրացուցիչ ֆինանսական աղբյուրներից ստացվող միջոցների սակավություն:*

Արտաքին հնարավորություններ

1. *Հաստատության կազմակերպաիրավական ձևի փոփոխություն՝ ՊՈԱԿ-ից հիմնադրամի:*
2. *Գրանտային և այլ ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորություններ:*

Արտաքին վտանգներ

1. *Բազմաբնույթ նոր ֆինանսական աղբյուրների օգտագործման օրենսդրական սահմանափակումներ:*

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ԵԳՊԱ-ն վերոնշյալ թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ պլանավորում է իրականացնել հետևյալ քայլերը և գործընթացները.

1. *Հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող անձանց համար ԵԳՊԱ-ի տարածքների հարմարեցմանն ուղղված ծրագրի մշակում և իրականացում:*
2. *Հիմնադրամի կարգավիճակ ձեռքբերելուց հետո ֆինանսական ներհոսքի մեծացմանն ուղղված ձեռնարկատիրական գործունեությունների ոլորտների և ծրագրերի մշակում և ներդրում:*

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Կրթական, հետազոտական և այլ գործունեության վերաբերյալ թափանցիկ և անաչառ տեղեկատվության տարածման միջոցով ԵԳՊԱ-ն հավակնում է լինել պետության և հասարակության առջև հաշվետու ռազմավարական արդյունավետ գործունեության վերաբերյալ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:	
Հիմքեր	Հավելված 110. Բուկլետներ Հավելված 111. Բրոշուրնե Հավելված 112. Գրքեր
Վերլուծել, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Գործունեության արդյունավետ հաշվետվողականության և թափանցիկության ապահովումը ԵԳՊԱ-ի մարտահրավերներից է և ամրագրված է 2012-2016 թվականի ՌԾ-ի նպատակ 5-ի խնդիր 2-ում և 2017-2021 թվականի ՌԾ-ի նպատակ 5-ի խնդիր 5.3-ում (Հավելվածներ 2 և 3): Գործունեության հաշվետվողականությունը ՀՀ կառավարության առջև ԵԳՊԱ-ն ապահովում է ՀՀ ԿԳՆ-ին տարբեր գործընթացների մասին սահմանված ձևաչափերով բազմազան հաշվետվությունների և այլ տեղեկատվության տրամադրման միջոցով, ինչպես նաև ԵԳՊԱ-ի կառավարման խորհրդի գնահատմանը ներկայացվող ռեկտորի տարեկան հաշվետվությունների միջոցով: Հասարակության առջև հաշվետվողականության ապահովման նպատակով ԵԳՊԱ-ն քաղաքականություն է որդեգրել (Հավելված 47), համաձայն որի՝ բուհի բոլոր ստորաբաժանումներն իրականացրած կամ իրականացվող աշխատանքների և միջոցառումների մասին տեղեկատվություն են հաղորդում հասարակության կապերի պատասխանատուին ԵԳՊԱ-ի կայքէջում (այցելուների թիվը՝ ≈ 490.000), ֆեյսբուքյան էջում (նորություններին գրանցվածների թիվը ≈ 7.700) և այլ ԶԼՄ-ներով տարածելու նպատակով: ԵԳՊԱ-ի կայքէջում հրապարակվում են նաև ռեկտորի տարեկան հաշվետվությունները, ինչը հնարավորություն է տալիս հասարակությանը ներկայացնել ԵԳՊԱ-ի յուրաքանչյուր տարվա գործունեությունը: Գործունեության անաչառության ապահովման նպատակով ԵԳՊԱ-ի կայքէջում են	

հրապարակվում նաև ՈԱ կենտրոնի կողմից իրականացվող տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման վերլուծությունները, որոնց արդյունքները հաշվի են առնվում բուհի հետագա գործունեության պլանավորման ընթացքում:

Հաշվետվողականության ապահովման մեխանիզմ է նաև ԵԳՊԱ-ի ուսանողների և դասախոսների անհատական և խմբային ցուցահանդեսների կազմակերպումը, ինչպես նաև բակալավրական և մագիստրոսական ավարտական աշխատանքների բաց (ցուցահանդեսների և դեֆիլեների) կազմակերպումը:

ԵԳՊԱ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն է տարածվում նաև բազմաբնույթ բրոշուրների, բուկլետների և հոբելյանական տարելիցներին նվիրված հրատարակությունների միջոցով (Հավելվածներ 48 և 110, 111, 112):

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ունի հաշվետվողականության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ, որոնց միջոցով ապահովում է իր գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Հիմքեր	

Վերլուծել հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ինչպես արդեն նշվել է չափորոշիչ 8.ա.-ում, ԵԳՊԱ-ի ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունն ապահովվում է բուհի-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, բոլոր կարգերը, ընթացակարգերը, ձեռնարկները և այլ համակարգող փաստաթղթերը պաշտոնական կայքէջում հրապարակմամբ, ինչպես նաև ֆեյսբուքի ու ԶԼՄ-ների միջոցով տեղեկատվության տարածմամբ:

Այս մոտեցումը ապահովում է ԵԳՊԱ-ի ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հիմքեր	

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունավետությունը: *Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:*

Հասարակության կողմից ԵԳՊԱ-ի գործունեության վերաբերյալ հետադարձ կապի ապահովումը հիմնականում իրականացվում է ԵԳՊԱ-ի կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով: ԵԳՊԱ-ի գործունեության տարբեր ուղղությունների և գործընթացների վերաբերյալ իրենց կարծիքները կարող են արտահայտել բոլոր շահագրգիռ անձիք՝ ԵԳՊԱ էլեկտրոնային փոստի հասցեին նամակ ուղարկելով կամ ֆեյսբուքում համապատասխան նշումներ կատարելով: Հասարակության կողմից ստացվող արձագանքները հավաքագրվում են հասարակայնության հետ կապերի պատասխանատուի կողմից և ներկայացվում գործունեության համար

պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարներին և ոլորտը համակարգող պրոոեկտորին: Կարծիքները քննարկվում և համապատասխան լուծումներ են առաջակվում բացասական արձագանքներ ստացած գործընթացները բարելավելու կամ դրական արձագանքների արժանացած գործընթացներն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

ԵԳՊԱ-ի հիմնական գործընթացների վերաբերյալ հետադարձ կապի աղբյուր են նաև արտաքին շահակիցների շրջանում ՈԱ կենտրոնի կողմից իրականացվող հարցումները և հանդիպումները:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հիմքեր	

Վերլուծել հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ն հասարակությանը լրացուցիչ կրթական ծառայություններ է մատուցում նախապատրաստական և ֆակուլտատիվ դասընթացների իրականացման միջոցով:

Նախապատրաստական դասընթացները միտված են ԵԳՊԱ-ի պոտենցիալ դիմորդների մոտ գծանկարի, գունանկարի և կոմպոզիցիայի ուղղությամբ ԵԳՊԱ-ի առաջին կուրսում սովորելու համար անհրաժեշտ գիտելիքի և կարողությունների ձևավորմանը: Դասընթացներն իրականացվում են վճարովի հիմունքներով յուրաքանչյուր տարի ԵԳՊԱ-ի բոլոր կիրառական մասնագիտությունների ուղղությամբ, և դրանց կարող են մասնակցել բոլոր ցանկացողները առանց տարիքային սահմանափակումների: 2016 թվականի ընթացքում նախապատրաստական դասընթացներում ներգրավված է եղել շուրջ 60 պոտենցիալ դիմորդ:

ԵԳՊԱ-ի ուսանողների համար կազմակերպվում են նաև անվճար ֆակուլտատիվ դասընթացներ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն, իսկ օտարերկրյա ուսանողների համար՝ նաև հայերեն: Ֆակուլտատիվ դասընթացներում 2016 թվականի ընթացքում ներգրավված են եղել շուրջ 155 ուսանող:

Նախապատրաստական և ֆակուլտատիվ դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է նաև ռեկտորի տարեկան հաշվետվություններում:

Ներկայացնել քաղաքացի դաստիարակելու գործում հաստատության ունեցած դերն ու կատարած ներդրումները: Նշել հիմնական ձեռքբերումներն ու խոչընդոտները:

Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանն է միտված ԵԳՊԱ-ի ամբողջ առաքելությունը: Համաձայն իր առաքելության՝ ԵԳՊԱ-ն կարևորում է հասարակության կարիքներին համապատասխան ազգային և միջազգային մակարդակներում մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման միջոցով իր ազդեցությունն ազգային մշակույթի և տնտեսության զարգացման, հետազոտությունների միջոցով գիտական մտքի և ազգային մշակույթի տարածման, ինչպես նաև ազգային արժեքների ձևավորման միջոցով հասարակության համախմբման և գեղագիտական ճաշակի զարգացման վրա:

Առաքելության նշված դրույթներին հասնելու համար ԵԳՊԱ-ն իրականացնում է կրթական ծառայություններ և հետազոտություններ, որոնց միջոցով պատրաստված

մասնագետները իրենց հետագա գործունեությամբ նպաստում են ազգային մշակույթի և տնտեսության զարգացմանը, գիտական մտքի և ազգային մշակույթի տարածմանը, ինչպես նաև հասարակության համախմբմանը և գեղագիտական ճաշակի բարձրացմանը: Կրթական և հետազոտական գործընթացները մանրամասն ներկայացված են 3-րդ և 6-րդ չափանիշներում, ինչպես նաև սույն վերլուծության այլ բաժիններում:
Հասարակության համախմբմանը և գեղագիտական ճաշակի զարգացմանն են ուղղված նաև ԵԳՊԱ-ի ցուցասրահում և այլ վայրերում բուհի դասախոսների, ուսանողների և շրջանավարտների ցուցահանդեսների, զեկուցումների և մշակութային այլ միջոցառումների կազմակերպումը: Յուրաքանչյուր տարի կազմակերպվող մշակութային միջոցառումների թիվը և առանձնահատուկ ուշադրության արժանի միջոցառումների ցուցակը ներկայացվում են ռեկտորի տարեկան հաշվետվություններում (Հավելված 23):

Այսպիսով, ԵԳՊԱ-ի գործունեությունը միտված է հասարակությանը գիտելիքի և գեղագիտական արժեքների փոխանցմանը ու կիրառվում են այդ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներ:

Վերլուծել Չափանիշ 8-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր

1. *ԵԳՊԱ-ի գործունեությունը միտված է հասարակությանը գիտելիքի և գեղագիտական արժեքների փոխանցմանը:*
2. *ԵԳՊԱ-ն ունի հաշվետվողականության քաղաքականություն և ընթացակարգ, որի միջոցով ապահովում է իր գործունեության և ընթացակարգերի թափանցիկությունը, հրապարակայնությունը ու հասանելիությունը հասարակությանը:*
3. *ԵԳՊԱ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:*

Թույլ կողմեր

1. *Բացակայում են լրացուցիչ կրթական ծառայությունների արդյունավետությունը գնահատելու գործընթացները:*

Արտաքին հնարավորություններ

1. *Նորագույն տեխնոլոգիաների և հաղորդակցման միջոցների զարգացմամբ պայմանավորված՝ հասարակության առջև հաշվետվողականության, թափանցիկության և հետադարձ կապի ապահովման նոր մեխանիզմների ձևավորում:*

Արտաքին վտանգներ

1. *Հասարակության շրջանում արվեստի գործունեության վերաբերյալ հետաքրքրվածության ոչ շատ բարձր մակարդակ:*

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ԵԳՊԱ-ն վերոնշյալ թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ պլանավորում է իրականացնել հետևյալ քայլերը և գործընթացները.

1. *Հասարակությանը առաջարկվող կրթական ծրագրերի և այլ ծառայությունների մասին իրազեկման գործընթացների զարգացում:*
2. *Հանրապետության մշակութային օջախների հետ համագործակցության զարգացում:*
3. *Ուսանողների մոտ համամարդկային մշակութային արժեքների և հումանիստական գաղափարների արմատավորմանն ուղղված մեխանիզմների զարգացում:*
4. *Ուսանողներին շարունակական ինքնազարգացմանը և ստեղծագործական գործունեությանը նախապատրաստում:*
5. *Ազգային և միջազգային մակարդակներում մշակութային միջոցառումների կազմակերպում՝ ներգրավելով հանրության լայն շրջանակը:*
6. *Ամենամյա ավարտական աշխատանքների հրապարակային պաշտպանության միջոցով շահակիցների շրջանում կրթական ծրագրերի արդյունքների հասանելիության ապահովում:*
7. *ԵԳՊԱ գործունեության հրապարակայնության զարգացում՝ պաշտոնական կայքի բարելավման, տեղեկատվության տարածման և այլ միջոցներով:*
8. *Լրացուցիչ կրթական ծառայությունների արդյունավետության գնահատման գործընթացների և մեխանիզմների մշակում և ներդրում:*

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

ԵԳՊԱ-ն հավակնում է ակտիվորեն համագործակցել տեղական և միջազգային արտաքին գործընկերների հետ, ապահովել ուսանողների շարժունությունը և բարձրացնել իր գրավչությունը օտարերկրյա ուսանողների շրջանում միջազգայնացմանը նպաստող փորձի փոխանակման և շարունակական զարգացման միջոցով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	Հավելված 113. ԵԳՊԱ միջազգայնացման ռազմավարություն

Վերլուծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ն միտված է կատարել իր գործունեության շարունակական զարգացում և համապատասխանեցում միջազգային պահանջներին, ինչը արտացոլված է հաստատության 2012-2016թթ. և նոր 2017-2021թթ. ռազմավարական ծրագրերում, որոնց նպատակները և խնդիրները սահմանված են՝ հաշվի առնելով արդի միջազգային միտումները, և անդրադառնում են հաստատության գործունեության կարևորագույն ոլորտներին, ինչպիսիք են.

- Կառավարման համակարգ:
- Կրթական ծրագրեր:
- Հետազոտություն:
- Արտաքին կապեր:
- Հասարակությանը մատուցվող ծառայություններ:
- Որակի ապահովման համակարգ (Հավելված 3):

Բացի այդ, 2016թ. մշակվել և հաստատվել է ԵԳՊԱ միջազգայնացման ռազմավարությունը (Հավելված 113), որը նույնպես անդրադառնում է հաստատության գործունեության կարևորագույն ոլորտների զարգացմանը, մասնավորապես՝արտաքին կապերի բաժնի գործունեության բարելավում, արտաքին կապերի զարգացում, ուսանողների և դասախոսների շարժունության և կրթական ծրագրերի միջազգայնացման խթանում:

ԵԳՊԱ-ն սահմանված նպատակներին հասնելու համար, կիրառում է տարբեր միջոցներ՝ դիմում է դրամաշնորհային ծրագրերի, կազմակերպում է վերապատրաստումներ անձնակազմի

կարողությունների զարգացման համար իրականացնում է տարբեր մակարդակներում միջազգայնացմանը նպաստող կարգերի և ընթացակարգերի մշակում և բարելավում, պլանավորում, մշտադիտարկում և բարելավում է ստորաբաժանումների տարեկան գործունեությունը՝ ռազմավարական նպատակներին համահունչ, կազմակերպում է մշակութային միջոցառումներ՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ:

Օտարերկրյա բուհերի և հաստատությունների հետ համատեղ իրականացվող դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը (Հավելված 28) խթանում է փորձի փոխանակումը և Եվրոպական լավագույն մոտեցումների որդեգրումը: Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կամ ԵԳՊԱ նախաձեռնությամբ կազմակերպվող վերպատրաստումները նպաստում են անձնակազմի մոտ բուհի միջազգայնացման համար անհրաժեշտ կարողությունների ձևավորմանը, քանի որ հիմնված են լավագույն փորձի ուսումնասիրության վրա և խթանում են արդի մոտեցումների հետագա կիրառումը: ԵԳՊԱ տարբեր կարգերի և ընթացակարգերի մշակման կամ բարելավման հիմքում նույնպես միջազգային և ազգային փորձի ուսումնասիրություններն են, ինչը նպաստում է գործունեության զարգացմանը՝ միջազգային մոտեցումներին համահունչ: ԵԳՊԱ-ն իրականացնում է նաև տարբեր ստորաբաժանումների գործունեության տարեկան պլանավորում և մշտադիտարկում, որը բխում է ռազմավարական ծրագրից և այդպիսով նպաստում է բուհի գործունեության շարունակական միջազգայնացմանը և զարգացմանը: Կազմակերպելով մշակութային միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, սեմինարներ և բաց քննարկումներ, բուհը խթանում է արտաքին կապերի զարգացումը թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում, ինչն էլ նպաստում է համապատասխան միջավայրի ձևավորմանը:

Վերջին երեք տարիների ընթացքում միջազգայնացմանը ուղղությամբ բուհը իրականացրել է.

- Կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկի մշակում՝ TEMPUS ALIGN դրամաշնոհային ծրագրի շրջանակներում, որը ապահովում է ԵԳՊԱ կրթական ծրագրերի մշակման քաղաքականության համապատասխանությունը ազգային և միջազգային պահանջներին:
- 4 բակալավրի և 4 մագիստրոսի կրթական ծրագրերի վերանայում՝ նոր քաղաքականության համաձայն:
- Ուսանողների գնահատման համակարգի բարելավում՝ ուսումնասիրելով օտարերկրյա հաստատությունների փորձը և այդպիսով ապահովելով համակարգի միջազգային մոտեցումներին համահունչ լինելը:
- Վերպատրաստումների կազմակերպում՝ կրեդիտների փոխանակման, գնահատման համակարգի, կրթական ծրագրերի վերանայման և այլ թեմաներով, որոնց շրջանակում վերապատրաստվել են մոտ 300 մասնակից:
- Հետազոտողի կրթական ծրագրի բարելավում Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխան՝ TEMPUS VERITAS դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ազգային և միջազգային փորձագետների մասնակցությամբ:
- Հետազոտական կենտրոնի ստեղծում, որը կխթանի հետազոտության միջազգայնացումը և արտաքին գործընկեների հետ համագործակցությունը:
- TEMPUS PICASA դրամաշնորհային ծրագրի շրջանակներում արտաքին կապերի բաժնի գործառույթների վերանայում, միջազգայնացման ռազմավարության մշակում և դրա որակի ապահովման քաղաքականության հստակեցում և այլն՝ հիմնվելով օտարերկրյա հաստատությունների լավագույն փորձի ուսումնասիրությունների վրա:
- Ազգային և միջազգային 315 մշակութային միջոցառումների կազմակերպում՝

արտաքին շահակիցների ներգրավմամբ:

Այսպիսով, ԵԳՊԱ քաղաքականությունն է ապահովել իր գործունեության բոլոր ոլորտների միջազգայնացումը, ինչի համար ունի և կիրառում է փորձի փոխանակմանը և զարգացմանը միտված մեխանիզմներ և գործիքներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:	
Հիմքեր	

Վերլուծել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ում արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման համար գործում է Արտաքին կապերի բաժին (Հավելված 26), սակայն մյուս ստորաբաժանումները՝ յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակում, նույնպես պատասխանատու են իրենց գործընթացների միջազգայնացման համար՝ ակտիվ համագործակցելով Արտաքին կապերի բաժնի հետ: Օրինակ, ուսումնական վարչությունը պատասխանատու է միջազգային մոտեցումներին համահունչ կրթական ծրագրերի մշակման, գնահատման համակարգի բարելավման, ուսանողների շարժունության հետ կապված ուսումնասիրությունների իրականացման և այլ կրթական գործընթացների համար, իսկ կարիերայի կենտրոնը՝ դպրոցների, աշխատաշուկայի և շրջանավարտների հետ կապի ստեղծման և համապատասխան ուսումնասիրությունների իրականացման համար:

Արտաքին կապերի բաժնի հիմնական գործառույթներն են՝ օտարերկրյա հաստատությունների հետ համագործակցության պայմանագրերի ձեռքբերում, դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունության գործընթացի կազմակերպում և իրականացում (Հավելված 63), ազգային և միջազգային հաստատությունների հետ համատեղ միջոցառումների կազմակերպում, օտարերկրյա ուսանողների ընդունելության կազմակերպում (Հավելված 70) և ՀՀ-ում կացությանը օժանդակում, բաժնի գործունեության լուսաբանում, գործունեության տարեկան պլանավորում, բարելավում և հաշվետվողականության ապահովում:

Արտաքին կապերի բաժնի գործունեությունը բխում է ԵԳՊԱ ռազմավարական ծրագրի նպատակներից, պլանավորվում, իրականացվում և մշտադիտարկվում է՝ տարեկան կտրվածքով: Այդպես, վերջին երեք տարիների ընթացքում՝

- Վերանայվել են օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ գործող պայմանագրերը և ձեռք են բերվել նոր համագործակցության պայմանագրեր:
- Մշակվել է ուսանողների շարժունության իրականացման կարգը՝ դառնալով ավելի հստակ և ապահովելով արդյունքների ճանաչման կանոնակարգված գործընթաց:
- Բարելավվել է ուսանողների շարժունության եռակողմ պայմանագիրը՝ ներառելով ԵԳՊԱ-ին, ուսանողին և ընդունող հաստատությանը վերաբերող հիմնական պահանջները և պարտականությունները:
- Իրականացվել է 21արտագնա և 3 ներգնա /մեկը՝ Ֆրանսիայից, երկուսը՝ Ուկրաինայից/ ուսանողների միջազգային շարժունություն:
- Կազմակերպվել է ավելի քան 30 միջոցառում՝ արտաքին գործընկերների մասնակցությամբ:
- Հստակեցվել է օտարերկրյա ուսանողների ընդունելության կարգը:

- Մշակվել է արտաքին կապերի բաժնի կանոնակարգը՝ ներառելով միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա սահմանված գործառույթները:

Շարունակական բարելավման նպատակով արտաքին կապերի բաժնի կողմից իրականացվում է գործունեության արդյունավետության գնահատում ուսանողների շրջանում՝ հարցումների և հանդիպումների միջոցով (Հավելված 37):

ԵԳՊԱ մասնագիտության կրթական ծրագրերի արդիականացման համար պատասխանատու ուսումնական վարչությունը իրականացնում է միջազգային փորձի ուսումնասիրություն և դրա նպատակով արտաքին կապերի զարգացում՝ հիմնականում դրամաշնորհային ծրագրերի միջոցով: Բացի այդ, ազգային մակարդակում, ամբիոնների հետ համատեղ իրականացվում է կապի հաստատում և համագործակցություն տարբեր կազմակերպությունների հետ պրակտիկայի կազմակերպման, կրթական ծրագրերի բարելավման և այլ նպատակներով: ԵԳՊԱ կարիերայի կենտրոնը հաստատում և ընդլայնում է համագործակցությունը դպրոցների, գործատուների և շրջանավարտների հետ ուսումնական գործընթացի և կրթական միջավայրի բարելվմանը նպաստելու նպատակով:

Այսպիսով, ԵԳՊԱ-ում գործում է վարչարարության հստակ մեխանիզմ, որը ապահովում է բոլոր ստորաբաժանումների կողմից իրականացվող գործունեության միջազգայնացումը և փոխկապակցվածությունը, ինչը վկայում է, որ ԵԳՊԱ-ում առկա է ենթակառուցվածք, որն ապահովում է արտաքին կապերի և միջազգայնացման կանոնակարգված գործընթացը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:	
Հիմքեր	Հավելված 114. ԵԳՊԱ-ի և այլ հաստատությունների միջև համագործակցության համաձայնագրերի ցուցակ

Ներկայացնել վերջին 3 տարիներին արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Վերլուծել ՄՈՒՀ-ի համագործակցության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ն իրականացնում է համագործակցություն տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ պայմանագրային հիմունքներով (Հավելվածներ 72, 78 և 114):

Տեղական հաստատությունների հետ համագործակցությունը իրականացվում է հիմնականում ուսանողների պրակտիկայի կազմակերպման համար, ինչի նպատակով ԵԳՊԱ-ն պարբերաբար թարմացնում և վերանայում է գործող պայմանագրերը, ինչպես նաև քայլեր է ձեռնարկում նոր պայմանագրերի ձեռքբերման ուղղությամբ: Բացի այդ, պայմանագրային հիմունքներով իրականացվում է համագործակցություն միջին մասնագիտական հաստատությունների հետ՝ խթանելով դրանց շրջանավարտների կրթության արդյունքների ճանաչումը ԵԳՊԱ-ում: Այդպես, վերջին երեք տարիների ընթացքում բուհը կնքել է 26 նոր պայմանագիր՝ պրակտիկայի կազմակերպման նպատակով և 5 պայմանագիր՝ միջին մասնագիտական հաստատությունների շրջանավարտների շարունակական կրթության ապահովման նպատակով: Պրակտիկայի կազմակերպման պայմանագրերից բոլորը գործում են և ապահովում ԵԳՊԱ բոլոր ուսանողների ներգրավվածությունը պրակտիկայում: Միջին մասնագիտական հաստատությունների հետ գործող պայմանագրերը խթանում են շրջանավարտների կրթության շարունակականությունը և դրանց շրջանակներում վերջին երեք տարիների ընթացքում 38 ուսանող ընդունվել է ԵԳՊԱ համապատասխան մասնագիտությամբ երկրորդ կուրսից ուսումը շարունակելու համար:

ԵԳՊԱ կարիերայի կենտրոնը իրականացնում է համագործակցություն տեղական դպրոցների, գործատուների և շրջանավարտների հետ՝ հարցումների և հանդիպումների միջոցով, կրթական գործընթացին օժանդակելու և միջազգայնացմանը նպաստելու համար:

Օտարերկրյա հաստատությունների հետ համագործակցությունը իրականացվում է երկու հիմնական ուղղություններով ակադեմիական շարժունության խթանման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակներով: Առաջինը ներառում է պայմանագրային հիմունքներով արտասահմանյան հաստատությունների հետ համագործակցությունը ուսանողների շարժունության ապահովման նպատակով, ինչպես նաև կարճաժամկետ միջոցառումների կազմակերպման ուղղությամբ: Մյուսը՝ մասնակցությունը տարբեր դրամաշնորհային ծրագրերին և դրանց շրջանակներում ձևավորված կոնսորցիումների անդամների հետ փորձի փոխանակում, համատեղ աշխատանքների իրականացում և այդպիսով՝ ԵԳՊԱ գործունեության տարբեր ոլորտների զարգացում:

Այսօր ԵԳՊԱ-ան ունի 20 գործող պայմանագիր՝ արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ ուսանողների առնվազն մեկ կիսամյակ տևողությամբ շարժունությունը կազմակերպելու նպատակով, սակայն դրանցից ոչ բոլորն են ակտիվորեն գործում: Դրա հիմնական պատճառներից են ֆինանսական միջոցների սղությունը և ուսումնական գործընթացին ինտեգրվելու համար օտար լեզուներին տիրապետման ոչ բավարար մակարդակը /բացի ռուսերենից/, քանի որ ուսումնառությունը այդ հաստատություններում, հիմնականում, կազմակերպված է մեկ՝ պետական լեզվով և պահանջում է դրա իմացության բարձր մակարդակ: Առավել ակտիվ գործում են պայմանագրերը 6 հաստատությունների հետ, ինչի մասին վկայում է վերջին հինգ տարիների ընթացքում իրականացված շարժունության ցուցանիշը՝

Գործընկեր հաստատություն	Շարժունությանը մասնակցած ուսանողների թիվ/տոկոս ուսանողների ընդհանուր թվում				
	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվան գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա	1	3	4	2	6
Մարսելի գեղարվեստի բարձրագույն դպրոց	1	1	3	1	0
Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիա	0	0	3	1	0
Պերուջայի օտարերկրյա ուսանողների մշակույթի և լեզվի ինստիտուտ	0	0	1	1	0
Լիմոժ-Օբյուսոնի արվեստի բարձրագույն ազգային դպրոց	0	0	0	1	0
Ռեյմսի դիզայնի և արվեստի բարձրագույն դպրոց	2	0	0	0	0
Ընդամենը ուս. տարում	**4**	**4**	**11**	**6**	**6**

Աղյուսակում ներկայացված տվյալները լավ ցուցանիշ են ՀՀ մնացած բուհերի համեմատ:

Ուսանողների շարժունությանը վերաբերող տվյալները հավաքագրվում, պահպանվում և վերլուծվում են արտաքին կապերի բաժնի կողմից՝ հիմք հանդիսանալով հետագա

բարելավումների համար: Տարբեր դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող համագործակցությունը նպաստում է տեղական և միջազգային մակարդակում լավագույն փորձի փոխանակմանը և համապատասխան զարգացումների և բարելավումների իրականացմանը: Այդպես, վերջին երեք տարիների ընթացքում ԵԳՊԱ-ն անդամակացել և շարունակում է մասնակցել TEMPUS նախագծի GOVERN, ALIGN, VERITAS, PICASA, ESPAQ, HEN-GEAR և ERASMUS PLUS նախագծի INCLUSION ու C3QA դրամաշնորհային ծրագրերին, որոնցից յուրաքանչյուրը միտված է բուհի գործունեության տարբեր ոլորտների զարգացմանը միջազգային միտումներին և մոտեցումներին համապատասխան՝ կառավարման համակարգի բարելավում, կրթական ծրագրերի արդիականացում և համադրելիություն ՈԱՇ-ին, հետազոտողի կրթական ծրագրի վերանայում՝ Զալցբուրգյան սկզբունքերին համապատասխան, բուհի միջազգայնացում, ուսանողների ներգրավում ՈԱ գործընթացներում, շրջանավարտների հետ կապի ապահովում, կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսումնառության կազմակերպում, հետազոտողի կրթական ծրագրի որակի ապահովում: Ստացվող արդյունքերը և դրանց արդյունավետությունը գնահատվում է յուրաքանչյուր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ համաձայն սահմանված մեթոդաբանության: Մինչ այսօր ԵԳՊԱ-ն հաջողությամբ իրականացրել է բոլոր նախատեսված բարեփոխումները: Այդպիսով, ԵԳՊԱ-ն իրականացնում է արդյունավետ համագործակցություն տեղական և օտարերկրյա հաստատությունների հետ:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:	
Հիմքեր	

Ներկայացնել և վերլուծել վերոնշյալ գործընթացներում հաստատության վերջին 3 տարվա նվաճումները: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ն ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման և միջազգայնացմանը նպաստելու նպատակով մշտական հիմունքներով կազմակերպում է անվճար ֆակուլտատիվ դասընթացներ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն և ռուսերեն (Հավելված 76): Յուրաքանչյուր տարի ամբիոնների կողմից հավաքագրվում են դասընթացներին մասնակցելու ցանկություն ունեցող ուսանողների ցուցակները անհրաժեշտ քանակի օտար լեզվի մասնագետների հետ պայմանագիր կնքելու և ժամանակացույցը կազմելու նպատակով: Ստորև ներկայացված են վերջին երեք տարիների ընթացքում կազմակերպված օտար լեզուների դասընթացները և մասնակցող ուսանողների թիվը.

Օտար լեզվի դասընթացներ	Ուսումնական տարի		
	2014/2015	**2015/2016**	**2016/2017**
Անգլերեն	89	96	102
Ֆրանսերեն	20	11	9
Իտալերեն	31	25	27
Ռուսերեն	18	12	12

Հայերենին չտիրապետող օտարերկրյա ուսանողների համար կազմակերպվում են հայերենի կամ/և ռուսերենի դասընթացներ, իսկ մեծ խմբերի դեպքում՝ տրամադրվում է թարգմանիչ: Անհրաժեշտության դեպքում դասախոսները կազմակերպում են դասընթացները ռուսերեն: Օտար լեզվի իմացության մակարդակը ստուգելու համար ներակյումս իրականացվում է հարցում ԵԳՊԱ բոլոր ուսանողների շրջանում:

Բացի այդ, ԵԳՊԱ-ն մարդկային ռեսուրսների ընտրության հարցում կարևոր տեղ է հատկացնում օտար լեզուների իմացությանը, ինչը նույնպես խթանում է բուհի միջազգայնացումը:

Գիտակցելով օտար լեզվով դասավանդվող դասընթացների և ՄԿԾ-րի կարևորությունը միջազգայնացման գործընթացում՝ ԵԳՊԱ-ն պլանավորում է քայլեր ձեռնարկել դասախոսական և վարչական անձնակազմի լեզվի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ և խթանել ուսանողների շրջանում օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացումը՝ տարբեր միջացառումներ կազմակերպելով: Այդպես, արդեն չորս տարի շարունակ ԵԳՊԱ-ն հրավիրում է օտարերկրյա դասախոս՝ արվեստի պատմության և տեսության մասնագիտության ուսանողներին դասավանդելու համար, իսկ 2016/2017 ուսումնական տարում՝ նաև դիպլոմային աշխատանքի ղեկավարության համար: Բացի այդ, ԵԳՊԱ-ն համալրում է իր գրադարանային ռեսուրսները օտարալեզու մասնագիտական գրականությամբ: Նախատեսվում է նաև քայլեր ձեռնարկել օտարալեզու դասընթացների և կրթական ծրագրերի մշակման ուղղությամբ:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ունի մեխանիզմներ ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման համար և պլանավորում է տարբեր միջոցառումներ՝ դրանց բարելավման ուղղությամբ:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

ԵԳՊԱ գործունեության տարբեր ոլորտների միջազգայնացման խթանման նպատակով TEMPUS ծրագրերի շրջանակներում կատարվել է համեմատական ուսումնասիրություն ծրագրի մասնակից մյուս ուսումնական հաստատությունների հետ Վերջինս թույլ տվեց մատնանշել այն հիմնական մոտեցումները, որոնք կիրառվում են գործընկեր Եվրոպական հաստատություններում և առանձնացնել ԵԳՊԱ բարելավումների ուղղությունները: Այդ հաստատություններն էին՝

- Bath Spa University, Անգլիա
- Institute of Arts, Design and Technologies, Իռլանդիա
- Katholieke Hogeschool Sint-Lieven, Բելգիա
- Adam Mickiewicz University, Լեհաստան
- University of Heidleberg, Գերմանիա
- Royal Institute of Technology, Շվեդիա
- University of Girona, Իտալիա
- Katholieke University of Leuven, Բելգիա
- Koblenz-Landau University, Գերմանիա
- La Rioja University, Իսպանիա
- University of Macerata, Իտալիա
- Spiru Harret University, Ռումինիա
- University of Roehampton, Անգլիա

Բացի դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացված ուսումնասիրություններից, ԵԳՊԱ-ն նախաձեռնել է համեմատական ուսումնասիրություն այլ օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ՝ միտված հաստատության միջազգայնացման ռազմավարության բարելավմանը: Մասնավորապես, ուսումնասիրությունը իրականացվել է հետևյալ հաստատությունների հետ՝

- Ամստերդամի համալսարան, Նիդերլանդներ:
- Նոթինգհեմ Թրենթի համալսարան, Անգլիա:
- Գրիֆիթի համալսարան, Ավստրալիա:
- Արհուսի համալսարան, Դանիա:
- Էդինբուրգի համալսարան, Շոտլանդիա և այլն:

Վերլուծել Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր

1. *ԵԳՊԱ-ում առկա է հստակ սահմանված միջազգայնացման ռազմավարություն*
2. *Վերջին երեք տարներին ԵԳՊԱ-ն ներգրավված է 10 դրամաշնորհային ծրագրերում:*
3. *Առկա են միջազգայնացման որակի ապահովման մեխանիզմներ և գործիքներ:*
4. *ԵԳՊԱ-ն պայմանագրային հիմունքներով ակտիվ համագործակցություն է իրականացնում արտաքին գործընկերների հետ:*
5. *ԵԳՊԱ-ում գործում են օտարերկրյա ուսանողների ընդունելության և ուսանողների շարժունության ապահովման հստակ մեխանիզմներ:*

Թույլ կողմեր

1. *Ակադեմիական շարժունության համար ֆինանսական միջոցներ չեն տրամադրվում*
2. *ԵԳՊԱ-ում չի իրականացվում դասախոսների ակադեմիական շարժունություն:*
3. *ԵԳՊԱ-ի դասախոսների մեծամասնությունը չի տիրապետում օտար լեզուների (բացի ռուսերենից):*
4. *Դասախոսների համար օտար լեզվի դասընթացների բացակայություն*
5. *Օտար լեզվով կրթական ծրագրերի բացակայություն*

Արտաքին հնարավորություններ

1. *Ուսանողների և դասախոսների շարժունության հնարավորություններ (Erasmus Plus և այլ աղբյուրներ):*
2. *Օտարերկրյա դասախոսների ներգրավում կրթական գործընթացում:*

Արտաքին վտանգներ

1. *Օրենսդրական դաշտի սահմանափակումներ:*

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ԵԳՊԱ-ն վերոնշյալ թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ պլանավորում է իրականացնել հետևյալ քայլերը և գործընթացները.

1. *Արտաքին գործընկերների հետ համագործակցության զարգացնում:*
2. *Արվեստի բուհերի միջազգային ասոցիացիաներին անդամակցում:*
3. *Արտաքին ռեսուրսների ներգրավում:*
4. *Միջազգային կոնֆերանսների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների կազմակերպում ու մասնակցության խթանում:*
5. *Օտարերկրյա ուսանողների միջավայր ինտեգրման և արդյունավետ ուսումնառության համար պայմանների զարգացում:*
6. *Օտարալեզու և համատեղ կրթական ծրագրերի մշակում և իրականացում:*

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Բուհը հավակնում է թափանցիկ հիմքերով համակարգել ԵԳՊԱ որակի ապահովման արդյունավետության բարձրացմանը միտված ԵԳՊԱ միջոցառումները՝ ձևավորելով որակի մշակույթ, շարունակաբար վերամշակելով և ներդնելով ՈԱ գործիքներ ու մեխանիզմներ, որոնք կնպաստեն բուհի մարտահրավերների հաղթահարմանը, ինչպես նաև կայուն զարգացմանը և միջազգային ճանաչմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	Հավելված 115. ՈԱ և ինքնագնահատման բաժնի կանոնակարգ Հավելված 116. Արտաքին կապերի բաժնի արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր Հավելված 117. Գնահատման համակարգի արդյունավետության գնահատում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից. գործիք և նկարագիր Հավելված 118. Գնահատման համակարգի արդյունավետության գնահատում ուսանողների կողմից. գործիք և նկարագիր Հավելված 119. Դասընթացի արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր Հավելված 120. Աշխատակիցների կատարողականի գնահատում. գործիք և նկարագիր Հավելված 121. Ընդունելության գործընթացի արդյունավետության գնահատում 1-ին կուրսեցիների շրջանում. գործիք և նկարագիր Հավելված 122. Հետազոտության արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր Հավելված 123. ՄԿԾ-ի գնահատում գործատուի կողմից. գործիք և նկարագիր Հավելված 124. ՄԿԾ-ի գնահատում շրջանավարտների կողմից. գործիք և նկարագիր Հավելված 125. Ռեսուրսների և ծառայությունների գնահատում ուսանողների կողմից. գործիք և նկարագիր Հավելված 126. Ռեսուրսների և ծառայությունների գնահատում դասախոսների կողմից. գործիք և նկարագիր

	Հավելված 127. Վարչարարության արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր Հավելված 128. ԵԳՊԱ-ի վերաբերյալ տեղեկության և դրա տարածման միջոցների արդյունավետության գնահատում դիմորդների շրջանում. գործիք և նկարագիր Հավելված 129. Օտար լեզվի իմացության վերաբերյալ վարչական, դասավանդող և ուսումնաօժանդակ կազմի շրջանում հարցում. գործիք և նկարագիր

Ներկայացնել և վերլուծել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որդեգրելով որակի սահմանումը որպես համապատասխանություն նպատակներին՝ ԵԳՊԱ-ի որակի քաղաքականությունը միտված է բուհի առաքելության և Ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների իրականացմանը: Այն ենթադրում է որակի խնդիրների սահմանում, բուհի գործընթացների արդյունավետ իրականացում և դրանց շարունակական բարելավման ապահովում, ներքին ու արտաքին շահակիցների արձագանքի հիման վրա բարելավումների իրականացում: Որակի շրջանակը ընդգրկում է վերահսկողության, որակի ապահովման, շարունակական բարելավման գործընթացներ, բուհի գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր:

ԵԳՊԱ-ն որակի քաղաքականությունը սահմանում է խնդիրների ձևակերպման, գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի, բոլոր գործընթացների որակի վերահսկողության, ապահովման և շարունակական բարելավման շրջանակում՝ իր գործունեության բոլոր փուլերում կարևորելով ՊԻՍԲ սկզբունքը:

ԵԳՊԱ-ի որակի քաղաքականությունը արտացոլվում է մի շարք փաստաթղթերում, որոնք հաջողությամբ համակարգում են ընթացիկ գործընթացները.

- ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ, (Հավելված 19)
- Որակի ապահովման ձեռնարկ, (Հավելված 30)
- ՄԿԾ-ների մշակման և վերանայման ձեռնարկ, (Հավելված 5)
- ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ (Հավելված 27) և այլն:

Բուհի որակի ապահովման գործընթացների հիմքում ընկած է ԵԳՊԱ որակի կառավարման համակարգը (Հավելված 25), որտեղ հստակորեն երևում է բուհում իրականացվող տարբեր գործընթացների որակի ապահովումը և կառավարումը, դրանց փոխկապակցվածությունը, գնահատումը, պատասխանատու վարչական օղակները ու ներգրավված ներքին շահակիցները և այլն:

ԵԳՊԱ-ի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրով (Հավելված 2) սահմանված որակի խնդիրները միտված են տարբեր ոլորտներում ԵԳՊԱ գործունեության բարելավմանը, մասնավորապես, դասավանդման և ուսուցման որակի բարձրացմանը և անդրադառնում են.

- միջազգային չափանիշերի համաձայն՝ ՄԿԾ-երի վերանայմանը, դրանց հաջող իրականացմանը և համապատասխան կրթական միջավայրի ստեղծմանը,
- պրոֆեսորադասախոսական կազմի կայունության ու մասնագիտական աճի ապահովմանը,
- դիմորդների և ուսանողների կայուն համակազմի ձևավորմանը և

պահպանմանը:

Որպես կատարված գործողությունների ուժեղ կողմեր, մասնավորապես, կարելի է նշել՝

- մշակվել և ներդրվել են ՈԱ գործիքներ ու մեխանիզմներ: Իրականացվում են հարցումներ և ֆոկուս խմբեր թիրախային տարբեր խմբերում՝ ներքին և արտաքին շահակիցների շրջանում: Հարկ է նշել, որ մշակված հարցաթերթերը կիրառումից հետո, ըստ անհրաժեշտության, վերանայվում են:
- մշակվել է ՄԿԾ-երի մշակման և վերանայման ձեռնարկ և դրան համաձայն վերանայվել են 8 ՄԿԾ-եր՝ ներառյալ առարկայական նկարագրերի բովանդակային և կառուցվածքային փոփոխություն, վերջնարդյունքների սահմանում դասընթացների և կրթական ծրագրի մակարդակում՝ համաձայն ՀՀ ՈԱՇ-ի:
- Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի մասնագիտական կարողությունների զարգացումն ապահովելու նպատակով ԵԳՊԱ-ն նախաձեռնել և իրականացրել է վերապատրաստումներ:
- Հաստատության հաշվետվողականության բարձրացման նպատակով մշակվել և կիրառվել են մեխանիզմներ: Բուհի բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, իսկ վերջիններս գնահատվում են հանձնաժողովի կողմից:

Սակայն, հաշվի առնելով, որ Որակի ապահովումը շարունակական գործընթաց է, ԵԳՊԱ-ն պլանավորում է միջոցառումներ, որոնք արտացոլվում են 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում (Հավելված 3), որտեղ հաստատության որակի ապահովման ռազմավարական խնդիրները լայն և ընդգրկուն են, ինչպես նաև առավել մանրամասն անդրադառնում են բուհի գործունեության բոլոր ոլորտներին: Բուհի ՈԱ ռազմավարական խնդիրների սահմանման հիմքում ընկած են ԵԳՊԱ բարելավման ենթակա ոլորտները, ուստի դրանք առաջիկա 5 տարիների ընթացքում գտնվելու են հաստատության ուշադրության կենտրոնում:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն ունի ՈԱ ձեռնարկում ամրագրված և ՌԾ-ում արտացոլված ՈԱ քաղաքականություն: Մշակված է ՈԱ գործիքակազմ, որը թույլ է տալիս գնահատել գործընթացների արդյունավետությունը: ԵԳՊԱ ՈԱ քաղաքականությունը և գործիքակազմը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:	
Հիմքեր	Հավելված 130. ՈԱ կենտրոնը հիմնելու և կանոնակարգը հաստատելու մասին ԵԳՊԱ-ի ռեկտորի հրաման

Վերլուծել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրվող ժամանակային, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ում ՈԱ գործընթացներն առավել կայուն հիմքերի վրա դնելու նպատակով 2011թ.-ին ստեղծվել է Որակի ապահովման կենտրոնը, որը միտված է աջակցելու հաստատության ՈԱ գործընթացներին: Կենտրոնի աշխատանքները կանոնակարգվում են ռեկտորի կողմից

հաստատված կանոնակարգով (Հավելված 115), որտեղ սահմանված են կենտրոնի գործառույթները: ԵԳՊԱ ՈԱ կենտրոնը կառուցվածքային անկախ ստորաբաժանում է և ուղղակիորեն հաշվետու է ԵԳՊԱ ռեկտորին, ինչն ապահովում է ստորաբաժանումների գործունեության անաչառ և անկողմնակալ գնահատումը: Բացի կանոնադրությունից կենտրոնի գործունեությունը կարգավորվում է ՌԾ-ին համահունչ տարեկան պլանով: Կենտրոնն ունի տնօրեն և մասնագետ-վերլուծաբան: Հաստիքները բավարար են, քանի որ ԵԳՊԱ-ն արվեստի բուհ է և ունի ուսանողների փոքր համակազմ: Կենտրոնի հիմնադրումից ի վեր մշակվել են բուհի գործունեության տարբեր ոլորտները գնահատող կանոնակարգեր և մեխանիզմներ (Հավելվածներ 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18 և 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129):

ԵԳՊԱ-ն մասնակցել է TEMPUS DIUSAS «Հաստատությունների ինքնագնահատման համակարգերի մշակում և ներդնում» և ՀԲ 2 «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրերին, որոնց շրջանակներում ապահովվել է ՈԱ կենտրոնի տեխնիկական հագեցվածությունը: Ներկայումս ՈԱ կենտրոնն ունի կահավորված և սարքավորումներով հագեցած գրասենյակ, աշխատաժողովների դահլիճ, որը հնարավորություն է ընձեռում իրականացնել վերապատրաստումներ և հանդիպումներ շահակիցների շրջանում: Այդ միջոցառումների շնորհիվ ԵԳՊԱ-ի դասախոսները և ուսանողները առավել հստակ պատկերացումներ են կազմել բուհի ՈԱ գործընթացների, «Որակ» հասկացության, «Որակի ապահովման» վերաբերյալ: Վերապատրաստումների շնորհիվ ԵԳՊԱ-ն փորձում է ապահովել պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի կարողությունների զարգացումը և ՈԱ գործընթացներին նրանց առավելագույն ներգրավումը: Նման միջոցառումները կօգնեն ներքին ինստիտուցիոնալ մակարդակում բարձրացնել բուհի շահակիցների գիտակցությունը:

Նյութական և ֆինանսական ռեսուրսների պլանավորումը կարգավորվում է «ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ»-ով (Հավելված 19), համաձայն որի ՈԱ կենտրոնի տարեկան պլանին կցվում է նաև ՈԱ գործընթացների համար անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսների ցանկը: Տարեկան պլանի հաստատումից հետո, պլանին կից ռեսուրսների ցանկի հիման վրա հաշվարկվում է ՈԱ գործընթացներին հատկացվող բյուջեն:

Արժևորելով հաստատության ՈԱ մշակույթի շարունակական բարելավման անհրաժեշտությունը՝ ԵԳՊԱ-ն ջանքեր է գործադրում համակարգը առավել կայուն հիմքերի վրա դնելու համար: Հաշվի առնելով իր նախկին փորձը և կարևորելով ՈԱ գործընթացների արդյունավետության բարձրացումը՝ ԵԳՊԱ-ն պլանավորում է որակի մշակույթի ընդլայնման ուղղությամբ հստակ միջոցառումներ իրականացնել և այն համարվում է 2017-2021թթ. ԵԳՊԱ ՈԱ ռազմավարական կարևոր նպատակ (Հավելված 3):

Այսպիսով, ՈԱ գործընթացները կառավարելու նպատակով ԵԳՊԱ-ն տրամադրում է մարդկային, նյութական, ֆինանսական ռեսուրսներ և 2017 – 2021 թթ. Ռազմավարական ծրագրով նախատեսել է Որակի մշակույթի տարածման ու որակի ապահովման համակարգի կատարելագործման միջոցառումներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:	
Հիմքեր	
Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին	

շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ն մշտապես կարևորել է շահակիցների աշխատանքային և կրթական կարիքներն իր գործունեության ընթացքում: Այդ գործընթացն առավել համակարգված հիմքերի վրա է դրվել ԵԳՊԱ ՈԱ կենտրոնի հիմնադրումից հետո: Կենտրոնը վերջին տարիների ընթացքում կարողացել է հնարավորինս վերհանել հիմնական շահակիցների կարիքները և պահանջները:

ԵԳՊԱ ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը գործընթացներին իրականանում է կախված որակի ապահովման ոլորտից:

Ինչպես արդեն նշվել է նախորդ չափանիշերի վերլուծության մեջ, ԵԳՊԱ ներքին և արտաքին շահակիցները մասնակցում են բուհի կառավարման գործընթացներին համաձայն՝ ԵԳՊԱ կանոնադրության (Հավելված 1): Կառավարման նման մասնակցային մոտեցումը ապահովում է ընդունված որոշումների արդյունավետությունը:

Բուհի հիմնական շահակիցները ներգրավված են նաև ՄԿԾ-երի մշակման ու վերանայման գործընթացում՝ համաձայն «ԵԳՊԱ-ում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ»-ի (Հավելված 5): ՄԿԾ-երի արդյունավետությունը գնահատվում է շրջանավարտների և գործատուների շրջանում կատարվող հարցումների հիման վրա (Հավելվածներ 123 և 124): Քանի որ ՄԿԾ-ի պրոֆեսորադասախոսական կազմի զգալի մասը ոլորտի առաջատար մասնագետներ են, անմիջականորեն ներկայացնում են աշխատանքային շուկան, նրանց ներգրավումը ՈԱ գործընթացին՝ որպես արտաքին շահակից, նույնպես նշանակալի է:

Ուսումնառության և դասավանդման գործընթացում ուսումնառողների ներգրավվածությունը ապահովվում է հարցումների և հանդիպում/քննարկումների միջոցով: Հարցումներն իրականացվում են ՄԿԾ-երի դասընթացների և համապատասխան ռեսուրսների արդյունավետության վերաբերյալ (Հավելվածներ 33 և 35):

Ուսանողի գնահատման գործընթացի մշտադիտարկման և բարելավման համար անց են կացվում հարցումներ ուսումնառողների և դասավանդողների շրջանում (Հավելված 34):

ԵԳՊԱ ռեսուրսների և մատուցած ծառայությունների արդյունավետությունը գնահատվում է ուսումնառողների և դասավանդողների շրջանում իրականացվող հարցումների միջոցով (Հավելված 35):

ԵԳՊԱ ընդունելության գործընթացի արդյունավետության գնահատման հիմքում ընկած է առաջին կուրսեցիների շրջանում իրականացվող հարցումը (Հավելված 32):

Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման գործընթացին ուսումնառողները ներգրավված են «Դասընթացի արդյունավետության գնահատում» հարցմանը մասնակցության միջոցով: Հարցաթերթի (Հավելված 83) առաջին մասը վերաբերում է դասընթացի դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների, համապատասխան ռեսուրսների արդյունավետությանը: Երկրորդ մասը հնարավորություն է տալիս ուսումնառողին գնահատել դասախոսի մասնագիտական հմտությունները: ԵԳՊԱ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է ամբիոնների վարիչների կողմից «ԵԳՊԱ աշխատակցի աշխատանքի արդյունավետության գնահատում» գործիքով (Հավելված 120): Բացի գնահատման այս գործիքից պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենտությունը գնահատվում է դիտումների ժամանակ կոլեգաների արձագանքներով (peer review):

Վարչարարության արդյունավետության մասին ուսումնառողներն իրենց արձագանքն են թողնում պարբերաբար անցկացվող «ԵԳՊԱ ռեսուրսների և մատուցած ծառայությունների արդյունավետության գնահատում» հարցման և ֆոկուս խմբերի միջոցով: Վարչարարության

արդյունավետության վերաբերյալ դասավանդողներն արձագանք են թողնում «ԵԳՊԱ վարչարարության արդյունավետության գնահատում» հարցման միջոցով (Հավելված 36):

Հարցման արդյունքերը ներկայացվում և քննարկվում են համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ու աշխատակիցների հետ: Հարցումների արդյունքում բացահայտված խնդիրների հիման վրա իրականացվում են համապատասխան բարելավումներ:

Բուհը ներքին շահակիցների, մասնավորապես՝ ուսանողների ներգրավվածությունը ԵԳՊԱ ՈԱ գործընթացներին փաստացի ապահովելու նպատակով, ստեղծել է «Ուսանողական համայնք» (2013թ. դեկտեմբեր), որը իր ակտիվ մասնակցությունն է ունենում հաստատության տարբեր գործընթացներում, օրինակ՝ 2016թ. մայիս-հունիս ամիսներին ուսանողները մշակել են հարցաթերթ և իրականացրել հարցում բուհի 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողների շրջանում՝ պարզելու արդյոք պատրաստվում են իրենց կրթությունը շարունակել ԵԳՊԱ-ում (Հավելված 38): Ուսանողների որակի ապահովման գործընթացներում մասնակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Ուսումնամեթոդական մասը և ՈԱ կենտրոնը շարունակաբար վերապատրաստումներ են իրականացնում՝ նպաստելով նրանց մոտ համապատասխան կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:

ԵԳՊԱ վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմի ներկայացուցիչները որոշակի գործառույթներով ներգրավված են նաև ինքնավերլուծության իրականացման գործընթացում՝ տվյալների տրամադրում, օժանդակություն հարցումների անցկացմանը, ինքնավերլուծության զեկույցի պատրաստմանը և այլն:

Այսպիսով՝ ԵԳՊԱ ներքին և արտաքին շահակիցները հնարավորինս ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, իսկ 2017 – 2021 թթ. ՌԾ-ում սահմանված հետագա գործողությունները կնպաստեն ՈԱ գործընթացներում շահակիցների ավելի լայնածավալ ներգրավմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Հիմքեր	

Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քանի որ ԵԳՊԱ Որակի ներքին համակարգը միտված է բուհի գործունեության արդյունավետությանը, այն պարբերաբար վերանայվում է համաձայն՝ գործող ռազմավարական ծրագրի, ներքին և արտաքին շահակիցների կարիքների ու պահանջների, պետական և միջազգային մակարդակում արձանագրված պահանջների և միտումների:

ԵԳՊԱ որակի նպատակներն ու խնդիրները վերասահմանվում են ռազմավարական ծրագրի ավարտից հետո՝ հաշվի առնելով նախորդ ռազմավարական ծրագրով սահմանված բուհի որակի խնդիրների իրականացման աստիճանը, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում ներքին և արտաքին միջավայրերի փոփոխությունները և ժամանակակից միտումները: Համապատասխանաբար վերանայվում է բուհի որակի ներքին ապահովման համակարգը:

Այսպիսով, ԵԳՊԱ-ն իր գործունեության ընթացքում փորձում է ստեղծել որակի ապահովման այնպիսի համակարգ, որի հիմքում ընկած են Որակի ապահովման ազգային պահանջները և չափանիշերը, Որակի ապահովման եվրոպական չափանիշերն ու ուղենիշերը, հաստատության արտաքին և ներքին շահակիցների կարիքները և պահանջները, ինչպես նաև որակի

ապահովման ժամանակակից միտումները:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

ԵԳՊԱ ՈԱ ներքին համակարգի հիմնադրման հիմք հանդիսացավ TEMPUS DIUSAS ծրագրին ԵԳՊԱ մասնակցությունը: Այս ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ն համագործակցեց մի շարք ազգային և միջազգային կազմակերպությունների հետ, ինչը հնարավորություն տվեց ծանոթանալ որակի ապահովման լավագույն փորձին և տեղայնացնել այն ԵԳՊԱ ՈԱ գործընթացներում: DIUSAS ծրագրի հիմնական խնդիրներն էին՝

- Զարգացնել համալսարանների ինքնավերլուծության շրջանակը
- Զարգացնել համալսարանների ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծության գործընթացներում ներգրավված աշխատակիցների կարողությունները
- Արդյունավետ ինքնավերլուծություն իրականացնելու համար կազմավորել համապատասխան կառույց
- Նպաստել ինքնավերլուծության գործընթացում ուսանողների ներգրավմանը
- Ինքնավերլուծությունը դարձնել հաստատությունների գործունեության անբաժանելի մասը
- Հրապարակել ինքնավերլուծության արդյունքները հետագա զարգացման (կիրառության և մշակման) համար:

ՀԲ 2 «Կրթության որակ և համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակում ԵԳՊԱ-ի ներկայացուցիչները այցելեցին Մեծ Բրիտանիայի «The Prince's School of Traditional Arts» հաստատություն, ինչը նույնպես նպաստեց բուհի որակի ապահովման գործընթացների և կառավարման համակարգի բարելավմանը: Բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-երի որակի ապահովման գործընթացները բարելավելու նպատակով ԵԳՊԱ-ն անդամակցեց TEMPUS ALIGN ծրագրին (տե՛ս նաև Չափանիշ 3), հետազոտողի կրթական ծրագրի որակի ապահովման գործընթացների բարելավման համար՝ TEMPUS VERITAS (տե՛ս նաև Չափանիշ 6) և C3QA ծրագրերին: ՈԱ գործընթացներում ուսանողների ներգրավվածության բարձրացմանը և այս ոլորտում լավագույն փորձին ծանոթացմանը մեծապես նպաստեց ESPAQ ծրագրի մեկնարկը:

Վերոնշյալ ծրագրերի շրջանակներում ԵԳՊԱ-ի հետ համագործակցող ազգային և միջազգային հաստատությունների ցանկը (Հավելված 28):

Այսպիսով, համագործակցելով միջազգային և հայաստանյան մի շարք հաստատությունների հետ, բուհը ծանոթանում է ՈԱ լավագույն փորձին և քայլեր է ձեռնարկում ԵԳՊԱ-ում տեղայնացման ուղղությամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հիմքեր	

Հիմնավորել տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ-ն իր գործունեության ընթացքում շարունակաբար ստեղծել է փաստաթղթային հիմքեր և իրականացրել համապատասխան գործողություններ ոչ միայն հաստատության որակի արտաքին գնահատման համար, այլ նաև բուհում իրականացվող մի շարք գործընթացների բարելավման համար: Այդ փաստաթղթերը կայուն հիմքերի վրա են դրել ԵԳՊԱ որակի ներքին ապահովման, ինչպես նաև կառավարման համակարգը: Այդպիսի փաստաթաղթերից և գործընթացներից են՝

- ԵԳՊԱ-ի ռազմավարական ծրագրի նախագծման և մշակման ուղենիշեր (Հավելված 7):
- ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և բարելավման կարգ (Հավելված 19):
- ԵԳՊԱ-ում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ (Հավելված 5):
- Ուսանողի ձեռնարկ (Հավելված 48):
- ՈԱ ձեռնարկ (և կանոնակարգեր) (Հավելվածներ 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 30, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129):
- ԵԳՊԱ գործընթացների մշտադիտարկում (հարցումներ և ֆոկուս խմբեր ներքին և արտաքին շահակիցների շրջանում) (Հավելվածներ 31, 32, 33, 34, 35, 36, 37):
- Ռեկտորի ամենամյա հաշվետվություն: ԵԳՊԱ ռեկտորը յուրաքանչյուր տարի ներկայացնում է տարեկան հաշվետվություն, որը հնարավորություն է տալիս տարեկան կտրվածքով գնահատել ռազմավարական ծրագրի իրականացման մակարդակը (Հավելված 23): Հաշվետվությունները տեղադրված են ԵԳՊԱ կայքէջում, ինչը հնարավորություն է տալիս ներքին և արտաքին շահակիցներին համապարփակ տեղեկություն ստանալ բուհի տարեկան գործողությունների վերաբերյալ:
- այլ:

Այսպիսով, առաքելությանը միտված արդյունավետ գործունեություն իրականացնելու նպատակով ԵԳՊԱ-ն մշակել է փաստաթղթային հենք, որը և բավարար հիմք է որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Հիմքեր	

Վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵԳՊԱ որակի ներքին ապահովման համակարգի հիմնական նպատակներից է բուհի գործունեության թափանցիկության ապահովումը: ՈԱ կենտրոնի նախաձեռնությամբ, գործընթացներն առավել թափանցիկ դարձնելու նպատակով, ԵԳՊԱ-ն որդեգրեց քաղաքականություն, համաձայն որի բոլոր ստորաբաժանումներն իրենց գործընթացների վերաբերյալ երկլեզու (հայերեն, անգլերեն) տեղեկություն են տեղադրում ԵԳՊԱ կայքէջում:

Թափանցիկություն ապահովելու նպատակով ԵԳՊԱ-ն կայքէջում տեղադրում է

մշտապես թարմացվող տեղեկություն բուհի գործունեության և իրականացվող հիմնական գործընթացների վերաբերյալ: ԵԳՊԱ կայքէջում տեղադրված են նաև հրապարակման ենթակա մի շարք փաստաթղթեր՝

- ԵԳՊԱ կանոնադրություն
- ԵԳՊԱ կառուցվածք
- ԵԳՊԱ ռազմավարական ծրագիր
- ՄԿԾ-եր
- Ուսանողի ձեռնարկ
- ՈԱ ձեռնարկ
- Ռեկտորի տարեկան հաշվետվություններ և այլ:

ԵԳՊԱ գործընթացների թափանցիկությունն ու բուհի հաշվետվողականությունն առավելապես ապահովելու նպատակով ՈԱ կենտրոնի կողմից ներքին ու արտաքին շահակիցների շրջանում անցկացված, տարբեր ոլորտները գնահատող հարցումների արդյունքները նույնպես տեղադրվում են ԵԳՊԱ կայքէջում:

Կայքէջում տեղադրված է սպառիչ տեղեկություն դիմորդների համար՝ ընդունելության կարգ, պահանջվող փաստաթղթեր, ըստ մասնագիտությունների ընդունելության քննությունների ցանկ, պահանջներ, գնահատման չափանիշեր և այլ:

Բուհում իրականացվող միջոցառումները (ցուցադրություններ, քննարկումներ, սեմինարներ, վարպետաց դասեր և այլ) լուսաբանվում են ԵԳՊԱ կայքէջում:

Ուսանողներին տրամադրվում է ամեն տարի թարմացվող Ուսանողի ձեռնարկ, որտեղ ներկայացված է համապարփակ տեղեկություն բուհի բոլոր կրթական ծրագրերի, մատուցվող ծառայությունների և այլնի մասին, ինչը ուսումնառության տարիներին օգնում է ուսանողներին առավելագույնս տեղեկանալ բուհում իրականացվող գործընթացների և տրամադրվող ծառայությունների վերաբերյալ:

ԵԳՊԱ -ն իրականացնում է բուհի վերաբերյալ տեղեկության և դրա տարածման միջոցների արդյունավետության գնահատում: Հարցում է իրականացվում դիմորդների շրջանում (Հավելված 31 և 128): Դիմորդները նշում են, որ բուհի գործունեության, ընդունելության չափանիշերի, գնահատման համակարգի և այլնի վերաբերյալ սպառիչ տեղեկություն հիմնականում ստանում են ԵԳՊԱ պաշտոնական կայքէջից: Ուսանողների և դասախոսների շրջանում իրականցվող «ԵԳՊԱ ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում» (Հավելված 35, 125 և 126) հարցման գործիքը պարունակում է ԵԳՊԱ գործունեության թափանցիկության և տեղեկատվական աղբյուրների արդյունավետության վերաբերյալ հարցեր, ինչը հնարավոր է դարձնում ստանալ նաև արձագանք բուհի ներքին շահակիցներից (տե՛ս նաև Չափանիշ 7): Գործատուների և շրջանավարտների շրջանում կատարվող հարցումների շնորհիվ ԵԳՊԱ-ն տեղեկանում է ԵԳՊԱ-ի գործունեության մասին նրանց տեղեկացվածության վերաբերյալ:

Այսպիսով՝ ԵԳՊԱ գործընթացները լուսաբանվում են հիմնական շահակիցների համար՝ ապահովելով բուհի գործունեության թափանցիկությունը, և առկա են թափանցիկության արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ, որոնք շարունակաբար վերանայվում և լրամշակվում են:

Վերլուծել Չափանիշ 10-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր

1. *ԵԳՊԱ-ում առկա է ՈԱ ձեռնարկ:*
2. *ԵԳՊՊԱ գործընթացների արդյունավետության գնահատման համար մշակվել և կիրառվել է ՈԱ գործիքակազմ, որը պարբերաբար վերանայվում է:*
3. *ԵԳՊԱ-ն մասնակցում է ՈԱ ոլորտի միջազգային դրամաշնորհային ծրագրերի և դրանց շրջանակում համագործակցում է միջազգային և ազգային բուհերի հետ ու ծանոթանում ՈԱ լավագույն փորձին:*
4. *ԵԳՊԱ ՈԱ համակարգը ապահովում գործընթացների թափանցիկությունը և մշտադիտարկում է տեղեկատվության հասանելիության արդյունավետությունը:*
5. *ԵԳՊԱ ուսանողները ներգրավված են ՈԱ գործընթացներում:*
6. *Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմը ներգրավված է ՈԱ գործընթացներում:*

Թույլ կողմեր

1. *ՈԱ ներքին համակարգը չի ծածկում որոշ հիմնական գործընթացներ:*
2. *Շահակիցների կարիքները վեր են հանվում հիմնականում հարցումների միջոցով:*

Արտաքին հնարավորություններ

1. *Նոր դրամաշնորհային ծրագրերի նախաձեռնում:*
2. *Ծրագրային հավատարմագրվում:*

Արտաքին վտանգներ

1. *ՈԱ գործընթացների վերաբերյալ արտաքին շահակիցների անտեղյակություն:*

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ԵԳՊԱ-ն վերոնշյալ թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ պլանավորում է իրականացնել հետևյալ քայլերը և գործընթացները.

1. *Որակի ապահովման ներքին համակարգի բարելավում՝ ապահովելով գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավածությունը:*
2. *Գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմների բարելավում:*
3. *Գործընթացների մշտադիտարկման մեխանիզմների և գործիքների վերանայում, ինչպես նաև դրանց արդյունավետության գնահատում և բարելավում:*
4. *Որակի արտաքին գնահատման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում:*
5. *Հաշվետվողականության մեխանիզմների բարելավում և շահակիցների շրջանում որակի ապահովման գործընթացների մասին իրազեկվածության բարձրացում:*

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

Հավելված 1. ԵԳՊԱ-ի կանոնադրություն
Հավելված 2. ԵԳՊԱ-ի Ռազմավարական ծրագիր 2012-2016թթ.
Հավելված 3. ԵԳՊԱ-ի Ռազմավարական ծրագիր 2017-2021թթ.
Հավելված 4. ԵԳՊԱ-ի մասնագիտությունների ցանկ
Հավելված 5. ԵԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ
Հավելված 6. Մասնագիտության կրթական ծրագրերի և ՀՀ ՈԱԾ-ի միջև համադրելիության ապահովման ուղեցույց
Հավելված 7. ԵԳՊԱ ռազմավարական ծրագրի նախագծման և մշակման ուղեցույց
Հավելված 8. ԵԳՊԱ-ի կողմից տրամադրվող տեղեկատվության արդյունավետության և մատչելիության վերաբերյալ դիմորդների հարցման կանոնակարգ
Հավելված 9. ԵԳՊԱ-ում ընդունելության կարգի արդյունավետության վերաբերյալ առաջին կուրսեցիների հարցման կանոնակարգ
Հավելված 10. ԵԳՊԱ-ում դասընթացի մեթոդաբանության արդյունավետության վերաբերյալ հարցման կանոնակարգ
Հավելված 11. ԵԳՊԱ-ում գնահատման համակարգի արդյունավետության վերաբերյալ դասախոսների և ուսանողների հարցման կանոնակարգ
Հավելված 12. ԵԳՊԱ-ի ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության վերաբերյալ հարցման կանոնակարգ
Հավելված 13. ԵԳՊԱ-ում հետազոտական գործունեության արդյունավետության վերաբերյալ դասախոսների և ուսանողների հարցման կանոնակարգ
Հավելված 14. ԵԳՊԱ-ի վարչարարության արդյունավետության վերաբերյալ դասախոսների հարցման կանոնակարգ
Հավելված 15. ԵԳՊԱ-ի արտաքին կապերի բաժնի գործունեության գնահատման վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգ
Հավելված 16. ԵԳՊԱ-ում օտար լեզվի իմացության վերաբերյալ վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հարցման կանոնակարգ
Հավելված 17. ԵԳՊԱ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգ
Հավելված 18. ԵԳՊԱ-ի ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ գործատուների հարցման կանոնակարգ
Հավելված 19. ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ
Հավելված 20. Ստորաբաժանումների տարեկան պլանավորման ձևաչափ և օրինակ
Հավելված 21. Ստորաբաժանումների եռամյակային հաշվետվությունների ձևաչափ և օրինակ
Հավելված 22. ԵԳՊԱ-ի կողմից իրականացվող հարցումների ժամանակացույց
Հավելված 23. ԵԳՊԱ ռեկտորի տարեկան հաշվետվություններ
Հավելված 24. ԵԳՊԱ-ի կազմակերպական կառուցվածքը
Հավելված 25. ԵԳՊԱ-ի որակի կառավարման համակարգը
Հավելված 26. ԵԳՊԱ ստորաբաժանումների կանոնակարգերի ձևաչափը
Հավելված 27. ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ
Հավելված 28. ԵԳՊԱ-ում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի ցուցակ
Հավելված 29. ԵԳՊԱ ՊՈԱԿ-ը հիմնադրամի վերակազմավորելու հիմնավորում
Հավելված 30. ԵԳՊԱ-ի որակի ապահովման ձեռնարկ

Հավելված 31. ԵԳՊԱ-ի կողմից տրամադրվող տեղեկատվության արդյունավետության և մատչելիության վերաբերյալ դիմորդների հարցման վերլուծություն
Հավելված 32. ԵԳՊԱ-ում ընդունելության կարգի արդյունավետության վերաբերյալ առաջին կուրսեցիների հարցման վերլուծություն
Հավելված 33. ԵԳՊԱ-ում դասընթացի մեթոդաբանության արդյունավետության վերաբերյալ հարցման վերլուծություն
Հավելված 34. ԵԳՊԱ-ում գնահատման համակարգի արդյունավետության վերաբերյալ դասախոսների և ուսանողների հարցման վերլուծություն
Հավելված 35. ԵԳՊԱ-ի ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության վերաբերյալ հարցման վերլուծություն
Հավելված 36. ԵԳՊԱ-ի վարչարարության արդյունավետության վերաբերյալ դասախոսների հարցման վերլուծություն
Հավելված 37. ԵԳՊԱ-ի արտաքին կապերի բաժնի գործունեության գնահատման վերաբերյալ ուսանողների հարցման վերլուծություն
Հավելված 38. Ուսանողական համայնքի կողմից անցկացվող հարցում և վերլուծություն
Հավելված 39. ԵԳՊԱ-ի «Համակարգչային գրաֆիկա» (բակալավրի կրթական աստիճամ) և «Դիզայն» (մագիստրոսի կրթական աստիճան) ՄԿԾ-ների գանհատման փորձագիտական զեկույց
Հավելված 40. ԵԳՊԱ որակի կառավարման կրկնակի համակարգ
Հավելված 41. ԵԳՊԱ-ի ստորաբաժանումների կանոնակարգ՝ արխիվ
Հավելված 42. ՄԿԾ-ի արդյունավետության գնահատումը գործատուների կողմից
Հավելված 43. ՄԿԾ-ի արդյունավետության գնահատումը շրջանավարտների կողմից
Հավելված 44. ԵԳՊԱ-ի մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության կառավարման կենտրոնի տեղեկատվության հավաքագրման ընթացակարգ
Հավելված 45. ԵԳՊԱ ուսանողների զբաղվածության վերաբերյալ հարցման վերլուծություն
Հավելված 46. ԵԳՊԱ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ հարցման վերլուծություն
Հավելված 47. ԵԳՊԱ-ի հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականություն և ընթացակարգ
Հավելված 48.ԵԳՊԱ-ի ուսանողի ձեռնարկ
Հավելված 49. Համակարգչային գրաֆիկա ՄԿԾ-ի նկարագիրը
Հավելված 50. Դիզայն ՄԿԾ-ի նկարագիրը
Հավելված 51 ՄԿԾ-ի ինքնավերլուծություն (Համակարգչային գրաֆիկա բակալավրի և Դիզայն մագիստրոսական կրթական ծրագրերի)
Հավելված 52. Հագուստի մոդելավորում ՄԿԾ-ի նկարագիրը
Հավելված 53. 4 ՄԿԾ-երի համար համեմատական վերլուծություններ
Հավելված 54. ՄԿԾ-երի ՈԱՇ-ի հետ համադրելիության ապահովում և ստուգման ուղենիշներ
Հավելված 55. Դասընթացի նկարագրի ձևաչափ
Հավելված 56. Համակարգչային գրաֆիկա ՄԿԾ-ի դասընթացի նկագրերի օրինակներ (2)
Հավելված 57. Հագուստի մոդելավորում ՄԿԾ-ի դասընթացի նկագրերի օրինակներ (2)
Հավելված 58. Դիզայն ՄԿԾ-ի դասընթացի նկագրերի օրինակներ (2)
Հավելված 59. Ուսանողի գնահատման համակարգ. հայեցակարգային դրույթներ
Հավելված 60. Գնահատման համակարգի հայեցակարգի վերանայման մասին որոշում, ռեկտորատի նիստի արձանագրություն
Հավելված 61. Ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ
Հավելված 62. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց
Հավելված 63. ԵԳՊԱ ուսանողների շարժունության կարգ

Հավելված 64. ՀՀ բուհերում Կրեդիտների փոխանակման և կուտակման եվրոպական համակարգի կիրառման ուղենիշների ուղեցույց
Հավելված 65. ԵԳՊԱ-ում ՄԿԾ-երի մշտադիտարկման, վերանայման և բարելավման ուղղությամբ ՈԱ գործընթացների վերլուծություն
Հավելված 66. Բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ
Հավելված 67. ԵԳՊԱ ընդունելության քննությունների հանձնարարություններ և գնահատման չափանիշեր
Հավելված 68. ԵԳՊԱ-ի մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ
Հավելված 69. Ասպիրանտուրայի ընդունելության ընթացակարգ
Հավելված 70. ԵԳՊԱ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ
Հավելված 71. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կնքված պայմանագրեր
Հավելված 72. Հաստատությունների ցանկը
Հավելված 73. ՀՀ բուհերում հեռացման (ազատման) և վերականգման կարգ
Հավելված 74. ԵԳՊԱ ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման կարգ
Հավելված 75. ԵԳՊԱ ուսանողական խորհրդի կանոնադրություն և միջոցառումների ցանկ
Հավելված 76. Ֆակուլտատիվ դասընթացների մասնակիցների ցանկ
Հավելված 77. Ուսանողների շրջանում կատարված Ֆոկուս խմբերի վերլուծություն
Հավելված 78. Պրակտիկայի կազմակերպությունների ցուցակ
Հավելված 79. Կարիերայի կենտրոնի միջոցառումների ցուցակ
Հավելված 80. Ուսանողի հետ կնքվող պայմանագիր
Հավելված 81. ԵԳՊԱ-ի հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ ամբիոնների (գիտական աստիճաններ և կոչումներ)
Հավելված 82. ԵԳՊԱ ստորաբաժանումների և աշխատատեղերի տարակարգերի մասին կանոնակարգ
Հավելված 83. Դասընթացի արդյունավետության գնահատման հարցաթերթեր
Հավելված 84. Ամբիոնների աշխատակազմի աշխատանքի արդյունավետության գնահատման ամփոփ վերլուծություն և ձևաչափ
Հավելված 85. Դասավանդողների վերապատրաստումների թեմաները
Հավելված 86. Դասախոսական կազմի տարիքային բաշխվածության գրաֆիկ
Հավելված 87. ԵԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճին նպաստող գործընթացների ընթացակարգ
Հավելված 88. Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների
Հավելված 89. ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի ռազմավարությունը և հետազոտության ուղղությունները
Հավելված 90. ԵԳՊԱ հետազոտական կենտրոնի գործառույթները և կառուցվածքը
Հավելված 91. Գեղանկարի, գրաֆիկայի, դիզայնի և կիրառական արվեստի գծով արվեստաբանության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման համար ատենախոսության պատրաստման ուղեցույցի նախագիծ
Հավելված 92. ԵԳՊԱ Հետազոտողի (PhD) նոր պիլոտ ծրագիր
Հավելված 93. ԵԳՊԱ Հետազոտողի (PhD) նոր պիլոտ ծրագրի վերաբերյալ ինքնավերլուծություն
Հավելված 94. Տարեգրքում հրապարակվող հոդվածներին ներկայացվող պահանջներ

Հավելված 95. Տարեգիրք № 1, 2 և 3
Հավելված 96. Հետազոտական միջոցառումներին մասնակցության ցուցակ
Հավելված 97. ԵԳՊԱ-ի 2014-2017 թվականներին հրատարակված գիտական հոդվածների ցանկ
Հավելված 98. 2014-2017 թվականների ընթացքում միջազգային գիտաժողովներին մասնակցած դասախոսների ցուցակ
Հավելված 99. Հագուստի մոդելավորման լաբորատորիայի սարքավորումների ցանկ
Հավելված 100. Կիրառական արվեստի լաբորատորիայի սարքավորումների ցանկ
Հավելված 101. Դիզայնի ամբիոնի մանրակերտի լաբորատորիայի սարքավորումների ցանկ
Հավելված 102.Դիզայնի ամբիոնի համակարգչային լաբորատորիայի սարքավորումների ցանկ
Հավելված 103. Մետաղի արհեստանոցի սարքավորումների ցանկ
Հավելված 104. Համակարգչային նախագծման լաբորատորիայի սարքավորումների ցանկ
Հավելված 105. Գրաֆիկայի լաբորատորիայի սարքավորումների ցանկ
Հավելված 106. Կերպարվեստի ֆակուլտետի համակարգչային լաբորատորիայի սարքավորումների ցանկ
Հավելված 107. Գյումրու մասնաճյուղի լաբորատորիայի սարքավորումների ցանկ
Հավելված 108.Դիլիջանի մասնաճյուղի լաբորատորիայի սարքավորումների ցանկ
Հավելված 109. ԵԳՊԱ փաստաթղթաշրջանառության սխեմա
Հավելված 110. Բուկլետներ
Հավելված 111. Բրոշուրնե
Հավելված 112. Գրքեր
Հավելված 113. ԵԳՊԱ միջազգայնացման ռազմավարություն
Հավելված 114. ԵԳՊԱ-ի և այլ հաստատությունների միջև համագործակցության համաձայնագրերի ցուցակ
Հավելված 115. ՈԱ և ինքնագնահատման բաժնի կանոնակարգ
Հավելված 116. Արտաքին կապերի բաժնի արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր
Հավելված 117. Գնահատման համակարգի արդյունավետության գնահատում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից. գործիք և նկարագիր
Հավելված 118. Գնահատման համակարգի արդյունավետության գնահատում ուսանողների կողմից. գործիք և նկարագիր
Հավելված 119. Դասընթացի արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր
Հավելված 120. Աշխատակիցների կատարողականի գնահատում. գործիք և նկարագիր
Հավելված 121. Ընդունելության գործընթացի արդյունավետության գնահատում 1-ին կուրսեցիների շրջանում. գործիք և նկարագիր
Հավելված 122. Հետազոտության արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր
Հավելված 123. ՄԿԾ-ի գնահատում գործատուի կողմից. գործիք և նկարագիր
Հավելված 124. ՄԿԾ-ի գնահատում շրջանավարտների կողմից. գործիք և նկարագիր
Հավելված 125. Ռեսուրսների և ծառայությունների գնահատում ուսանողների կողմից. գործիք և նկարագիր
Հավելված 126. Ռեսուրսների և ծառայությունների գնահատում դասախոսների կողմից. գործիք և նկարագիր
Հավելված 127. Վարչարարության արդյունավետության գնահատում. գործիք և նկարագիր
Հավելված 128. ԵԳՊԱ-ի վերաբերյալ տեղեկության և դրա տարածման միջոցների արդյունավետության գնահատում դիմորդների շրջանում. գործիք և նկարագիր
Հավելված 129. Օտար լեզվի իմացության վերաբերյալ վարչական, դասավանդող և ուսումնաօժանդակ կազմի շրջանում հարցում. գործիք և նկարագիր

Հավելված 130. ՈԱ կենտրոնը հիմնելու և կանոնակարգը հաստատելու մասին ԵԳՊԱ-ի ռեկտորի հրաման